




Բ Ո Վ Ա Ն Դ Ա Վ Ո Ւ Թ Ի Ի Ն



ն. ՊԵՇԻՎՓԱՇԼԵԱՆ	Գարրիէլ Գարրիէլեան կը պատմէ դերասան Շատուկի մասին
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Մայրուզի
Թ. ՈՐԲԵՐԵԱՆ	Յատիկ
Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	Օրօր Իշխապիմ
ՌՈՒԲԷՆ	Գեալշօ Մանուկ
* * *	Մուշեղ Գալշեան
Կ. ԱՂԱՐԵԿԵԱՆ	Ժամանակակից հերոսի սրտմամբ
Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆ	Հատուած՝ Վ. Պետրոսեանի գեկուցումէն
Ա. ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ	«Մարտիկայ սարի ամպերը»
* * *	Որբացեալ գիրքերուն ողբը...
* * *	«Լճերքոյ»ի մը տառապանքները...
* * *	Միանգամայն եւ վերջին օրերու պատմութիւն
* * *	Գամառօրէն պարզունակ...
* * *	Նախախնամութեան դար...
Ն. ԿԵՄԱՔՍԵԱՆ	Կեղծ արուեստի մասին
* * *	Ժանդարմական վարչութեան գեկուցումը հայերի յեղափոխական շարժումների մասին
Ա. ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ	Տեղեկագրի նոքեր
Շ. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ	«Մայրենի տուն»
Կ. ՇԱՀԻՆԵԱՆ	Զ. Մեյքոնեանի «Բանալիներ»ը
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Հ. Մարտիրոսեանի «Ես ու դու»ը
* * *	Մշակութային լուրեր



Բազմը



ԱՂԱՍԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍԻ

Ռ. ՏԱՐԻ. ԽՈՒՑ ՍՍՊՏՍՐՈՍԻ 1981 ՊԵՐՏԻՐ

Ն. ՊԵՇԻԿՓԱՇԼԵԱՆ

ԳԱՐԻԵԼ ԳԱՐԻԵԼԵԱՆ ԿԸ ՊԱՏՄԵ ԴԵՐԱՍԱՆ ՁԱՏՈՒՆԻ ՄԱՍԻՆ

— Օր մը, դերասան Շատունին նամակ մը քննունեցի: Կը խնդրէր, որ անպատճառ այցելիմ իրեն: Կը խնդրէր նաեւ, որ չուշացնեմ այցելութիւնս: Իր մահէն զանի մը ամիս առաջ էր: Իր գիրը ստացած օրս իսկ, յետ միջօրէին իր քովն էի: Նստած էր անկողնին մէջ: Վիճակն էր ողբալի: Ուրախացաւ տեսնելով զիս: Չորս ամիս կար, որ իր ծանր հիւանդութեան ընթացքին իսկ՝ չէր հրաժարած իր հանրածանօթ ունակութենէն: Կը յիշեմ արեւելեան առածը, որ կ'ըսէ. — «Մինչեւ որ հոգին չելլէ, ունակութիւնը չ'եւրէ»:

Իր վերջին կինը դուրս պիտի ելլէր գործով:

Յաճ ձայնով ինծի ըսաւ.

— Շատ էի ուզում զեզ տեսնել: Դու յարմար ժամանակին եկար: Մի քիչ յետոյ, մենք մենակ ենք մնալու: Քեզ շատ կարեւոր ասելիք ունեմ:

Մարէն-ձորէն սկսանք խօսիլ, սպասելով, որ կինը մեկնի: Ինծի թէյ հրամցնելէ յետոյ, ներողութիւն խնդրելով դուրս ելաւ արկինը:

Այն ժամանակ, Շատունին շտկուեցաւ անկողնին մէջ, նայեցաւ ուղիղ աչքերուս, ու խորհրդաւոր ձայնով մը ըսաւ.

— Գարրիէլ, ես քեզ ճանաչում եմ՝ որպէս մի վերին աստիճանի պատուաւոր մարդ, պատուական բարեկամ եւ մանաւանդ դազանապահ: Շեշտում եմ. դա՛դո՛ւնա՛պահ: Այո՛, որ չեմ սխալում:

ՀԱՅՅԻՔ ԱԳ

9600/89

166-2000

digitised by A.R.A.R.@

Արդէն զղջացած էի դաւուս, որովհետեւ վայրկեանական հասկցայ, որ ոստանի որինք պիտի փչէր:

Գլխով հաստատական նշան ըրի:
Շարունակեց.

— Մի մեծ գաղտնիք պահած ունեմ իմ մէջ: Ո՛չ ոքի չեմ ասել, ո՛չ ոքի: Քե՛զ, միայն թեզ եմ յայտնելու այդ մեծ գաղտնիքը, որ ե՛ւ ազգային է, ե՛ւ միջազգային: Մի չափից զուրս կենսական գաղտնիք, որ կարող է զլինաւոր դեր կատարել բաղձաթիւ ազգերի ու ժողովուրդների ճակատագրի ինդրում: Մի գաղտնիք, որ ո՛չ միայն կարեւոր է ու պատմական արժէք ներկայացնում, այլեւ կատարեալ մի բռնք աղամբ է, որ կարող է պայթիւլ ազապայում եւ մի բո՛ււմ անել ու յեղաշրջել շատ բան: Հայերիս համար դա մի շինարար բո՛ւր ազո՛րք է:

Առարկեցի.

— Միբե՛լի Շատունի, յառաջարանը կարճ կապէ ու անցիր նիւթին ուզ-դակի: Երկար խօսիլը կարող է թեզ յոգնեցնել:

ժխտեց.

— Ո՛չ, ո՛չ. դրա մասին խօսելը՝ ինձ չի յոգնեցնում. ընդհակառակն, ինձ կենդանացնում, աշխուժացնում է. մի խօսքով՝ առողջացնում է ու երիտասարդացնում միանգամայն: Լսի՛ր, Գարբէլ, անցնում եմ նիւթին: Մի բոսս շի՛նի, որ կորցնես ասելիքներդ: Էս գտողները մի զոհար է, աշխարհի ամէնից մեծ զոհար գաղտնիքը:

— Ամբողջովին ականջ կտրած՝ կը լսեմ:

— Մրանից մի քանքովէջ տարի առաջ էր: Մի օր, նստած կարդում էի Անդրէ Եերմենդեի ուսումնասիրութիւնը անասունների թատրոնի մասին, երբ քանքը հնչեց: Գնում, վերցնում եմ հետախօսք, ու ասում.— Արօ՛, աս լո՛ւ...»: Մէկ էլ, խօսողը մաքուր ուռեբէնով ինձ հարց է տալիս.— «Արգ-եօք պատիւր ունե՞մ խօսելու Շատուն՞ու հետ...»: Հաստատեցի ու աւելա-ցրի.— «Իսկ ես որք՞ հետ խօսելու պատիւր ունեմ...»: Եւ ահա թէ ի՛նչ եմ լսում.— «Ես գնեմքալ Պէճոգոր Իվանովն եմ. շատ կը ցանկանայի մեզ հետ բարեկամարար խօսել էս երեկոյ իսկ, եթէ դա կարելի է»: Ասացի, թէ ա-յո՛, ու հարցրի, թէ ո՛ւր կամենում է խօսել ինձ հետ: Ես քանդէ վու նշա-նակեց երեկոյեան ժամը տասին, «Շէ՛հրագատ» կարարէում: Խոստացայ զը-նայ: Մեծապէս շնորհակալ եղաւ զենեքալ Իվանովը: Պատրաստուեցի, ու ե-րեկոյեան ժամը տասից մի բողէ անց՝ ես էնտեղ էի: Տնօրէնին հարցրի՝ դէնեքալ Իվանովը. Ես իսկոյն ինձ առաջնորդեց մի պատուոյ անկիւն, ուր-տեղ բազմել էր մի վեհափառ Ծերունի: Զինուորական բարեւ տուեցի. նա կանչեց ու խոր յարգանքով ինձ ուղղուեց: Ապա, հրամայեց, որ բերն սեւ խաւար ու վառկա: Պալայիքան նստագում էր, իսկ երկսեռ խումբը՝ պա-րում, հագարումի ճարտարութիւններով: Պարողներից մէկը ուղղակի թըռ-չում էր օդում, միւսները իրանց ոտները վերածել էին օրօրոցի: Խումբը մի հսկայ հողմաղաց էր, որ զառնում էր կրամշտութեան հոսանքով:

Մէկ էլ նկատեցի, որ գնեքալը միայն ինձ է գիտում ու ժպտում է Հիացմունքով:

Վերապէս, սասց.

— Դու մեր փնտած Հրեշտակն ես:

Երբ ես հետաքրքրուեցի, Ծերունին արքայական լրջութեամբ ասաց.

— Քի՛լ յետոյ, մեր սիրելի որդի, թե՛լ յետոյ:

Մի պահ լռելուց յետոյ էլ աւելացրեց.

— Մինչդեռ շատեր մի կաթիլ ազնուական արիւն չունենալով՝ իբանց

երակներում, լրբորէն յայտարարում են, թէ ազնուական են, դու, մեր որդի, թո իսկական ազնուական ծագումը ծածկում ես խոնարհարար օրինակելի: Մեր գերագոյն պետը՝ վերին աստիճանի գնահատելով թո Համեատութիւնը եւ Հաստարժութիւնը Հանդէպ Թոմանոֆեան օգոստոսիա գերդաստանին, ինչպէս նաեւ թո այլ արժանիքները եւ շնորհները, թեզ Հրաւիրում է իրա մօտ, մասնաւոր ու խիստ կարեւոր մի տեսակցութեան Համար, որ կարող է տեսել մի քանի ամիս:

Ապա, գեներալ Իվանովը վերջրեց ժողովայնով լիքը բաժակը, կանգնեց ոտքի Հանդիսաւոր կերպով:

Ես էլ նոյնը արեցի:

Պահը ցնցող էր, երբեք չեմ մոռանալ:

Շէհէրազամում բարբ կանգնեցին:

Պարը դադարեց, պայտալիքան դադարեց:

Մի խորին ու խօսուն լուսթիւն էր արբում:

Գեներալը մի քիչ մօտեցաւ ինձ ու ցած ձայնով ասաց.

— Կենացը մեր գերագոյն պետի:

Ես էլ կրկնեցի, բայց բարձրաձայն կրկնեցի.

— Կենացը մեր գերագոյն պետի:

Սրտնը դուսաց.— Հուսո՞ւմ...

Գեներալը իր բաժակը դատարկեց մինչեւ յատակը:

Ես էլ նոյնը արեցի: Բոլորն էլ մեզ պէս արեցին:

Ու պայտալիքան Հնչեցրեց ուսական կայսերական քայլերգը:

Պահը զգայունացնեց էր:

Գեներալը նստելուց յետոյ, բոլորս էլ նստեցինք:

Գեներալ Իվանովի ձայնը դողում էր յուզմունքից, երբ ինձ ասաց.

— «Համբերել, յուսալ, յարատեւել»: Ես էլ մեր նշանաբանը: Այս երեք բառերի մէջ է խոսացած մեր գործի ֆիլիզոֆիան: «Համբերել, յուսալ, յարատեւել»: Սա է առաջմ ե՛ւ մեր զէնը, ե՛ւ մեր զրահը, ե՛ւ մեր գինուորական իմաստութիւնը:

Մի հուզերուխ եռանդով, մի կրօնական ջերմեանդութեամբ, ազօթքի պէս ես էլ կրկնեցի.

— «Համբերել, յուսալ, յարատեւել»:

Վերջապէս, գեներալը առաջարկեց.

— Մեր գերագոյն պետը, որի ո՛վ լինելը պիտի Հասկանաւ, երբ ժամակը գայ, ու պիտի բախտաւորուես նրա տեսութեամբ, ուզում է թել չեա երկար տեսակցել, տեսակցել մտերմօրէն: Իր փափաքը բաժանում է սպայակոյտը: Մեր գերագոյն պետի կողմից եմ գալիս, թեզ Հրաւիրելու պատ, որ տարագիր ապարանք լինելով՝ դանոււմ է օտար Հողի վրայ, Իսպանիայում: Հիմի մեզանում մի սքանչելի գարուն է: Կը զնանք. մի քանի ամսով կը մնաս մեզ մօտ, ու կ'անցկացնես մի Հրաշալի, մի պատմական արձակուրդ: Սակայն, սիրելի, ունենք մի խիստ պայման. ո՛չ ոքի չպէտք է սասել, թէ ո՛ր ես գնում, որի՞ մօտ ես գնում: Ես ես, գեներալ Յէրոզը Իվանով, հրգւում եմ Աստուծո՞մով ու մեր գերագոյն պետով, որ ո՛չ մի անսպասելութիւն չկայ թո ճանապարհորդութեան մէջ. ընդհակառակն, ապահովուած կը լինի թո կատարել Հանգիստը եւ թո արդար Հանոյթը: Պիտի ուղեւորուենք միասին, Իսպանո-Սուրբա կառքով: Սոստան՞ում ես: Իս ճանապարհորդութիւնը վերջանալու է թեզ Համար մի մեծ փառքով: Ես վստահ եմ, թա՛յ վստահ:

Ձմռաննամ ասել, որ գնե՛րալ իմանովը իրա հայրական ու համակրան գգացմունքներէ պատճառով էր, որ ինձ հետ խօսում էր եզակի:

Որոտացայ ճանապարհորդել: Երեք օր յետոյ, առաւօտ կանուխ, պիտի սկսէր մեր ուղեւորութիւնը: Ես շտապ՝ իմ դործերը կարգի դրեցի: Ստիպուեցի բացառաբար մի սուտ խօսել հանդուցեալ կնոջ, թէ՛ զործով իսպանիս եմ գնում: Աստուած թող ների ինձ՝ այդ մէկ սուտի համար:

Որոշեալ օրը, որոշեալ ժամը մի բողբոջ անց, որոշեալ վայրում էի: Գնե՛րալի հետ մտանք կառքը: Վարիչը վարժ էր ու ոռն:

Երբ հասանք Պարչիւննա, երբ քաղաքից մի եօթնասուն կիլոմետր հեռացանք, կառքը կանգնեց, գնե՛րալի մի բառի վրայ: Նա ինձ դառնալով ասաց.

— Միքելի որդի, հիմի քեզ մի բան եմ ասելու, եւ մի բան եմ անել տալու վարիչին: Նախ ասեմ, որ մեր գերագոյն պետը տղամարդ չի, այլ՝ մի օրիորդ, մի աղատուհի: Երկրորդն էն է, որ մեր գերագոյն պետ ուզատուհու հրամանով՝ մեր վարիչը փակելու է քո աչքերը սեւ լաթով: Թէ՛ եւ ընդ՝ վրդեցուցիչ լինի քեզ համար, որդի, բայց աղատուհի մեր պետին հնազանդուել՝ մեր բոլորի աւագ պարտականութիւնն է:

Իսկոյն աղաղակեցի.

— Հրամայում եմ վարիչին՝ չուսով գործազրէլ մեր գերագոյն պետ՝ ազնուազարմ օրիորդի իմաստուն հրամանը:

Գնե՛րալը մեծապէս գոհ՝ ասաց.

— Հազար ապրես, որդի:

Երբ կառքը սկսեց յառաջանալ, գնե՛րալը խօսեց.

— Քեզ մի քանի տեղեկութիւններ ունեմ տալու: Աղատուհի օրիորդը, որի ո՛վ լինելը կը հասկանաս մի քանի օրից, երեսուն տարեկան է ու մուրի: Մի անգիրա գեղեցիկուհի: Նրա ամբողջ ծախսը իր վրայ է վերցրած մի ամերիկացի ծերունի միլիտատէր՝ Մայքըլ Մաքէնդի: Առայժմ էսքան: Գաղանկաց գրքի միւս էջերը կը բացուեն քո առաջ հետզհետէ: Այո՛, հեւ տըզհետէ, երբ դու կը լինես արժանի: Ես վստահ եմ, քաջ վստահ: Իջարան: Մի քանի ժամ նամբորդելուց յետոյ, կառքը կանգնեց: Գնե՛րալը իրա ձեռքով վերցրեց սեւ թաշկինակը իմ աչքերի վրայից: Հրաշք: Ես գտնուում էի մի սուկեզօծ գարբասի առաջ, որից դէնը դրախտն էր սկսում: Կառքը մտաւ սուկեզօծից: Ես գտնուում էի Մուհամմէտի խոտոսացած մեքենայում:

Էդ պարտէզում ինչ ասեա չկար. — գեղարուեստական ճանապարհներ, արձաններ, հրապարակներ, կամարներ, կաճաններ, բլուրներ, անտառներ, գետեր, կամուրջներ, լճեր, կղզիներ, անդունդներ, քարանձաւներ, փայտաղէներ, հովիտներ, ԲՏՈՂԿԵՐ, աշտարակներ, օթեակներ, բերկոյաններ, բուրգեր: Ընալիսարհիկ ձուկեր ու թռչուններ: Մի բարձունքից մի բլուր անկաթ կամուրջներ, որոնք ածուներ էին հազարամի ծաղիկների ու տերեւների, որոնցից կախուել էին ծաղկանոխ ճիւղեր լճերի, գետերի ու վիհերի վրայ: Ջրվէժներից վեր էին վազել բազդներ, եւ այդ բոլորի վրայ լոյսը, լոյսը ծիրանի, լոյսը ոսկի:

Մեր կառքը կանգնեց կենարոնական պայտի առաջ, ու մի ստանեալ պահանքը յարգանքով լրջապատեցին մեզ, վերցրին մեր իրերը:

Մտանք ներս սպարանքից, որ ստեղծուած էր արապիւս ու ուստիկան սճերի խառն ամուսնութիւնով, ինչպէս եւ մադիլմ ոճի կնքահայրութեամբ: Էդ պայտար՝ մի նոր հազարամէկ գիշերների նիւթականացած հեքիաթ էր:

Մեզ վերապահուած էր շքեղ ընդունելութիւն, շքեղ ճաշեր, շքեղ նընջաւանակ, ամենայն ինչ շքեղ, արքայական:

Մանթոթուրիւն միւս գեներալներէ հետ: Ի մէջ այլոց, ես ծանօթացայ գեներալներ Ալեքսանդր Շէյթանֆի, Ալեքսի ձինսկու, Ադամ Խարխամոֆի, Լեւ Թաթարեւի, Նիքոլա Թաւշանովիչի եւ Շիրոշկա Չուպայէֆի հետ: Բոլորն էլ մի-մի ձինսսպիտակ ձմեռ, մի-մի կաղանդ Պոպա, մի-մի օֆերէթսոյին խամանիկ, ծերութիւնից փոքրացած, խեղճացած, կորացած, մանկացած, ինչպէս ինքս եմ հիմի, ասիսո՛ս...

Երբ կանգնում էի էդ ձիւնակոյտ, ձմեռնակոյտ, ծերակոյտի մէջ, ես նման էի մի գարնան գերանի, որի վրայ կանաչ կայ, կանչ կայ, կեանք կայ, որի վրայ ծիծաղ ու ծաղիկ կայ:

Էդ գեներալները, բացի Ֆէոդոր Իվանովից, որպէս զինուորական, բրանց պահել էլ չէին իմանում: Չինուորականը պիտի խօսի համարձակ, հըրամայական: Չինուորականը պիտի խօսի միայն ու միայն ճշմարտութիւնը: Նա որեւէ պատճառով չպէտք է ծօր իրա զլուխը: Նա պէտք է լինի միշտ նման ասպետի: Նա պիտի երեւակայի, որ միշտ միւս վրայ է: Ես իմ զինուորական կրթութեանը միացրել եմ բեմական արուեստը. ուշադրութիւն չեմ ասում գերասանութիւնը. դա վտարան է. բեմական արուեստը, որի շնորհիւ մեծ ասպարէզի մարդը սովորում է շարժուել, կանգնել, խօսել ու լռել անգամ:

Նոյն օրը, պալատական գերձակասեալ իմ շափերը վերցրից, մի զինուորական համազգեստի համար:

Ես հանգստացայ, լոպցայ, շրջէցի պարտիզում, շրջապատուած լինելով մի հրէշտակախմբի նման հուրիների հետ:

Երբորդ օրը իմ համազգեստը պատրաստ էր: Մի «չեղաչուք» զնդապետական տարազ, ձեր բառով: Իսկապէս չեղաչուք. կարելի է եւ տանը՝ ոսկեփայլ: Իմ վրայ շատ լաւ ստացի: Հայելու մէջ նայելիս՝ ես իմ հիացմունքը զսպել չէի կարողանում: Անդադար նայում էի հայելուն եւ ինքս ինձ վրայ սիրահարում, որպէս Նարսիս:

Պալատի ընդհանուր պետ գեներալ Ֆէոդոր Իվանովը ինձ ասաց, թէ նոյն օրը, ժամը տասներմէկին, ազատուէի օրերդը, այսինքն՝ գերազոյն պետը, ինձ պիտի ընդունի: Եւ զահարանում:

Ես պատրաստ էի, իմ զինուորական չեղաչուքով, սուրով ու մոյկերով:

Միբոս տրոփում էր:

Ժամը տասներմէկը մի րոպէ անց, ես առաջնորդուեցի գահարան:

Դա մի քառանկիւն դահլիճ էր: Գետինը հայելի, առաստաղները կտմարակապ ու զմբէթաւոր հայելի, պատերը զոյնզոյն ու պատկերազարդ ուպակի, որոնց վրայ վառ զոյներով պատկերացուել էին դրաւագներ Մեծն Պետրոսի, Իվան Ահեղի, Կատարինէ Թագուհու եւ Նիքոլա Բ. ցարի կեանքից: Ամէն կողմ կարասիներ բիւրեղից, սաթից, ստտափից, աղամանդով ու մարգարտով լի:

Խորը դահն էր, շատ խորը, արեւնափառ լոյսերի մէջ: Գահի Թագաւորական Թաղարի մէջ, կար մի վանձ վարդ: Մի գերազանց գեղեցկուհի, որ երկու անգամ էր Թագուհի: Առաջին՝ իրա գերազոյն գեղեցկութիւնով, երկրորդ՝ իրա զահակալութեամբ:

Մտակցայ եւ նրա առաջ կանգնելով բարեւեցի՝ որպէս զինուորական:

Նրա աչքերի մէջ կար գարմանք ու զմայլանք:

Երկուտա էլ նայում էինք միմեանց աչք աչքի:

Նա նետաճարում էր:

Ես էլ էի նետահարում :
 Նա նետահարում էր :
 Ես էլ էի նետահարում :
 Նա լաղթական էր ու պարտուած :
 Ես էլ էի յաղթական ու պարտուած :
 Նա այնքան էր տարուած ինձանով, որ իր ձեռքի հովհարը ընկաւ :
 Ես վերցրի անմիջապէս : Զարմացայ հովհարի ծանրութեան համար :
 Նա լիքն էր գունազեղ գոհարներով : Մի հարստութիւն էր էդ հովհարը :
 Մատուցի իրան : Ապա, յետ-յետ գնալով՝ կրկին արձանացայ զինուորական
 րարեւով :
 Եւ այսպէս, մի տարբեր-քան բոլի, որպէս կենդանի արձան, կանգնել
 էր եւ ոպասում իր խօսքին, իր հրամանին :
 Վերջապէս, նա իրա կիթառի ձայնով սասց .
 — Ես'ա, շտա գոհ եմ ձեզանից : Ուրախ եմ, որ եկաք : Տայ Տէրբ, որ
 բախտաւոր լինենք : Խնդրեմ, զադարեցէք քարեւ սալուց :
 Ես հանգիստ արի :
 Նա շարունակեց խօսել :
 — Զեզ պիտի աւեմ, թէ ո՛վ եմ ես : Ես Նորին Վեհափառութիւն Նի-
 քոյա Բ - ցարի զուտորն եմ : Զեր առաջ գանուողն է իշխանուհի Անասթաս-
 զիան . . .
 Այս ուր լսեցի՝ ցնցուեցի . նետուեցի առաջ, համբուրեցի նրա սակի փէ-
 շերը, եւ շիարողանալով զսպիլ ինքս ինձ, ասում էի .
 — Ո՛վ հրաջ, Անասթապիա իշխանուհին, իշխանուհի Անասթասզիան . . .
 էլի զինուորական բարեւ .
 Նա ինձ ասաց .
 — Էս մայրկեանից՝ ձեզ կարգում եմ զենեբալ :
 Ես իմ բարեւի մէջ, մի անգամ էլ բարեւեցի :
 Նա նշան արեց, որ հանգիստ մնամ :
 Իջաւ գահից, որի վերնամասում կար մի կարկառուն սակի արծիւ, ո-
 րի աչքերը գոհարներ էին :
 Եկաւ իմ մօտը, մտաւ իմ թեւը եւ ասաց .
 — Գնանք :
 Ու մի կողմնակի մոպայիք դռնից դուրս գալով՝ մտանք մի ուրիշ դահ-
 լիճ, որ ողորուած էր իրական ու արուեստական վարդերով : Դա մի գիւլիս-
 տան էր, որի մէջ հազարան վարդն էր Անասթասզիան :
 Նոյն օրը, մեծ կերութում, երգ, նուառ, պալաւայիքա, պար, միջիւե
 ուշ գիշեր : Կէս գիշերից քիչ անց, Անասթասզիան ինձ քաշեց իր սակի ննջա-
 սենեակը :
 Նա խօսեց բաց սրտով, իրա ցանկութիւնն էր ինձանից սիրուել եւ ին-
 ձանից ունենալ մի գաւակ, որ պիտի լինէր Ռոմանոֆների հարստութեան
 ժառանգորդը : Անասթասզիայի ցանկութիւնը հնազանդութեամբ ու հեշտու-
 թիւնով կատարեցի ի հարկէ :
 Այնուհետեւ, Անասթասզիան ուրախութիւնից խոյտում էր, հրճում .
 հրճում, ճառագում էր, կանգնած տեղումը պարում էր :
 Ամէն օր տան էր ու կար հանդէս : Ամէն օր իմ կուրծքը խճողում էր
 պատուանշաններով :
 Կարժէ խօսել մի քիչ Անասթասզիայի մասին :
 Նա այնպիսի մի հրաշագործ գեղեցկուհի էր, որ եթէ մի մեծազ ղերպ-

չի նրան, կը դառնայ թոկի: Իսկ թոկին էլ կը դառնայ լոյս: Մարգրիտը նը-
րա մարմնին գիպչելով՝ կը դառնայ առաօտեան աստղ: Նոյն հրաշքը կա-
րելի է ասել հողաբուսաների համար: Մի հասարակ շալիսը նրան քսուելին՝
վերածուած է ընկալի ու ատյասի: Էլ կարող ես երեւակայել, թէ նրան դիպ-
չող սղամարդը որքան ջազանուծ է ու ջահէլանուծ:

Անասթաղիան այնպիսի մի գեղեցիկուհի էր, որի մօտ եթէ շարէին աշ-
խարհի ամենազիզանի կանանց նկարները, հանճարեղ նկարչիներ կողմից
ստեղծուած, ո՛չ ոք չէր նայի էդ հրաշալիքներէ վրայ: ամէն մի մարդ կը
նայէր Անասթաղիային, կը նայէր հիացմունքով, ու կը գինովնար, կը գրծ-
ւէր նրանով: Ես մի մեծ գեղարուեստասէր լինելով, տառւած եմ այս ճշմար-
տութիւնը: Կ'ստեմ նաեւ, որ աշխարհի ամենաթանգ գունարները եթէ մի տեղ
հաւաքուած լինէին ու Անասթաղիան էլ էնտեղ լինէր, ո՛չ ոք, համարեա՛ր ոչ
ոք, նոյնիսկ ամենուկեմ մարդը, մինչեւ անգամ Շայլոքը չէր նայի գունար-
ներէ կոյտերի վրայ, այլ կը նայէր Անասթաղիայի աչքերին:

Անասթաղիայից վեր՝ մի երկնային Տիէկին կայ. դա Մաղոննան է: Նա
լինի իմ պաշտպանը եւ պաշտպանը Անասթաղիայի եւ մեր որդու:

Խաչակնքում եմ:

Չմտածամ ասել, որ սրիկայ սինեման շատ սրբազոյժութիւններ է ա-
րած. բայց նրա արած ամենատարբարագոյժութիւնը Անասթաղիայի վրայ
չինուած Փիլմն է: Էդ Փիլմը ակիբրից մինչեւ վերջը մի խայտառակութիւն
է: Լիբր ստաֆօսութիւն եւ ուրիշ ոչինչ:

Շարունակեմ:

Անասթաղիան մի այնպիսի՛ եռանդուն, մի կեանքոտ կին դարձաւ, որ
զարմացրեց պաշտասկաններին:

Իսկ պաշտասկանուհիները ինձ յաճախ ասում էին.

— Ձեր ժամանումից տաջ, Անասթաղիա Իշխանուհին մի նկար էր
միայն. ձեր ներկայութիւնով շնչաւորուեց: Անասթաղիան մի արձան էր, որ
ձեզ դիպչելով շարժուեց: Իշխանուհին մի կուռք էր, որ կեանք ատա՛ ձեզով:

Իսկ Անասթաղիան մի անգամ ինձ հարցրեց.

— Շատունի, դու երկրայի՞ն ես, թէ երկնային... .

Ես էլ պատասխանեցի.

— Ո՛չ մէկը, ոչ էլ միւսը: Ես դժոխքից եմ:

Եւ նա ասաց.

— Հիմի հասկանում եմ, թէ ինչո՞ւ հողիս վախենում է քեզանից: Թէ՛
ստակում է, թէ՛ սիրում:

Մի օր էլ նա ինձ ասաց.

— Ամենասիրելի, դու հա՞յ ես, թէ կոզաք... .

Ես բողոքեցի.

— Ի հարկէ հայ եմ:

— Բայց ես Փրանսիական սինեմայի պարբերականներում կարդացել
եմ, որ դու յայտարարել ես քանիցս, թէ կովկասցի ես, կոզաք ես... .

— Դա գիտուածաւոր թիւրիմացութիւն է, թշնամական թիւրիմացու-
թիւն: Ես մարմնով հայ եմ եւ հողով՝ ուրա:

— Այդ այդպէս լինելը ինձ շատ է հաճելի:

Ի հարկէ, Անասթաղիային այդպէս պէտք էր ասել: Ես հողով, մարմ-
նով ու իմ նկարագրի ճակատարաց ճշմարտախօսութեամբ միշտ էլ եղել եմ
հայ: Թէն. ո՛չ մի օր, ո՛չ մի մարդու չեմ յայտնել իմ ազնուականութիւնը,
չեմ պարծենցել նրանով: Նո՛ւ, օրինակ, քեզ հետ այնքան մօտիկ բարեկամ

եմ եղել, ասա՛, մի օր տակ՛ էմ մի այսպիսի խօսք։— Եթէ՛ Հայերէ մէջ կայ իսկական ազնուական՛ էն էլ ե՛ս եմ, ե՛ս։ Անցնենք։ Ձե՛մ տակ էլ խօսքը ու պիտի շասեմ։ Անցնենք։

Մի ուրիշ անգամ էլ Անասթագիան ինձ հարցրեց.
— Դու ծագումով հայ լինելով՝ քրիստոնեակ՛ս ես...

Պատասխանեցի.

— Ի՞նչ ես ասում, իմ սիրելի. Հայերը եղել են առաջին քրիստոնեակները, երեք դար առաջ, Քրիստոսի ծննդից։ Եթէ՛ Հայերը առաջին քրիստոնեակներն են, ես էլ առաջնակարգ մի քրիստոնեակ եմ։ Ես սատանաներն անդամ քրիստոնեակ եմ արել։ Իմ կեանքում չի եղել մի օր, որ ես չզնամ Լիւզնիցի։

Նա առարկեց.

— Այսքան օր է հետեղ ես, ու չտեսայ զո տաճար դնայր։
— Բայց չէ՞ որ ես Աստուածածօր փոխանորդի մօտ եմ միշտ...

Անասթագիան ժպտաց։

Մի ուրիշ օր էլ հարցրեց.

— Մերձե՛մ ես ինձ զո ամբողջ հոգւում։

— Անասթագիա, ես կեանքումս ո՛չ մի կնոջ չեմ տակ։— «Մերում եմ քեզ...»։ Բացի բեմի վրայ ու սինեմայում։ Բայց հիմի, իմ հոգում յորդում է էս խօսքը քե՛զ համար ու ես աղաղակում եմ.— Մերում եմ քեզ...

— Դու երբեմն սուտ խօսում ես։

Պատասխանեցի.

— Ամէն բան սուտ է. իմ քեզ սիրելը ճշմարիտ է։

Էլի ժպտաց։

Մի օր էլ մտածեցի ու ինքս ինձ ասացի.

— Շատունի, քանի որ Անասթագիան ամբողջ սուտ ազգէ մէջ ոչ մէկին չէ հաւանել ու քե՛զ է ընտրել, ուրեմն դու պարտաւոր ես ցոյց տալ զո բոլոր տաղանդները եւ շնորհները, որպէսզի նա տեսնի, թէ ինչքան լուսադոյն ընտրութիւն է արել։ Նա մինչեւ հիմա տեսաւ միայն զո տղամարդու տաղանդը։ Նա պէտք է ճանաչի զո մէջ գտնուող արտիստը, ե՛ւ դերասանը, ե՛ւ պարողը։ Նաեւ քաջը։

Մի երեկոյ, պայտի բեմում ստրբուեց պարային Հանդէս։ Պայայտիքայի ընկերակցութիւնով՝ առևակտն երկտեռ խմբապարերից յետոյ, ՂԼԻՖԷՂԿԱ հաղուած, մէջքումս դաշոյն ու զօտի, ես ներկայացրի եօթը մենուպար։ Պարեցի ե՛ւ սուբոյժ, ե՛ւ դաշոյնով, ե՛ւ դրօշով, ե՛ւ ջահով, ե՛ւ ձիով, ե՛ւ ձիու նման մի ջահել աղջկեով, ե՛ւ արծիւով։ Պարեցի ե՛ւ սեղանի վրայ, ե՛ւ երկնայն վրայ, ե՛ւ օդի մէջ, ե՛ւ լարի վրայ։

Ովացիաներ, ովանաններ Ծափահարութիւնների։

Անասթագիան բեմ բարձրացաւ ու ինձ համբուրեց, հասարակութեան առաջ։

Պայտականների ընդհանրապէս ու Իշխանուհու մասնաւորապէս՝ փափաքներին ընդ առաջ դնալով՝ ձեռնարկեցի բեմադրել Շէյքսպիրի «Օթէլլօ»-ն։ Մօտակայ քաղաքներից դտանք դերասաններ ու դերասանուհիներ, ինչպէս նաեւ սիրողներ ու սիրողուհիներ։

Կանոնաւորապէս եւ կատաղօրէն փորձում էինք։ Ուշիղ մի ամիս փորձ, Համարեա՛ ամէն օր։

Աշխարհումս առաջին անգամն էր, որ բեմադրում էր մի Թատերախաղ բազմաթիւ լեզուներով միանգամայն։ Դա պէտք է արձանագրուի միջազգային Թատրոնի պատմութեան գրքում։

Ծա, ի հարկէ, խաղում էի Օթէլլոն, ի հարկէ հայերէն:
 Մարուշկա Տիմիթրովնան խաղում էր Տէգանձոնան՝ ուսերէն:
 Ռամունջօ էլէվէրին խաղում էր Քասիոն՝ պասկերէն:
 Ամալիա Յաթիման խաղում էր էմիլիան՝ փորթուկայերէն:
 Իպրահիմ իպն Մուհամմէտ խաղում էր Պրասպանձիոն՝ արաբերէն:
 Ծիուզէբբէ Կովոնին խաղում էր Տոփը՝ իտալերէն:
 Ժողէ Կարսիտ Վարկուսը խաղում էր Ռոտրիկոն՝ իտալաներէն:

Իսկ լեզուազէտ դերասան Անթոնիօ Տոմէնկօ Լարքան խաղում էր Ես-
 կօ: Նա երկրորդ արարում, իր դերը կատարեց հին յունարէն, երրորդ ար-
 արում՝ Փրանսերէն, չորրորդ արարում՝ գերմաներէն, հինգերորդ արար-
 ում էլ՝ անգլերէն: Նա իր վերջին խօսքը ասաց լատիներէն:

Ռւբեմն, ուղիղ տասներկու լեզուով խաղացուեց մի ներկայացում: Այդ
 բոլոր լեզուներէ վրայ իշխում էր հայերէնը, որպէս աստուածային բարբառ
 լուսէ: Դա փառք էր: Մա էլ ասեմ, որ ես իմ դերը թէև խաղում էի հայե-
 յերէն, բայց զանազանութիւններ էի արել: Առաջին արարը ես խաղացի գը-
 րաբար, երկրորդ արարը՝ արեւմտահայերէն, երրորդ արարը՝ արեւելահա-
 յերէն, չորրորդ արարը՝ գոկերէն, իսկ հինգերորդ արարը՝ թաթարերէն:
 Օթէլլոյի վերջին արարին շատ է սաղում թաթարերէնը: Դա փորձով գիտեմ,
 երբ այդ դերը խաղացի Սմրզանտ, Ալփ-Մահմուտ Ղուլի Խանի պալատում:
 Օթէլլոյի վերջին արարը՝ ոչ մի լեզուով չի կարելի էնքան լաւ տպաւորել,
 որքան թաթարերէնով: Ինչ լաւ կարելի է գոռալ էջ լեզուով— օճէզտէժու-
 նա, ավրատ, մէնտիլի վէ՛ր...»

Ռւբեմն, եթէ իմ խօսած լեզուներն էլ հաշուենք՝ կը լինի ուղիղ տաս-
 նըվեց լեզու, մի ներկայացման համար:

Սա բացի աննախընթաց լինելուց, մի մեծ ձեռնարկութիւն էր ան-
 կրկնելի:

Զմտանամ ասել, որ մեք յուշարարն էր իտալանոցի յոյսնի պրօֆ.
 Միկէլ Սանտրա Խուան Իւիքան, որ կարդում, գրում ու խօսում է ուղիղ
 քսանօթը մեռեալ լեզու եւ երեսուն էլ կենդանի լեզու: Նրա պատկառելի
 պաշտի մի մտքի է մեռած լեզուներէ, իսկ կենդանի լեզուներէ էլ մի ծար-
 րէն գաղտմիք:

Ներկայացումը կայացաւ պալատի պարտիզում, բացօթեայ հսկայա-
 կան ամֆիթատրոնում: Հեռուոր քաղաքներից ժող քանրհնդ հազար ըն-
 աիր թատերասերներ էին եկել: Իսպանական բոլոր մեծ թէրթերը մի-մի
 թղթակից, ի հարկէ թատրոնազէտ, էին ուղարկել: Ամէն մի արարից յետոյ,
 իմ կեանքը վտանգուած էր: Ինձ խեղդում էին գրկելով ու համբուրելով եւ
 իմ կրիմը խոնգարելով: Բազմաթիւ կոյսեր ու կտնայք էդ օրը զգտուեցին,
 հասնելով իրանց մտքազին: Անասթագիան էլ սաստիկ խանդում էր: Մի ու-
 ըրիչ վտանգ, ինձ ողորդում էին ծանրահոտ ծաղիկներով: Էլ չեմ խօսում ծա-
 փերի մասին. ծափահարութիւնը մի անվերջ Նիակարա էր, որ հոսում էր:
 Նիակարան փոխադրուել էր Ամերիկայից Եւրոպա:

Ներկայացումից յետոյ, քաններկու հազար մարդու ձեռք եմ տուել,
 որ սեղմեն: Քսաներկու հազար անգամ ստորագրել եմ յայտագրների վրայ:
 Քսաներկու հազար հոգու մի-մի խօսք եմ ասել, միշտ տարբեր, միշտ մը-
 տածուած, միշտ նոր խօսք: Քսաներկու հազար անգամ ժպտացել եմ: Առա-
 ւատ էր արդէն, երբ հիացող հանդիսականների պոչը բուարարուած էր: Ա-
 պա, ոկտուեց նուէրների արարողութիւնը, որ տեւեց երկու ժամ: Ինձ ընծա-
 յեցին մի տղնուական ձի, մի Իսպանո-Սուիզա կառք, երեք միլիան բէզէթա,

մի ոսկի ժամացոյց, մի ոսկի ծխատուփ, մի թանկագին մատանի: Նաև մի ոսկեպատակ, որի եզերքները զարդարուած էին գինեանշանով, գրօջակով, սուրբով, քնարով ու սրինգով, բոլորն էլ ոսկի: Էդ սրինգը փշում էի, փշում ու նուազում: Կէսօրին՝ թատերախմբին արքայածաշ: Ուղեբձներ, ճառեր, կենացներ:

Ամբողջ իսպանական թերթերը ուղիղ մի ամէս գրեցին էդ թատերնահան յաղթանակի մասին:

Գինեքալ Ֆրանքոյից յատուկ շնորհաւորական հեռագիր ասացայ. նա ինչպէս էր ինձանից, որ Մատրիչում էլ ներկայացնեմ «Օթէլլօն», իր հոփանաւորութեան ներքոյ: Ես շատ յոգնել էի, հասկանալի պատճառներով, ու ցաւ ի սիրտ մերժեցի, մի շատ քաղաքավարի հեռագրով:

Ներկայացման յաջորդ դիշերը, տեսայ, որ Անտոնիան մի անգամ էլ գփուկ էր իմ վրայ: Նա ինձ ասում էր.

— Իմ Օթէլլօ, իմ քաղ, խեղդիք ինձ, համբուրելով խեղդիք... Գոռա՛ իմ վրայ, յարձակուիք ու գրկի՛ր եւ խեղդի՛ր, խեղդի՛ր...

Եթէ չեմ սխալում, մի երեք օր յետոյ, կազմակերպուեց մի պալատական օրհարութիւն, որին մասնակցում էին համարեա՛ր բոլոր գեներալները, իրանց գաւակներով: Ես էլ, ի հարկէ: Դա մի շքախումբ էր: Բոլորս ձիաների վրայ: Մեր մէջ էր Անտոնիան, որպէս ձիաւոր ամազոն. ես էլ նրա մօտը: Մեր շուրջը թիկնապահներ: Առջեւից պնում էին նուագողները իրանց հղիւրներով: Ու որսական շների անվերջ խումբը, որ վազվզում էր աշխուժացած:

Մտանք Անտոնիան թէրէզինա անտառին մէջ ու խորասուզուեցինք:

Ես ինձ ասում էի.

— Շատունի, քեզ մատաղ, մի անգամ էլ ցոյց տուր քո շնորհը:

Մէկ էլ նկատում եմ երկու վարազ, գլուխ դէպի ու քով քովի: Նըբանք սիրարանութիւն էին անում: Էդ խեղճ գազանները լղլտէին, որ սիրարանելու Անտոնիան ի՛մն է միայն, Ուղղեցի իմ հրացանը, նշան արեցի ու դնդակը արձակուեց: Դիպա՛ւ: Երկուսն էլ ընկան, մին միւսի վրայ: Գնդակը անցաւ մի վարազի գլուխից ու մտաւ միւսի գլուխը:

Ընդհանուր հրացմունք:

Ապա, մի ղնդակով եօթը արծիւ վար բերեցի:

Մագիահարութիւն եւ շլացում:

Տակաւին օրացի ուղիղ քսանըչորս երէ:

Բոլորը աղաղակում էին.

— Պաւօ՛, աի՛ս, աի՛ս...

Ես ասպետութիւն ասացի.

— Մնացեալ կենդանիները մեղք են: Թո՛ղ ապրեն: Բաշխում եմ նըբանց կենքը...

Անտոնիան ինձ ասաց.

— Դու գերբնական արարած ես: Ե՛ւ անողորմ ես, ե՛ւ դժբասիրտ...

Ես էլ պատասխանեցի.

— Քեզ համար միայն, Սիրտ եմ, սիրով լիքը, սիրով յարգող...

Ժպտաց:

Ինը շաբաթ մնացի պալատում: Անտոնիան ինձ կպուռել, կպպուռել, փարեւ ու փակչել էր ցերեկ ու դիշեր: Օրուայ մէջ, շրջում էինք պալատական պարտիզում: Մեր պտոյաների ժամանակ, պատմում էի ղէպքեր իմ կեննքից, նաեւ արեւելեան զորոյցներ: Նա սովածի նման կլտանում էր իմ պատմութիւններով եւ միշտ նորերը խնդրում էր:

Պայտատական պարտիզում եւ Հատատեցի, որ անստունների մէջ էլ գոյութիւն ունի թատրոնը: Անորէ Ծերմեղեւը իրաւունք ունի իրա ուսումնասիրութիւններով, երբ նկարագրում էր բազմաթիւ կենդանիների սարքած ներկայացումները: Եւ եթէ նա լինէր նոյն պարտիզում՝ կարող էր հանդիպել բազմաթիւ նորութիւնների: Եւ տեսայ գերասան կապիկներ՝ բամբուլիւս խողալիս: Երգիչ թռչունների օվնիքները: Սոխակների օփերան: Կազաների պալէն: Եւ տեսայ աւանակների ողբերգութիւնը եւ լսեցի գորտերի համերգը: Եւ ամէն մի հանդէսի ժամանակ, միւս կենդանիները լինում էին հանդիսատես: Անստունների մշակոյթը շատ յառաջացել էր, եւ նրանց արւեստը շատ նման էր մեր օրերի ապսթրէ արուեստի արտայայտութիւններին: Եւ տեսայ էջերի ու կապիկների նկարչութիւնը եւ զարմանքից մատս խածուցի: Եւ վստահեցնում եմ, որ Պիքսոսն, որ իսպանացի է, օգտուել է իր հայրենիքի անստուններից: Չեմ ասում, որ Պիքսոսն բանազող է, լափազանց սոպաւորուել է կենդանիների նկարչութիւնից: Անասնական արուեստը սղզել է մարդկանց վրայ:

Ապա, (շարունակենք) Անասթագիան էլ աւելի կպած էր ինձ զիշերները ու միշտ հրաւիրում էր իրա ոսկի ննջասենեակը. դա էլ ապօթիւ սէրն էր: Իրա ոսկի ննջասենեակը շինուած էր ամերիկացի մեծ ճարտարապետ-ճարտարապետ ձէյմըս ձիփթրնի կողմից: Եղ սենեակը՝ կոճակի վրայ կոխելիս՝ բորձրանում էր երկրորդ, երրորդ, չորրորդ յարկերը, ապա իջնում, միշտ կոխելով կոճակի վրայ: Իսկական առանձնօր-սենեակ էր: Մենք զիշերները միշտ դրօշմում էինք, մի յարկից միւսը տեղափոխուելով: Էդքան շէր միայն նրա իրանը: Էդ ոսկի սենեակը վաղուց էլ էր: Մի մեքենայ լարելով՝ սենեակը շրջում էր պարտիզում, ապա գնում մինչեւ մայր դուռը եւ յետոյ վերադառնում: Գիշերները Անասթագիան սիրում էր լարել մեքենան, որ սենեակը շրջի պարտիզում, լաւնի լոյսով: Մինչդեռ մենք անկողնում մի-մեկաց կպած սիրարանում էինք, սենեակը մեզ սանում էր վարդերի մէջ ու սոխակների: Մենք ցուցադրում էինք սոխակներին մեր վտռ սիրոյ վարդատանը, որպէսզի նրանք գեղջեղեն աւելի հոանդով, աւելի կատաղի: Մի-երկու անգամ պտտահեց ախիլլան: Առաջինը ոչինչ. մեր ասանէօր-սենեակը կանգ արեց երկրորդ ու երրորդ յարկերի ընդմէջ: Առաւօտուն՝ մեքենազտը կարգադրեց, որ գործի ասանէօր-սենեակը, ու մենք արկածահար... բարձրացանք չորրորդ յարկ:

Բայց երկրորդ աքսիդանը մի քիչ խայտառակ բան էր: Լարել էինք մեքենան, որ սենեակը շրջի պարտիզում: Մեր ջուներ տարել էր, իսկ մեքենան կանգնել էր, իսկ ասանէօր-սենեակը մնացել էր մինչեւ առաւօտ պարտեզի ոսկի դրան առաջ: Մենք խոր քնած էինք, իսկ անցորդները հաւաքուել էին ու մեզ դիտում, մեր թափառական սենեակի խոշոր լուսամուտներից: Նրք աչքերս բաց արի, զաշեցի վարագոյրները եւ մեքենան կարողացայ լարել. ու սենեակով վերադարձանք դղեակ:

Անասթագիան մեռաւ ամօթից: Նրան յարութիւն տուեցի մի երկար Համբոյրով:

Այդ գէպից անմիջապէս յետոյ, պատահեց մի ուրիշը:

Գինեկրալ Ալեքսանդր Շէյթանֆի երէց որդին, Մաքսիմը, որ արդէն գէշ աչքով էր նայում իմ վրայ — յանախ նկատել էի — սկսեց մի-մի ահաւարկութիւններ անել, զարեւ շարտել իմ վրայ, սասնէօր-սենեակի դրան ստալ կենալու առնչութեամբ: Գինեկրալ Ֆէոդոր Իվանովից լսել էի, որ նա դժի նման սիրահարուած լինելով Անասթագիային — միշտ մերժուած, է

հարկէ — սաստիկ խանդում էր ու իմ ներկայութիւնը չէր կտրող սանել: Մաքսիմը մի հսկայ էր, մօտ քառասուն տարեկան: Մի ծորք Անգիլ: Մի օր, հարբած, նա ինձ ժօռեցաւ ու հեղնական ու հայհոյական ասաց:

— Գուք արմենըլլա էք եղբի: Պաուս՝, շնորհաւորում եմ ձեզ: Թէեւ Պիեռ Լոթին ձեր ժողովուրդը անուանել է «նապտասակ», բայց դուք նապաստակ լինելով՝ կարողացաք որտալ մի էջ ստիւծ, եւ նրան ցուցադրեցիք պարտէզի դրան մօտ, ժողովրդի առաջ...
— Շոտ՛իս, չաւ՛իս...

Այո՛, ես նրա երկերեւը ապտակեցի: Մի երթուղարձ ունեցող ապտակ էր դա: Իմ ապտակից կայծեր ժայթքեցին:

Անմիջապէս հինգ-վեց հոգի մեր մէջ մտան: Մի բոպէ յետոյ, հինգ-վեցը եղաւ տասնըհինգ-տասնըվեց: Երկու բոպէ յետոյ, քսանըհինգ-քսանը-վեց: Թէ՛ զիս գապում էին, թէ՛ նրան սանձում:

Մաքսիմը ինձ հրախրեց մենամարտի: Իսկոյն ընդունեցի հրաւերը, նրան շան սաստակ անելու համար, քանի որ նա համարձակուեց վիրաւորել թէ՛ ինձ, թէ՛ իմ ազգային արժանապատուութիւնը:

Յուզումի փոթորիկ՝ պալատում:
Լալիս էր Անասթոսիան. հոնքուր-հոնքուր լալիս էր:
Լալիս էին Մաքսիմի մայրն ու քայրերը:
Հարիւր ձեռնարկ արեցին, որ հաշտուենք ու հրաժարուենք մենամարտից:

Ես վճռական դուռում էի.
— Ո՛չ ու ո՛չ:
Վերջապէս, երբ շատեր պնդեցին, դրի իմ պայմանը:
— Մաքսիմ ձեր բոլորի ներկայութեան, իմ առաջ, խոնարհարար կը խնդրի ներողութիւն, թէ՛ ինձ հասցրած վիրաւորանքի, թէ՛ իմ ազգին հասցրած վիրաւորանքի համար:

Մաքսիմ շքեղունեց իմ պայմանը:
Մենամարտը կայանալու էր հետեւեալ օր, ուսուստեան աղամտու-թին, պալատական պարտէզի Կարսեան Լճակի Ասարախան կղզու վրայ:
Մաքսիմի վկաներն էին զեներայներ Շիրոշկա Զոռայէֆը եւ Ալիք-ստեղբ Եէլթանֆը: Իմ վկաներն էին զեներայներ Ֆէոդոր Իվանովը եւ Ալեքսի Չինսկին:

Անասթապիան աճրողը գիշերը լացեց եւ աղօթեց: Ես էլ աղօթեցի:
Անասթապիան առում էր.
— Սաստիկ վախենում եմ, որովհետեւ Մաքսիմը քաջազարտ սուսե-րածարտիկ է: Իսկ դու, իմ սիրեկան, տասնեակ տարիներով սուր չես տուել ձեռք...
Ես նրան ասում էի.

— Մի՛ վախենար, իմ թագուհի, Երկնաւոր Թագուհին մեզ հետ է:
Առաւօտուն՝ կղզիի վրայ էինք: Լճակին կանգնած էին կանաչք, որոնց մէջ էր վարդերի վարդը՝ Անասթապիան: Կարող եմ ասել, որ լճակի ջուրը բարձրանում էր, կանանց թափած արցունքներից:
Իմ հոգեհայր, իմ պատուական զեներալ Ֆէոդոր Իվանովը ինձ ասաց, մենամարտը սկսելուց առաջ.

— Արդի, ես զօրաւոր նախազայցում եմ ունեցել միշտ: Իմ նախազ-ապցումը ինձ այսօր ասում է, թէ՛ դու կը յաղթես, Աստուծո՛վ: Բայց ու-շաղթութիւն արա, որ չո սայիք հարուածը չլինի մահացու: Խղճա՛ այդ գոթի

ձօրը ու մանուկները կրկու քոյրերին, որոնք ուղղակի սիրահարուած են քո վրայ:

Ես այդ արդէն գիտէի. գիտէի նաեւ, որ միայն նրանք չեն, որ սիրահարուած են իմ վրայ: Ինչեւեցէ. անցնենք. բայց չմտածեմ ասել, որ ես հիացայ դեմերալ Ֆէոդոր Իվանովի հոգու մեծութեան վրայ: Մինչդեռ Մաքսիմի հայրը Էմիլիանիստ էր լարուած Իվանովի դէմ, սա մտածուած էր նրա որդու մասին:

Գնեկրալ Ֆէոդոր Իվանովին խոտացայ կատարել էր խնդրերը:
Մենամարտը սկսուեց:

Սրկու սուրբեր երկարեցան, միմեանց դպան, սուրբը քաշուեցին, էլի՛ յարձակուեցին, սուրբերի երախակայնները միացան միմեանց, շկահիւնով շրփուեցին՝ քաշուեցին, սուրբը ուկեցին խաղալ, շոզալ, յարձակուել, նահանջել, տեղափոխուել անդադար: Մի սուր իր գէժը կանգնողի ուղղութեամբ երկարեցաւ ու անցաւ: Միւր սուրը սակայն ցած էր իջած: Հարուածը պարապին էր դացած: Իջած սուրը բարձրացաւ, շեղակի յարձակուեց ու մի ժարդկային բազուկից ոկուց հոսել տրիւնը...

— Գիպա՛ւ, — աղաղակեցին:

Մաքսիմը վերաւորուած էր:

Վերաւորին խնամեցին:

Կանանց ուրախութիւնը անչափ էր: Անասթաղիայի խնդութիւնը յորդում էր պարտէզից դուրս:

Կէսօրուայ ճաշը եղաւ մի օրգի: Սեւ Մարի չափ խաւետր, Վոլիայի չափ էլ վրտակա:

Մաքսիմը հարեց, լացեց, ներողութիւն խնդրեց ինձանից...

— Քնիչէ՛վօ... — ասացի ու նրան ներեցի...

Իմ ազգային արժանապատուութիւնը վերականգնուած էր:

Անասթաղիան խմեց բոլոր հայերի կենացը: Բոլորն էլ բժայեցին՝ բոլոր հայերի կենացը:

Մտքուծա ասում էի.

— Յնձա՛, Հայոց ազգ, եւ մի՛ մոռանար, որ ի՛նձ ես դարտական այս պատիւն ու պարծանքը:

Անկեղծ ասելով՝ սկսեցի ձանձրանալ պալատում, այդ շքեղաւոր քանատում: Արժեքի համար հարկ են մեծ թոխիչներ:

Թոյլտուութիւն խնդրեցի մի քանի շարք շրջի առանձին՝ հարեւան դաւառները: Անասթաղիան շատ դժուար տուեց ինձ այդ թոյլտուութիւնը, որովհետեւ չէր ուզում բաժանուել ինձանից:

Ես սկսեցի շրջի գիւղից գիւղ, քաղաքից քաղաք: Գրպաններս լիքն էին անհաշիւ փէզէքաներով: Բաշխում էի բոլորին, մանուկներ աղքատներին, ի հարկէ: Ուզում էի բոլորին բախտաւորացնել, Մի քանի միլիոն փէզէքա բաշխեցի առաւելապէս պատաններին ու ծերերին, ինչպէս նաեւ երիտասարդ ու սիրուն աղջկանց: Մարքում էի հաւաքական հարսանիքներ: Մի անգամ, մի քառասուն զոյգի կնքակայրը եղայ, բոլոր ծախսերը վճարելով: Իմ նուէր ասացած փէզէքաներից բացի, հս ծախսում էի միլիոնատէր Ամերիկացու փողերը: Թէեւ փողերը իմը չէին, բայց բարեգործը ե՛ս էի, քանի որ ե՛ս էի բաշխում բարութեամբ: Ժողովուրդը օրհնում էր ինձ: Մի երկար ճանապարհ կոչուեց իմ անունով:

Մի օր էլ, մի մեծ քաղաք մտայ ու տեսայ, որ կենտրոնական հրապարակում չափազանց զարմազալ ու հարաւրաց կան. պատճառը հարցրի.

ինձ ասացին, որ մեծ ցլամարտ էր կազմակերպուած, աղքատների օգտին, բայց զիտուոր ցլամարտիկը յանկարծ հիւանդանում ու հնոպրում է, որ շի կարող դաւ: Երեք օրից ցլամարտի թուականն էր, տոմսերը համարեա՛ ծախւած էին, իսկ կազմակերպիչները՝ շուարած: Ես նրանց ասացի.

— Ե՛ս կը ցլամարտեմ ու ձրի: Կէս միլիոն փէզէթա էլ նուէր կը տամ աղքատներին: Ես ցլամարտիկ եմ... բայց ունեմ մի պայման:

«Ես ցլամարտիկ եմ» ասելով՝ իմ կեանքում երկրորդ անգամ լինելով ոռւտ էի խօսում, աղքատների օգտին:

Ես իմ ստախօուութիւնը շարունակելով աւելացրի, ի հարկէ իմ սուտից ամաչելով.

— Ես հօր կողմից իսպանացի եմ, իսկ մօր կողմից էլ՝ ռուս: Ես իմ հօրից եմ սովորել ցլամարտել: Բայց ես կը ցլամարտեմ միտմանակ երկու ցուլերէ գէ՛մ: Մէկ ցուլի դէ՛մ կուռելը հասարակ բան է...

Նրանք առարկեցին, թէ չի կարելի, դա բոլորովին վտանգաւոր է, մահացու է:

Ես պնդեցի իմ պայմանի վրայ:

Վերջապէս, ընդունուեց իմ պայմանը:

ԱՓիշանների վրայ գրեցին իմ պատկերները, ինչպէս նաեւ մեծատառ արձանագրեցին ցլամարտիկի իմ կեղծանունը.

— Ֆրանսիսքօ Ֆրէտէրիքօ Ֆէրնանտօ Ֆորթունաթօ աի Ֆորմօթէրա Ֆարաունտի:

Իսպանական լրագրների մէջ, մեծ ազմուկ բարձրացաւ, թէ ո՞նց կարելի է, որ մի ցլամարտիկ կարողանայ կուռել երկու ցուլերի դէ՛մ միաժամանակ...

Տոմսերը սեւ շուկայում ծախուած էին հեղապատիկ-տասնապատիկ գներով...

Վերջապէս, ինչ զանաք տանեմ, ցլամարտը սկսուեց: Առաջին Արւմերները կատարուեցին: Կարգը ի՛մն էր: Ես շքեղաշուք հագնուած էի: Սուրբ ձեռքումս ու նրա վրայ կարմիր դրօշակը՝ ես մտայ արե՛ն, շքախմբով: Մո՞՞ ծափահարութիւն: Կանդեցի մենակ, հպարտ, արի: Ցուլերը արձակուեցին: Ես էլ յարձակուեցի: Մի անգամ, մի ծախ, մի անգամ, մի ծախ, յառա՛ջ ու յետ, յառա՛ջ ու յետ, յառա՛ջ ու նահանջ, նահանջ ու յառա՛ջ, դարձե՛ր, խառնե՛ր, խիզախութիւններ ու խոհեմութիւններ, վերջապէս, սուրը խրեցի մի ցուլի վիզը: Արիւնը շատուանի պէս ժայթքեց. մի քանի բոպէից, միւսն էլ տապալեցի: Ուղիւնսու ծափահարութիւնների: Ի՞նչ ուղիւնսու՞՞ լսեցի մի սուր ճիչ. ձայնիցը ճանաչեցի: Իշխանուհի Անասթասիան էր, որ թերթերում տեսնելով իմ պատկերները որպէս ցլամարտիկ, ԷՅՖՅՆԻՊօ վազէ՛ւ, եկէ՛ւ էր, ու տեսնելով ինձ արե՛նում, երկու տապալուած ցուլերի եւ արեան շատրուանների մէջ, ճշացել էր ու յուզմունքից ուշաթափուեց: Անմիջապէս վաղեցի նրա մօտ: Թողտօրողը մեզ շրջապատեց: Օ սը ԷՅՅՅՅ, լէ՛մոն, նարինջ ու նա շսթափուեց: Նրան սթափեցնելու մի կերպ կար. — իմ համբուրը: Ի՞նչ գուռաուած վարդը, է՞դ տօգունած վարդը արիւնսովառ դարձրի ու սթափեցրի իմ մի համբուրով:

Նա իրա թեւերով շրջապատեց իմ վիզը՝ ասելով.

— Իմ խեւ, իմ խիզախ, իմ որսորդ, իմ պարող, իմ արտիստ, իմ սուտերամարտիկ, իմ սիրեկան...

— Դէ՛, գէ՛, բաւական է, ասացի: Քիչ էլ մնաց, պիտի տեսնու. — իմ կումէրիէն, իմ լարախաղաց, իմ մի՛մոս...

— Էդ ի՞նչ անխոնճեմութիւն արեցիր, էդ որքա՛ն վտանգաւոր քաջութիւն...

Ճիշդ էր, որ իմ արածը կատարեալ դժուրութիւն էր. բայց առանց դժուրութեան, կեանքում ոչ մի խնթոջ գործ կատարել չի կարելի:

Անսթաղիայի հետ նետուեցի կառքը ու, հայտա՛, դէպի պալատ, ժողովրդի ծաղիկներին տեղատարափի տակ:

Ի՛նչ զահլաթ տանեմ, ընդամէնը մօտ չորս ամիս մնացի պալատում Զորս անմոռանալի, պատմական ամիսներ:

Բաժանումը եղաւ յուզիչ, որպէս մի տրակետիա. լացակումած աչքեր, հառաչանք լեզի, արցունքներ աղի... Անսթաղիան հաղարւմէկ լարերով կապուել էր ինձ...

Եթէ ես ուզեեայի՝ կը մնայի ընդմիջտ Անսթաղիայի մօտ, տարին միայն մի քանի ամիս բաժանուելով, յանուն իմ արուեստի: Եւ այդպէս, կը լինէի օրուայ մարդը: Համալիսարհային լրագրներին ու Հովիվուտի համար՝ ես կը լինէի ամէնէն շատ վճարուած մարդը: Բայց ես իմ մաքրութեամբ՝ խուսափեցի էդ ռէճիվարից. Ես նալարից բաժանուել չէի կարող: Բայց հիմի, ես անցնում եմ ուսանական պատմութեան մէջ: Հայկականում ես վաղուց անցել եմ: Եւ անցնելով ուսանական պատմութեան մէջ, ես դառնում եմ ո՛չ թէ օրուայ մարդը, այլ՝ բոլոր օրերի մարդը: Օրուայ մարդիկը լարախաղացներ են: Իսկական արժանաւորը նա՛ է, որ կարող է լինել մարդը բոլոր օրերի:

Հիմի ասեմ, թէ ինչպի՛ս անցնում եմ ուսանական պատմութեան մէջ՝ Վերադառնալուց հինգ ամիս յետոյ, զենքերալ Ֆէոդոր Իվանովից նաժակ ընդունեցի, որով աւետում էր, որ Անսթաղիան զուակ է սենցել, մի զուառ մանչ, իմ որպի՛ն, ճիշդ ու ճիշդ էլ նման ինձ:

Երկու տարի յետոյ, զնացի տեսայ. յուզում, ուրախութիւն, արցունք, ժպիտ:

Իմ գաւազի անունը Պորիս է... Ա՛հ, նա այժմ քսանութ տարեկան է...

Ես նոր տեսել եմ մի երազ, որ տեսիլք է: Ժամանակը մօտեցել է. Անսթաղիայի գաւազը, իմ որպի՛ն Պորիսը կը բարձրանայ գահ:

Յիսուս իր յարութիւն օտած լինելու գաղտնիքը հաղորդեց կանանց, որպէսզի նրանք լուրը չուտով տարածեն, իրանց շատախօսութիւնով: Յիսուս գիտէր, թէ ի՛նչ էր անում: Օրհնեա՛լ է նրա գործը: Բայց, թողութիւն թող շնորհուի ինձ, եթէ ասեմ, թէ ե՛ս էլ գիտեմ, թէ ի՛նչ եմ անում: Իմ գաղտնիքը չեմ յայտնում կանանց, ո՛չ էլ իմ տիկնոջը, որպէսզի ասեն որան ու նրան, ե՛ւ անարժանին, ե՛ւ արժանաւորին: Ես իմ գաղտնիքը հաղորդում եմ մի ասպետական աղամարդու: Գե՛ղ, Գարբիէլ, որ գրեւ ու պատմեա եւ պատմութեան յանձնես: Ահա քեզ մի աղամանդ. աւանդ: Լա՛ւ պահիր ու լա՛ւ պատմիր էս գործարներ գոհար գաղտնիքը, ո՛վ իմ պանծապահ:

Շատունին մէյ-մէկ կաթիլ արցունք որբեց իր աչքերէն...

Շարունակեց.

— Ահա մեծ գաղտնիքը գրեցի քո ձեռքերի, քո մտքի, քո հոգու մէջ...

Ռոմանոֆների ապագայ ժառանգորդը Հայ է եւ իմ գաւազը... Նա իմ Արծուիկն է, իմ Եզրնը, իմ Պորիսը... Նա տաւրտել է եօթը համալսարան: Ե՛ւ զիտութիւնների, ե՛ւ զեղարուեստական ճիւղերի մէջ յայտնուել է որպէս բազմակողմանի հանճար... Նա ե՛ւ ինժեներ տնխնուկ, ե՛ւ տրէքիֆիտ, ե՛ւ մաթեմատիկոս, ե՛ւ փիլիսոփայ, ե՛ւ աստղագէտ, ե՛ւ հիւլէագէտ, ե՛ւ գրող, ե՛ւ նկարիչ, ե՛ւ օդերեւութաբան է... Նրա դուրսը հանճարների ժողով է... Մի հրաշալի խառնուրդ է Լէոնար աս Վինչիի, Կէօթէի ու Այնլիֆայնի, ի

հարկէ զերպանց նրանցից... Ի՛, իմ դաւանն է...

Եւ ցաւալին էն է, որ վազուց է իմ էզլմը ինձ ցոյց չեն տալիս: Բուն պատճառը էն է, որ գեներալ Ֆէդոր Իմանովը վախճանուած է ու նրա տեղը զբաղած է սրիկայ Մաքսիմը: Գեներալների ժողովի կայացրած որոշում մով, ինձ ցոյց չեն տալիս իմ Պորիսը, սակայն՝ թէ ես դաւանանել եմ կայսերականութեան դէմ, թէ եղել եմ շովինիստ Հայ, ապա համայնաժողով, ապա ղաշնակիտ, հայ եկեղեցու մտնանդ պաշտպան, յետոյ էլի թաղաւորական, էլի նստիւնալիստ, էլի կալիֆիստ, մինչեւ անգամ անարիստ, Գրեյիլիստ, եւ էլ չգիտեմ ի՛նչ գանձուամբ: Թէ ես օրեկան մի քանի անգամ գոյն եմ փոխում... Բայց կա՞յ աշխարհումս մի բան, որ կարողանայ չուրեքնափոխուել: Բնութիւնը ամէն բանի զոյնը փոխում է: Էդ գեներալները հասկնում մէջ չեն անհաս, որ նախ ղեղնում են, ապա լինում ալիք, եւ ուսուում ժամանակի կողմից: Էդ կայսերապաշտները իսկական իւրօնփիստներ են: Իսկ Պորիսը նրանց կը մաքրագործի: Իմ Պորիսը կը լինի համայնաժողովի ամբերտը ու կը կոտորի էդ կեղտոտ ու կոտորած կոտորները կայսերապաշտութեան: Եւ կը լինի մաքրութիւն: Էդ գեներալ կականերից շատերը մեռան էն, բայց նոր կականեր են հասունացնել...: Անասթազիան էլ պատուեց, նախ իրա մաքրով, ապա մարմնով... Ի հարկէ, միմեանցից հետո մնալով Երկուստ էլ ծերացանք... Եթէ միմեանց մօտ լինէինք ու համերաշխ՝ միմեանց ջանէլ կը պահէինք... Որքան ճիշդ է ասուած, թէ տէրը երբեքտարք կը պահի սիրունուն ու սիրահարին... Հետո իմ ազիզ հայրենիքից, հետո նաեւ Անասթազիայից եւ իմ հոգեհատոր Պորիսից, ձմեռը հաստատուեց իմ վրայ, էս դահլուճար հիւանդութիւնով... Դեռ հոգուս մէջ դարուն կայ, բայց մի նահանջող դարուն... Զմեռը յարձակում է իմ ներքին միջնարկի վրայ: Միջնարկը լուծ միայնակ՝ Զմեռ կողուող ձենկիզից պաշտուած՝ պարտաւորում եմ... Մի օր կ'ընկնեմ ու էն ժամանակ մարդիկ կը հասկանան ճշմարտութիւնը, իմ անդամ մեկնումից զոյսացած մէկ պարտուը...

Երկու կաթիլ արցունք եւս սրբեց:

Սոստացայ կատարել իր յանձնարարութիւնը կէտ առ կէտ ու տառ առ տառ:

Դուրս ելլելէ առաջ, առաջարկեցի, որ իր շքեղաշուք համազգեստը, իր սուրը՝ որով մենամարտեցաւ, իր պատուանշանները, իր մոյկերը, իր ոսկեզափնին ու միւսները յանձնուին Հայկական Թանգարանին, տասը տարւան համար. անկէ յանձնուելու համար մեծ թանգարանի մը...

Պատասխանեց.

— Էդ բոլորը յետ եմ ուղարկել, մի օր, բարկութեան մի նոպայում: Եթէ իմ մօտ լինէին, էլի չէի յանձնի էդ Հայկական Եճքրիիների Թանգարանին: Ես էդ թանգարանին կը տամ միայն իմ ձիու մարտկը եւ ձիու պոչի մազերով հիւսուած խարպանը: Տակաւին կը տամ իմ ձիու գործածուած սլաշներից շոքս հատ, որպէսզի թանգարանի անդամները բախտաւորուեն, փրկուելով սխանդալներից:

Պահ մը լռեց. յայտնապէս յոգնած էր: Ապա ըսաւ.

— Գարբիէլ ջան, խնդրում եմ, որ գրես իմ կենսագրութիւնը: Էդ կենսագրութեան մէջ կը գտնա նաեւ գանձարան գաղտնիքը: Մի պատկերազարդ մեծ դրքի հեղինակ կը լինես է՛, իմ շնորհիւ կը լինես մեծ հեղինակ: Մեծ մարդու մասին գրողն էլ կը մեծանայ: Իմ անմահութիւնից քեզ էլ բայ ու բաժին: Կո անունն էլ կը շքաւորուէ իմ շքեղաշուք անունով: Մի կէտ կայ, ուզում եմ էդ մասին էլ արտայայտուել: Իմ բարեկամներից շատեր ինձ քա-

2002-991

նի անգամ գիտողութիւն են սրել, թէ մի օրուայ ընթացքում, գիծել են գա-
նազան գաղափարների տէր անձերի հետ, ու Դաշնակցականի ղէմ հակաճա-
ռելով՝ պաշտպանել են Համայնավարութիւնը, իսկ Համայնավարի ղէմ հա-
կաճառելով՝ պաշտպանել են Դաշնակցութիւնը: Ճիշդ է, այդպէս են արել
չափ օրեր, շատ անգամներ: Ոմանք զարմանում են, որ մի օրուայ ընթաց-
քում, ո՞նց կարողացել են լինել էղբան հակասական, էղբան դուժադու-
թիւնների մէջ: Ասեմ պատճառը: Ինձ համար ամէն մի պարտքս ունի իրս
արժէքը, իրս սրբութիւնը ու սխալները, իրս մեծութիւնը: Ես կը խոնարհ-
ւեմ բոլոր կուսակցութիւնների առջև: Կը խոնարհուեմ հիացմունքով ու
յարգանքով: Բայց երբ տեսնում եմ մի խեղճ խլլոտ, որ պաշտպանում է
Դաշնակցութիւնը, ինքս ինձ ասում եմ.— Տօ՛, կեանքս, դու արժանի չես
պաշտպանելու Դաշնակցութիւնը: Եւ փոխանակ իրա ղէմ խօսելու, խօսում
եմ իրա պաշտպանածի ղէմ: Նա ո՞վ է, որ ես նրա ղէմ խօսեմ: Նա ինքը մի
բան չի ներկայացնում: Իսկ իրա պաշտպանած զաղափարը մի բան է ներ-
կայացնում: Խօսում եմ էլ զաղափարի ղէմ: Նոյնը Համայնավարութեան
համար: Ես չեմ կարող տանել, որ մի խլլոտ խեղճ, մի կեղտոտ կետտո պաշա-
պանի Համայնավարութիւնը: Եւ խօսում եմ էլ անարժանի պաշտպանած դա-
ղափարի ղէմ: Հիմի հասկանալի՞ է, թէ ես ինչու չեմ հոսկայում:

Շարժեցի գլուխս:

Ապա, խօստացայ կատարել իր կամքը, ու երկու կաթիլ արցունք օրը-
բելով աչքերէս, հրաժեշտ ասի:

է

Երբ դուրս ելայ, սաստիկ, բայց շատ սաստիկ քամի կար:
Քամին այնքան ուժգին կը փչէր, որ հազուապէս մըսէս կը հանէր.
այդքանով շէր գոհանար. դիտ ալ, հազուապէս պէս, օդին մէջ կը ծածանէր...

Քամին ինքզինքը ախրական, տեսական բան մը կը կարծէր:

Սրտմտեցայ ու խօսեցայ Քամիին ու ըսի.

— Ծօ՛ Քամի, ինչքան ալ փչես, դուն ոչինչ ես, ոչինչ ես... Այո՛,
Քամի, դուն ոչինչ ես՝ բաղդասամբ Շատունիին, որ վարդետներուն վար-
պետն է ու վեհապետներուն վեհապետն է փչելու մէջ... Քամբախա Քա-
մի, դուն որքա՞ն ժամանակ կրնաս փչել. փչես փչես՝ քանի մը օր միայն
կրնաս փչել, անկէ ետքը, վերջին շունչդ է, որ կը փչես... Նայէ՛ մեր Շա-
տունիին, որ վաթսուներեքամամեակ ասարի է, որ անդադար, որ անխնայ կը
փչէ... Փչել՝ ասոր կ'ըսեն, փչող՝ անոր կ'ըսեն... Իսկ դուն, Քամի, ինչ-
քան ալ փչես, ինչպէս ալ փչես, ինչու ալ փչես, մեր ազգային փչողին քով,
գաւալիլ զէրօ մըն ես...

Աւ Քամին ըսածներէս յուզուեցաւ, յուսահատեցաւ, ստորակայութեան
բարդոյթէ բռնուեցաւ ու դադրեցաւ փչելէ...

ՆՇԱՆ ՊԷՆԻԿՔԱՆԵՆ

(Անտիպ)

Յ. Պ Ե Ր Պ Ե Ր Ե Ա Ն

ՄԱՅՐՈՒՂԻ

Տասնեակ անգամներ
այս վայրերէն անցեր էի
եւ անոնք միշտ
տարբեր էին:

Հումբան պիտի էլեւէշէր շարունակ,
երկարէր տեղ մը,
բնականորէ մէջ անարտ
եւ այնքան ռանկաբեր:

Այնտեղ ծուարած
անօրինական մատանգիստներ
լուս կը պակէին:
Մտաւանեցուած սպրտմանքու պէս՝
կրթանկաւթիւնն ալ զիս պիտի գտնէր
աչ արտօնելի
Քայլաւորեամբ մը,
որ կրնար խլուիլ որեւէ վայրկեան:

Կրկին սպրիւս
կարծէ՛ք առիթ մը կը տրուէր,
իմծի պէս մեռած
ճախապատմական կենդանիի մը,
որ դարս ելած էր
իր բրածոյ կացութենէն:

Մովեզերեայ մայրուղին
իր սնո գտին
ամվերջօրէն կ'երկարէր
եղեգնուտներու
եւ գումարափ
տուններու կողքին:

✽

Սո այն ժամանակ
էնի գիտեր, թէ
թուարանական
աշխարհի մը հետ
կը համընդունէի:
Կը բռնէի ձեռքդ, որ
իր էր միայն,
վերցուած

այն աշխարհէն կուտկուսմբու,
ուր մարմինէդ մտեր կային,
ստաւ թշուհներ,
չբացակներ պատուհաններու,
ինքնաշարժներու
հանդուտ կնայօքներ,
կին շրջակներ պատուհաններու
ու նկտած ձուկեր...

**

Հոն հանգիտսի ու լոգալու
վայրեր կային
մայրուղիի ողջ երկայնքին,
բայց ընդհանրապէս
ինքնաշարժներու խնդուսին մէջ,
ժովն ու հանգիտսի վայրերը գաւաթ-
կը մոռցուէին...
Չայնասփիւռը՝
առանձին կամ հաւաքաբար
ձանձրացող մարդոց՝ երգեր կը սփռէր
բոլոր ժամերուն...

Հոն՝ շարժելու էր շարունակ:
Պէտք էր երթալ,
պէտք էր այցելել
ձկնարաններ ու ճաշարաններ,
պէտք էր պարել
ու շտապել տարբեր տեղեր,
հեռաձայնել տարբեր մարդոց
ու սուկալի առանձնութեան անհետքիւնը
բաւերով ծածկել...

Չայնասփիւռը դեռ
գերմատիհանն ու
խանաւարիւնը պիտի հազարդէր...
Իսկ մէկը կ'երգէր
առանձնութեան ու
ոչինչ թելադրող գայութեան մասին,
թէ՛ կարելի չէ իրար հասկնալ ու իրար գգնալ:
Անհազարդ մարդոց բանակ մը սմբողջ
պիտի դեղերէր առանց ուղղութեան...

**

Միշտ ուշ ժամերուն
ինքնաշարժներ,
մութը պեղելով,

լուսարձակներով կը տանէիմ մեզ
լուս մայրուղիի շուկիմ վրայ :
Լաւ էր այգալէս,
մայրուղին էր
եւ շուրերու բոյրը ազի,
աւագին ինկած
քիթեղեայ տուփեր չէիմ երեւեր...

Լողաւազաններ պարպուած էին,
գանձե՛ք հզորոզ ոսկրակ լոյսեր
ամիրական կը փայլէին
չինական հին պատկերի պէս,
որ գեղեցիկ էր,
բայց նոյն տակն
ամհասկնալի...

**

Շահուած ու սուզ ստիթները
առանձնութեամ ժամերն էին,
ուր իմաստը, պահ մը միտյն,
կը բռնուէր... եւ կը փայտչէր:

Միւս ժամերը՝ մասնատու մի
ժամերն էին,
ուր մկրատ մը կը կորտէր
այս աշխարհը խաւաքարտ,
զէմքեր կանաչին՝ թէք կը ժպտէին
եւ նայումձքներ կը մարէին:
Միւս ժամերը՝
անձկութեան ու առանձնութեան,
օգոտտոտան տաք ու խոնու գիշերներու
ոնիրով ու սեռայնութեամբ ծանրաբեռնուած
ժամեր էին,
ուր կարելի էր կրակի
խաւարին մէջ
եւ մեքենան
զագոններու պէս տրձակել,
հարթաներու մոլուցքով թնձք,
կրկին ոչինչ հասկնալու՝
մեր անձերէն,
հարթաներու հանդէպ տածուած՝
սպասումէն
եւ մեր խառն սպրումներէն:

**

Կուտակումներու
այս աշխարհը բարդ,

միշտ անհասկնալի
կը մնայ ինձի :
Հոն կրնամ տեսնել
միմիայն շէնքեր,
սերնդագործող
մարդկային ձեւեր,
արտադրողական
կազմածներ հսկայ :
Կը թռի, թէ
իմաստը մեծ,
խուսափած է ընկալումէս :

Ես՝ ափերուս
հարցումներու շարք մը ունիմ,
փորձառութեան
ցանց մը պատուած,
արկէ արդէն իմաստը մեծ
խոյս տուած է
մուր քարերու ճուղին նման :

*
**

Այն օրերուն կը շրջէիմ ծովեզերեայ աւազներուն :
Դուն արեւը կը խմէիր շրթումքներով եւ միտերով :
Ալիքները հանգստութիւն պիտի սայլեմ
մեր ջիզերուն,
ձերբագատէիմ կաշկանդումներէ,
ֆիզիքական թմրութեան հետ
տակաւ զնջուող
մարդկութիւն մը ազատելով
մեքենացող մեր աշխարհէն :

Ապա շուկաներ պիտի շրջէիմ :
Յաւցափեղկերուն
փլատրիկէ մանրէիներ կը ժպտէիմ
եւ համաձայն եղանակի
նոր հագուստներ կը հագնէիմ :
Եւ մեքէն
անցորդներու հետ շապիկներ
կը փորձէիմ...

Հակառակ սնոր,
որ միասին կը շրջէիմ այդ վայրերուն,
կը թռի, թէ
հոյսվոյթդ զարմանալի արագութեամբ
հոն ընթացաւ,
կամ եւ, այդ գծով, թերա՞ն մնացի :
Յամենայնդեպս,

տազնապալի օրեր էին
 եւ դժուար էր
 այդ սպանին հետեւիլ...

**

Խաւարին մէջ, ելեկտրական
 լույսի մը տակ անբարեկամ,
 սլիֆները
 հարթ աւագ մը կը ձգէին
 իրենց հոտին: Ամառդկային
 լույս մը ներմակ,
 որ թաց աւազին հրաշք կը թուէր,
 գիշերին մէջ՝ սվաւիս:

Անկարելի
 ապրում մը, գոր գոնայած կ'ըմբռնէի՞նք,
 ճաշարանի պատուհանէն...
 Արդէն ֆրոնթը կը պաղէր
 եւ ձայները չէին հասներ:
 Գուցէ երկուքսով,
 եթէ այնտեղ մնայինք,
 կարելի ըլլար
 լսու ճայտայտմի սարքերը շնչել
 եւ աշխարհը
 հասնէինք համադրել...

**

Օրաբերքեր
 կրպակներուն ու մայրերուն
 փռուած էին:
 Մարդիկ՝ իրենց
 առաւօտեան տարնը խմած՝
 կը շտապէին աշխատանքի:
 Եւ մանուկներ
 կը վազէին այգիներուն
 եւ մարմիններ կը պառկէին
 աւազներուն...

Միմիայն դուռ չկայիր

**

Գործի հասնելու առաւօտեան
 անձկութեան դիմաց,
 կապոյտ ձիերն սլիֆներու
 յաջորդաբար կ'արշաւէին:
 Ձայնափութն մէկը կ'երգէր:

«Օտարութիւնը հագեկան,
 հազար անգամ
 վատ է անկի,
 քան կորուսող փրկիչական...»:

Իսկ մայրուղիի
 խնայումը բիրտ
 կացութեան մը դէմ կը բռնէր մեզ:
 Կարելի չէր գիշերներու
 մասին խորհիլ լսի,
 արեւով հարուստ օրերը յիշել,
 ոչ ալ անտարբեր
 ճեւեղով, անցնիլ:
 Ասֆալթի վրայ,
 իրանցներ ինչպէս
 խառն շարուած էինք...:

Ալիքներու կարգով
 կարծէք ցանց մը կը բացուէր,
 ամէն բազմ միշտ պատրաստ
 բակարդելու մեզ իր մէջ:
 Ինքնաշարժներէն
 այլանդակ դէմքեր
 մեզ կը գիտէին —
 ոչ թէ բերաններ,
 այլ յօշոտելու պատրաստ դունչներ
 համ կը շարժէին:
 Ձայներ չկային,
 այլ ռոնգներ, կափկափամներ...
 մինչեւ իսկ՝ ատեն մտունքս չէիմ,
 այլ մագիլներ ինձմէ անկախ,
 որոնք կարմիր այտուցներ կը սածէին
 մեքենական օտարութեամբ:

Ինչ մայրուղին
 կ'ելեւէր ամառներ:
 Ջուրն էր ծովի, արեւը տաք.
 գուցէ հովը թարմ շունչ բերէր:
 Իսկ ձայնասփիւտէն
 մէկը միշտ կ'երգէր:
 «Մարդկային
 դէմք մը պսակելու համար
 այսօր ցիւր շատ չէ...
 Հոսկէ ո՞ր երթալ,
 հոսկէ ո՞ր երթալ,
 ինչպէ՞ս հաշտուիլ կարասանքում հետ,
 ինչպէ՞ս վերադրիլ...»:

Ռ. Ո Ր Բ Ե Ր Ե Ա Ն

Յ Ա Ս Մ Ի Կ

Ձեռքերը գրպաններուն մէջ պարտիլ՝ ձեռով մը անտարբերութիւն կը նշանակէ, տեսակ մը յարգանքի պակաս, մտածեց Ալիա եւ, հազիւ շէնքի վերելքէն դուրս եկած՝ ձեռքերը կտիւնց գրպանները եւ հանդարտ ջայիերով ուղղուեցաւ դէպի դիմացի հանրային պարտէզը:

Օգը գեղեցիկ չէր: Բայց դէթ չէր անձրեւեր եւ հաւանաբար կարենար շոք նստարան մը գտնել: Նախընտրելի էր անշուշտ մասամբ գրուուած նստարան մը գտնել, քան պարապ մը, ուր ունէ մէկը կրնար դալ եւ թերեւս դինք անհանդուստացնել: Սա մէկուն վրայ ծերունի մը նստած էր՝ պճրտուն աչքերով եւ հրաւիրող տրամագրութեամբ: Ձէ՛, մտածեց Ալիա, ասոնք շատախօս կ'ըլլան, մէկը կը փնտռեն, որ դիւրեւք մտիկ ընէ: Բնաւ տրամագրութիւն չունիմ: Քոյի նստարանին վրայ, առանձին երիտասարդ կին մըն էր, որ հետուէն կը հսկէր խաղաղող երեխաներուն: Կողքի ազատ մասը լեցուցած էր սակառններով եւ բրդեղէն հագուստներով: Երեւի մինչեւ գիշեր մնալու միտք ունի, խորհեցաւ Ալիա. արդէն չեմ ուզեր հոն նստիլ. երեխաներու մայր է. անդադար զաւակներուն մասին պիտի խօսի: Աւելին. համամտութիւնս ալ պիտի պահանջէ. մա՛յր է:

Անդին՝ կեանքին իր տուրքը տուած կին մըն էր, վաթսուներոց, որուն դէմքը կը ճտաղաղաթէր՝ պարտքը ամբողջութեամբ վճարած մէկուն երանութեամբ: Այս մէկը լաւ է, մտածեց Ալիա, զիս չի խանդարեր: Նստաւ. զարձաւ դէպի կիւնը՝ տեսնելու համար, թէ որեւէ հակադրեցութիւն պիտի ունենա՞յ: Կատարեալ

ամայութիւն: Երկու տարբեր աշխարհներու մէջ կ'ապրէին: Կատարեալ ապաստանարան մը՝ այս նստարանը: Ո՞վ քաղութիւնը պիտի սենեակը մտնելու տանոր, Ալիայի դէմքին լեզի ժպիտ մը ուր-ւազձուեցաւ: Երբեք չէր երեւակայած օր մը պահուրտի գինով կնոջ մը ետին՝ այն ալ՝ հրաշարեակաւ:

Անօթի՞ էր: Անօթի չէր: Յուզումը կըտացուցած էր դինք: Աւելի ճիշդ՝ ան կըզգար էր բերնէն ստամոքս տանող ճամբան: Բարեբախտաբար շունչը կ'ելլէր տակաւին եւ բաւական թթուածին ներս կը մտնէր: Թէեւ ձեռքի լայն սլաշուսակին մէջ տակաւին ունէր քանի մը շերտ ստեղծիւն, զոր օրուան ընթացքին կը կրծնոէր՝ բան մը մոռնալու համար: Այլեւս չէր ծիւր. այդ ալ մոռնալու համար կը գործածէր կանաչ յասկաքարերով համրիչ մը, որուն հատիկները երեսուններեքի փոխարէն վաթսուերկոց էին: Բայց այստեղ, պարտէզին մէջ, չէր ուզեր գործածել զայն. կ'ամշնար: Տեսնողները ի՞նչ պիտի ըսէին: Այսուհանդերձ, ձեռքը կամացուկ սահեցուց պայտասկին մէջ եւ հանդէպուց համրիչին վրայ: Տեսակ մը խաղաղութիւն, ապահովութիւն զգաց այդ մանր հատիկները շոյելով, մա՛նսաւանդ՝ երբ հասաւ ծոպին, որ կազմըւած էր ոսկի շիթաներէ: Յամկոտքարը եւ ոսկին կարծէք քիմիական խաղով մը իր արեան կ'անցնէին եւ կը ջերմացնէին զայն:

Գրասենեակի վերջին օրն էր ուսոր: Ընկերութիւնը փակած էին: Եւ հիմա, պարտէզէն երեւցող գրասենեակի պատուահաները զարմանալիօրէն ոչ մէկ զգա-

ցում կ'արթնցնէին իր սրտին: Խորքին մէջ ուրախ էր. առաւել կանուխ ելլելու պէտք չունէր, ոչ ալ ալիւս պիտի լսէր պաշտօնակիցներուն ապիկարութիւնները: Աղաս էր:

Կինովը կը շարժէր: Անտեսելով Ալիայի ներկայութիւնը, ամբողջ հասակը տարածեց նստարանի երկայնքին: Արդեօք պիտի քնանա՞ր: Կոշիկները ջուռեցան Ալիայի փէշին: Մարմինն շարժումը պատճառ եղաւ, որ բարկ հոտ մը տարածուի շարս կողմ: Այսքանը բաւեց, որ ազդեկը որոշէ սաքի ելլելու եւ երթալ: Ո՞ր: Չէր գիտեր. բայց կ'ուզէր խնութիւնն իր ընել: Սուղ հագուստներ զընել. մազերուն ձեւը եւ գոյնը փոխել: Հը՞: Ճամբորդութեան համար տոմս մը գնել, թերեւ: Գէշ պապափար չէր: Նոր կեանք մը սկսիլ:

Բայց ինչո՞ւ: Ո՞վ կ'ըսէր, որ նոր կեանքը չ'ի՞նչ լաւ պիտի ըլլար: Ո՞վ կ'ապահովցնէր:

Ամուսնութիւն: Դեռ ժամ մը տուջ մերժած էր պաշտօնակիցներէն մէկուն առաջարկը: Ամիսներէ ի վեր ճանճարացուած էր զինք այդ քիչ մը ինքնահասան մարդը: Յաճախ բաժնէր, թէ շատ հետաքրքրական կը զանէ զինք: Քանի մը անգամ ալ ընթերցի հրաւիրած: Անպուտ. զերժութիւնը չէր հաստատուած երկուքին միջեւ: Մարդուն ղէմքին վրայ բան մը կը խրաչեցնէր զինք: Թերեւս ուրիշներուն աննշմարելի, բայց բան մը, որուն անունը չէր գտներ աղջիկը:

Այսպէս լաւ եղաւ, կը մտածէր Ալիա, աղատեցայ իրմէ: Վերջին պահուն, հրաժարեցաւ շուկայի դաղափարէն եւ, նպարտաճանառին հանդիպելէ ետք՝ գնաց տուն:

Նամակատութիւն նայեցաւ: Նամակ չկար: Կոյնի քանի մը թերթեր: Առաւ եւ բարձրացաւ տասներորդ յարկի իր տունը: Հազուատները հանկեւ եւ, պատկերասփիւռը բանայէ ետք՝ տեղաւորուեցաւ զինացի օթոցին վրայ:

Լաւերու ժամն էր: Աչքերը նկարեւորուն, բայց մտքով շատ հեռու էր տնոցմէ: Ո՛ճիբ, գողութիւն, զեղծարարութիւն, քաղաքական ղէմքերու ամ-

բաստանութիւն, քաղաքական սուղարէզի թեկնածուներու ժպիտներ, խոստումներ, կեղծիք, կեղծիք, կեղծիք... ամէն կողմ: Մերտը խառնուեցաւ: Երանի՛, մտածեց, երկու աշխարհներ գոյութիւն ունենային. մէկը անոնց համար, մէկը՝ իրեն: Եւ ինք ստիպուած չ'ըլլար գործ ունենալու «անոնց» հետ, ստիպուած չ'ըլլար յաճախ կոխկռտելու իր սկզբունքները՝ «պատշաճ» կեանք մը կորեկալ վարելու համար: Բայց ինչո՞ւ: Չէր գիտեր, թէ ո՞վ բաժնէ՞ «ձայն բազմաց, ձայն Աստուծոյ»: Այդպիսի բան չէր կրնար գոյութիւն ունենալ: Աստուած հազարներու ձայնով չ'իտեցաւ, ան խօսեցաւ քանի մը մարդարէններու բերնով, որոնցմէ մէկը մարդիկ խաչեցին, միւսները հալածուեցան:

Հիմա գործով մտահոգ չէր: Ա՛լ չէր ուզեր աշխատիլ: Պէտք չունէր աշխատելու: Հիմա լա՛յն ժամանակ ունէր շուրջը եւ շուրջիները դիտելու, իմաստ մը հանելու տեսածէն: Մահուան իմաստը գիտէր, կեանքի՛ իմաստը կ'ուզէր հասկընայլ:

Հեռաձայնը հնչեց: Դալին էր, դրացուհին: Հիմա քովդ կու գամ, բուս Ալիա, գոցեց պատկերասփիւռը եւ մագեց բարեկամուհիին մօտ: Բողոքովին անհանաչի էակ մըն էր գուռը բացողը: Անշուքար ղէմքին վրայ լացէն կարմրած աչքերը սարսափելի երեւոյթ մը տուած էին իրեն: Հազիւ դուռը բացած՝ ինկաւ բարեկամուհիին թեւերուն մէջ եւ սկսաւ յորդառաս արցունքներով լայլ:

— Ալիա՛... արդէն թաղեր են... առանց ինծի իմացելու:

— Ո՞վ, զո՞վ, ի՞նչ, չեմ հասկնար, հանդարակ՛:

— Թաղեր են ինքնին, երէկ, ուրիշ բարեկամ մը այսօր հեռաձայնեց:

— Ինքնին՞. Ե՞րբ մեռաւ... ինչո՞ւ մեռաւ... վերջերս լաւ էր. ի՞նչ պատահեցաւ, որ այսպէս յանկարծ...:

— Չեմ գիտեր. երկու շաբաթ առաջ վերջին անգամ հիւանդանոցէն հետս խօսեցաւ...: Ըսաւ, թէ լուրջ բան մը չկայ, հանդիստի համար ընտանիքը զինք տարած է հոն...: Ե՛վ կը հաւատար, որ այս-

պէս յանկարծ պիտի մեկնի... առանց իմ մասին մտածելու...

— Օ՛հ, Դալի, վստահ եմ, որ մտածեց չու մտախոյ: Մտոցածք, թէ քեզ որքան կը սիրէր...

Ալիսայի այս խօսքերուն վրայ, Դալի աւելի սկսաւ լալ: Ալիսա մէկ կողմէ կը ջանար հանդարտեցնել, միեկտեք զայն, միւս կողմէ կը զարմանար, թէ Դալի ինչու այդքան շատ կու լար այդ տարիքոտ, հաստ ու սպիտակ մարդուն համար, զոր տարին մէկ-երկու անգամ կը տեսնէր միայն: Բնական էր, որ յուզուէր քիչ մը: Ի վերջոյ, տարիներու կսպ մը կար երկուքին միջև: Բայց մեծ սէր մը չէր, որ կը կորսնցնէր: Կապրէին տարբեր նահանգներու մէջ և Ալիսա պիտէր, որ Դալի այստեղ ունէր իր պարբերական գարեկամները, սէրերը: Յարմար տարիներ չէր փախցնէր՝ մէկ խօսքով:

Բուական հանդարտելէ ետք, Դալի սկսաւ խօսիլ, խտտովսնել իր զորաւոր յուզման պատճառը: Քիչ-քիչ կացութիւնը կը յստականար Ալիսայի համար:

— Շատ երիտասարդ էի: Հիւանդանոցի մը մէջ կ'աշխատէի: Հանդիպեցայ այս բժիշկին, որ յատուկ հետաքրքրութիւն ցոյց կու տար ինծի հանդէպ: Ինձ մէջ քուական մեծ էր տարիքով, եւ այրի՝ երկու զուականերով: Փամանակի բնութագրին մտերմացանք: Քանն-քանն ինչ տարուան պատմութիւն է այս: Կարելի է ըսել, թէ կը կենակցէինք:

— Ամուսնութեան մասին չէի՞ք մը տածեր:

— Չաւանդները բացարձակապէս դէմ էին գաղափարին եւ կ'ատէին զիս: Մինչև հիմա ալ կ'ատեն: Տարիներ ետք, նահանգս փոխեցի, գործի բերումով եւ կեանքի փոփոխութեան յոյսով: Բայց ան միշտ այցելեց ինձի, մեծ նուէրներով, որովհետեւ շատ հարուստ էր, եւ ձեռով մը ճակատագիրս անպիւր օրէնքով կապեց իրեն: Ես՝ առանձին եւ անտէր աղջիկ մը, կը վստահէի իրեն, գաղտնօրէն կը յուսայի, որ սպառազ ունի նիւթապէս պիտի ապահովէր, քանի որ չէր ուզեր զուակաները բարկացնել եւ հետո ամուսնանալ: Վերջին տարիներուն, քանի-

քանի՞ անգամներ յիշեցուցած էի իրեն, թէ պէտք է բան մը ընէ այս մասին, չըմտոնայ զիս, որովհետեւ կը զգայի, թէ առողջութիւնը լաւ չէ: Տակաւին երէկ, բարեկամուհիի մը հետ գաղտնիքով կը խօսէի ինքնիմաստին: Պահ մը այնքան ջղայնացայ, որ ըսի. «Կը մտածեմ, որ մեռնի՞, մեռնի՞, մեռնի՞...»:

Ալիսա հիմա կը հասկնար... չա՛տ բաներ: Դալի կու լար, նախ՝ խղճահարութեան, երկրորդ՝ ապահովութեան ըզգացումի պակասէն: Մարդը մեկնած էր առշուտ եւ ոչինչ ձգած էր իրեն: Ինչ, որ տարիներու իր զինքը եղած էր: Բայց խղճահարութիւնը աւելի զօրաւոր էր: Ընտ աղօթեցի, որ մեռնի...», կը կըրկներ ան ու կը հեկեկար:

Ի վերջոյ, Ալիսա կըրցու համոզել Դալին, որ ինչ երբ այդ մաղթանքը կ'ընէր, բժիշկը արդէն մեռած էր եւ, հետեւաբար, մահը չէր կրնար իր մաղթանքին հետեւանքը ըլլալ: Բարեկամուհիին ներկայութիւնը եւ հանդարտեցուցիչը, զոր աւելի կ'անուխ առած էր, յաղթեցին Դալի յանցաւորի բարդութիւն եւ ան ըսաւ, թէ կ'ուզէ ջնսնալ: Ալիսա թեթեւ կոց մը դրաւ անոր վրայ եւ կամայորակ մը վերադարձաւ իր յարկարածինը:

Գիշեր չէր տակաւին: Ալիսա երկար ժամանակ ունէր խորհրդածելու զէպքին մասին, զայն քննելու եւ վերլուծելու, բաղդատականներ ընելու իր եւ Դալիի վարած կեանքերուն միջև...

Գիտէր, որ Դալի, հետո իր բարեկամէն, հաւատարմութեան ոչ մէկ ծիգ կ'ընէր, երբ առիթը ներկայանար: Հաւանօրէն, բժիշկին կեցուածքն ալ, փոխադարձաբար, նոյնն էր: Դալի կ'ըսէր. «Ալիսա, զառիթափին վրայ եմ այլեւս, անցնող իւրաքանչիւր վայրկեան մեծ կորուստ է»: Թերեւս ալ իրաւունք ունէր: Դեղեցիկ կիս էր. անմիջապէս ուշադրութիւն կը գրուէր: Իսկ երբ խօսիլ սկսէր, շատ աւելի զբախչ կը դառնար այրերուն: Հրաւիրող բան մը սննդին իր ձայնը եւ շարժումները, առանց գոհակութեան: Թերեւս իրաւ կիսն էր ան: Ազատագրուածը: Գիտէր, թէ ինչ կ'ուզէր եւ ուզածը կ'ունենար, առանց կեղծ պար-

կենտրոնական: Այլա որքա՞ն պիտի ուզէր իրեն նմանիւ, բայց չէր կրնար... չէ՛ր կրնար... Կ'ուզէր, որ իր հիացմունքի տարիայ անձը կուսէ՛ր իր զգացումները եւ ասնէ՛ր ասալին քայլը: Հպարտութեան այդ քանի մը վայրկեանները շատ վաղանցուկ երջանկութիւն մը կու տային իրեն... եւ այդքան: Ի՞նչ սպուշ էր ինք: Տե՛ս Դալիի այս տառապանքը, կ'ըսէր ինքն իրեն, կ'որո՞հէ՛ր: Երկար մտածելէ ետք, Այլա կը խոստովանէր՝ այո՛, կ'արժէ՛ր: Նախընտրելի էր սիրով տոռապիւ, քան ասանց սիրոյ: Ի՞նք, Այլա, ի՞նչ ըրած էր: Ունեցած էր երկու-երեք լուրջ ուսմաններ եւ կը խորհէր, որ այդ յիշատակներով կրնայ երթալ մինչև կեանքին վերջը: Այլայի համար ասանց սիրոյ Պետր անհասկնալի էր. սեռը, հակառակ սեռին մօտիկութիւնը, անոր առթած ջերմութիւնը պիտի նմանէին երեսն ի վարցիտի մէջ փռուելու իրողութեան: Ճանչցած էր անձեր, ուզած էր անոնց մօտենալ, մտերմութիւն մը ստեղծել, բայց աներևոյթ ձեռք մը զէպի ետ հրած էր զինքը:

Վախկոտ մըն էր ինք: Վերջակէս: Սակայն, միւս կողմէ, կր նայէր դարձեալ Դալիին: Կը անսնէր անոր յուսահատ ուժմը, կապարմիւր աչքերը: Կը տեսնէր շատ ասելի հեռուն: Անկեղծ էին իրադու հետ: Գիտէր, որ Դալի վրայ տրւած էր նաեւ առողջութեան մէկ մասը: Արզանդը մեծ մասով մնասուած էր իր զործածած յարաբերիչ դեղերէն եւ գործիքներէն: Ի՞նք... Այլա՞ն... մաս-մաքուր էր... մա՞ս-մաքուր: Ամէն անգամ, որ տարեկան քննութեան կ'երթար, բըժիշկը կ'ըսէր. «Ամէն ինչ շատ լաւ է, շատ լաւ եւ մաքուր»: Յը մը, երբ մեռնէին, Դալի պիտի թաղուէր ծակծկած եւ մաշած արզանդով մը կամ ասանց արզանդի, իսկ Այլա՞ մա՞ս-մաքուր: Երբ-տասարդ ազնկան մը պէս:

Big deal !
 Թաղորդող քանի մը օրերուն Դալիի վիճակը բարելաւուեցաւ: Բայց այս անգամ Այլա չգիտցաւ իրականութիւնը: Անցնող ժամանակն էր, որ կը դարձանէր ցաւը, թէ՛ ինթրիի կտակը բացուած էր, ո՞վ գիտէ...

Ամէն պարագայի, հին կեանքը մի-բըսկաւ Դալիի համար: Այլա ձեւով մը ուրախ էր բարեկամուհիին կեանքի մե-րահատաւան համար: Ուրախ էր նաեւ ինք իրեն համար, որովհետեւ որոշած էր մարդկը գիտել եւ փնտռել կեանքի ի-մաստը: Աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել, թէ այս անգամ բաղադրականը կ'ուզէր ընել իր եւ բարեկամուհիին միջեւ: Ո՛չ իմ ըրածս ճիշդ է, ո՛չ՛ իրը, կ'ըսէր ան, բայց, բնական օրէնքով, պէ՛տք էր որ մէկը միւսէն քիչ մը ասելի ճիշդ ըլլար:

Դաստիարակութեան արդիւնք էր արդեօք, թէ շրջապատի: Դալի կու գար եւրոպացի մոլեռանդ կաթոլիկ ընտանի-քէ, մինչ ինք՝ միջին-արեւելեան իսլամ ընտանիքէ: Երկուքն ալ, սակայն, կ'ապ-րէին երկրի մը մէջ, ուր այր-ընկեր մը ունենալ բնական երեւոյթ էր անանձին կնոջ մը համար, իսկ շունենալը՝ տեղի կու տար զանազան անպատեւեթարութիւններու: Այլայի համար այս իրողու-թիւնը տաղնապ մը կը ստեղծէր: Եւ տաղնապը իր ներսէն ծնունդ կ'առնէր: Երջանակուն չէր գար: Որովհետեւ հե-տաւոր այս երկրին մէջ ուսանձին կ'ապ-րէր, չափահաս էր եւ պէտք չունէր ոչ ոքի հուշի տալու: Ի՞նք էր, որ չէր հաշ-տըւեր ստեղծուած կացութեան հետ: Ե-թէ մտերմութիւններ հաստատէր այրի-րու հետ, ինքզինք թէթեւարար պիտի նկատէր. իսկ եթէ միայն կրն-բարեկամ-նէր ունենար, զինք պիտի ամբաստա-նէին իր անբնական հակումներ ունեցող էպ: Եթէ երկուքն ալ հեռու կենար, ի՞նչ իմաստ ունէր կեանքը:

Պայտասակէն քաշեց Յամիկը, աչք-պէս կը կոչէր յասկաբարերով իր երկար համբիշը, եւ փորձեց լուծել հարցը: Մէկ՛ այո, մէկ՛ ոչ, մէկ՛ այո, մէկ՛ ոչ... անիմաստ. գիտէր, թէ զոյգ թիւով կը վերջանային հատիկները: Երբեք ու-կիէ ծոպը, մասնորոպ սանարեց մաղերը եւ յաղթական ժպիտ մը ուրուագծուե-ցաւ զէմքին:

Որոշումի մը յանգած էր: Առաջին առիթով պիտի վերադառնար արարական իր հայրենիքի տաք աւաղներուն, ուր իր այստեղի տկարութիւնը անաքնութիւն կը նկատուէր:

Ուրախութենէն շրթունքին տարաւ Յամիկին քարերը եւ սակիչ պաղ ծուլը պարտցուց զէմբին՝ զովանալու համար։

— Յաջորդող քանի մը օրերուն, Դալին հանգիստացաւ յաճախ։ Երջանկութեամբ կը շողար դէմքը, աչքերը կը փայլէին։

— Քեզի բան մը պիտի պատմեմ։ Պիտի չհաւատաս։ Նոր մարդու մը ծանօթացայ։

— Ի՞նչ կայ չհաւատալիք։ Յուսամ ինքներն մոռցնել կու տայ քեզի։

— Ալիս, ծագումով Պայրուզոյն Արեւելքէն է եւ այնքան փափկանկատ, այնքան կնամեծար, հետս կը վարուի այնպէս՝ ինչպէս նուրբ յախճապակիէ ամանի մը...

— Ո՞ր ծանօթացար իրեն։

— Դիպուածաւ։ Քաղաքամէջի շուկաները կը պտըտէի, երբ ուշադրութիւնըս զրաւեց արեւելեան հողափրկներ ծախող խանութ մը։ Ներս մտայ, պարզապէս դիտելու համար։ Անգամին ետին կեցած էր շատ բարեկեցիկ եւ համակրելի դէմքով երիտասարդ մը։ Քաղաքապարտական քանի մը բառ փոխանակելէ եւ ցտցազրուած նուրբ ապրանքները դրուածակէ տաք, դուրս եկայ խանութէն։ Ինքնաշարժս մտայ, որ մեկնեմ։ Տեսայ, որ այս մարդը արագ քայլերով ինծի կը մօտենար։ Երեւակայէ՞ ի՞նչ։

— Ի՞նչ։

— Զափազանց ներդրութիւն խնդրելէ ետք, բաւ, որ համայնած է ինձմով եւ կը փափարի հետս տեսակցութիւն մը ունենալ։

— Ընդունեցի՞ր...

— Այնքան պիղեց եւ ազայեց, որ, ի վերջոյ, տեղի տուի եւ մեր ժամադրամիայրը որոշեցինք։

— Դալի՛, չե՞ս վախճար օտարներէն։

— Ի՞նչ առաջին օրը, որ տուես այցելեց, գիտե՞ս ինչ բերաւ։

— Փունջ մը ծաղիկ... կամ տուփ մը ճեղատի։

— Ո՞րչ, կը սխալիս։ Գոթը ծրար մը թանկարժէք քարեր, որոնցմէ խնդրեց,

որ ընտրեմ երեք հաս՝ համաձայն ճաշակիւ։ Մերժեցի, բողբոջեցի. ոչ մէկ օգուտ։ Այնքան համոզիչ էին իր ձայնն ու խօսքերը, որ ընդունեցի զանոնք... Ալիս, շատ հարուստ է եւ... ամուսնացած... ունի հրեք գաւազ եւ յղի կին մը...

— Դալի՛, այլեւս մի՛ պատմեր ինծի արկածային դրութիւններուդ մասին։

— Բայց զիս շատ կը սիրէ... կը հաւատամ իր անկեղծութեան։

— Ես ալ կը հաւատամ զայդք՝ վայրկեաններու անկեղծութեան։ Այդ մասին ո՛չ մէկ տարկութիւն։ Բայց մինչեւ հիմա, ինձմէ աւելի լաւ պէտք է ձանչցած ըլլալիս այրերը...

— Ալիս, չես գիտեր, թէ ի՞նչ երջանկութեամբ կ'ողորմեմ, հրք իր թեւերուն մէջ եմ... Ալիս... դուն չես գիտեր. սակէ ետք, ինծի համար կամ այս է, կամ ոչինչ, չեմ կրնար սխրոյ քովէն անցնել միայն, երբ անիկա հոն ինծի կը սպասէ, եւ անտարբերութիւն կեղծել, երբ անիկա մարմնիս պէս կը քաշէ զիս։ Սէրը կեանքն իսկ է, Ալիս, մնացեալը ամբողջ յարակից յարգարանք են։ Ես ալ գիտեմ, որ այս յարաբերութիւնը տեղ մը պիտի չյանգի։ Գիտեմ, որ բարեկամս մի՛յտ պիտի վերապառնայ իր կնոջ եւ զաւակներուն։ Կը սիրէ զանոնք, գիտեմ։ Միայն կը մաղթեմ, որ վերջին բաժանումը շատ ցաւ չառնէ։

— Ես ալ կ'աղօթեմ անոր համար։

Ալիս վերադարձաւ տուն բոլորովին վրդոված։ Զգացումներ զիրար կը քուլկրտէին իր ներսիդին։ Դաւ, սէր, նախանձ, պարկեշտութիւն, մտերմութեան պահանջ եւ ուրիշներ։ Այս թուրքահայ մէջ, սակայն, իր իրականութիւնը կ'ուրուագծուէր աչքերուն առջեւ։

Առաւ յամբիկը ձախ ձեռքին մէջ եւ աջ ձեռքով վերցուց հետաձայնին ընկալուիլը։

— Այո՛, օղանաւային ընկերութիւնն է։

ՌԻԹԱ ՈՐԲԵՐԵԱՆ

ՕՐՕՐ ԻՇԻՏԱՅԻՆ...

Իշխաւ,
 ճամբաներէն, որ զիս սարիբ,
 — Դռողոյ փնրս անհերուդ կայանաւոր —
 Գիտէի, թէ վախճան մ'ունին:
 Գիշերային երկինքը խոր
 Լացակումած աչք մըն էր,
 Որ աստղերն իբ կաթիլ-կաթիլ
 Կը կուտակէր այտերուդ վրայ.
 Թռփօ քաղաքի լոյսերը անբողջ
 Բաւարար չէին,
 Որ անյայտին մէջ արձակուած
 Մեր քայլերը իրար գտնեն:
 Ու ես տեսայ,
 Որ այտերուդ բարձունքներուն իջած լոյսերը ամէն
 Իրենց գուարք ճամբաներէն
 Կը հասէին բացատներուն վրայ արտիս՝
 վերջացող օրերուս
 վերջին այգը բանալու...

Իշխաւ,
 Աստղերը, որ մեր ճամբուն
 Կաթիլ-կաթիլ հոսեցան,
 Փշածազկի պէս եիմա
 Քայլերս մերկ կ'արիննն,
 Միմչ կը քայլեմ՝ ասփերս պարսպին մէջ կարկառած:

Իշխաւ,
 Դուն՝ որ օրերուս մերկութեան վրայ շոգ մ'էիր նետուած,
 Դուն՝ որ ա'լ չկաս...

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

Ռ Ո Ւ Բ Է Ն

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

Գ Ե Ա Լ Շ Օ Մ Ա Ն Ո Ւ Կ

Վճռեցի երթայ եւ միանայ Գեալլօ Մանուկին: Արածանին կատաղած ծով է դարձած, կը մտածեմ, մի լաւ թակարգ է մեզի համար պատրաստած, թէ զօրքը դալու լինի խուցարկութեան: Հոգ չէ, Գեալլան հոն է, կը մտածեմ եւ հրաման կու տամ սուրհանդակիս շարժելու դէպի Շէյխլան:

— Գարոն, գիտե՞ս, դեռն ելած է: — Գիտեմ, ես լողալ գիտեմ, — սըտեցի անոր, — դու եթէ գիտը չես կըրնար անցնիլ, տեղ հասնելու պէս մի այլ ուղղութեամբ Շէյխլանէն կորիք, բայց ձեր դիւղ չերթաս:

Կէս դիւղը չեղած՝ Պետրոսի տունն ենք. Գեալլային դտայ: Ան իմ կողքին է:

Գեալլօ Մանուկին ծանօթ է արգէն ընթերցողը: Ան աշխարհ տեսած մարդ էր, մինչեւ «Հայրս» քաղաք, Սիլիանիկ, Պշէրիկ ճամբորդած: Խիանաց դաւառի Սողոմոնի հովիտներէն դուրս ելած, աշխարհ շտեմած մէկը չէր: Փրէ Բախմանէն բռնած շուրի Ղարզանի գրմէն սար ու ձոր, շուրի Փսանի աշխարհ, Մարաթուկայ կատար, անկէ Բոնաչէն, Բալաքցոց երկիրը, շուրի Մշոյ գաշտ մէջն առած, ողջ Սասնայ աշխարհ, մինչեւ Խուր ու Թարխու չի սարը, Ընձքարի գլուխը, Գեալլային համար գաղտնի բան չկար: Գար, ձոր, շուր, բոյս, անտառ, ձուկ ու թռչուն, գիւլ եւ մարդիկ իր հինգ մասներուն պէս լաւ գիտէր, ինչ որ պարծանքով կ'ըսէր Սպաղանաց Մակարին, որ արգ-

բան հետունքը չէր դուրս եկած:

Գեալլան իրաւունք ունէր պարձնելու, որովհետեւ նախ՝ լեռներու մէջ աւազակ էր եղած՝ նախքան Արարոն: Երբ Արարոն դարձած էր յեղափոխական, անոր դաշնակիցը եւ յետոյ անոր ընկերն էր եղած եւ յետոյ ձուլուելով ու տաշուելով Ֆետայի էր դարձած՝ Դաշնակցական Խեչոյի նման: Մէկ բանի մէջ միայն ան նոյնն էր մնացած. գրել-կարդալը սատանի արհեստ կը համարէր եւ չէր սովորած, բայց սուսմանական էր, քանի որ գիտելու սուր ալքեր ունէր եւ տարօրինակօրէն շնչին հետքերէն ճիշդ հետեւութիւններ կը հանէր: Ատոր համար Գէորգ Զաւուշ շատ կը գնահատէր զայն, եւ բոլորոսայ կը սիրէինք ու արժէք կու տայինք անոր, թէ եւ անոր ատամները թափել սկսած էին, աչքերուն լոյսը պակասած էր, ոտքերը կը դողային, մէջքը կորացած էր եւ հազը կը նեղէր գինքը:

— Գեալլօ, էդ բոլոր բաները ո՞րտեղէն գիտես, երբ մարդ չես տեսներ, մարդու հետ չես խօսիր եւ կարգալ չգիտես:

Գեալլօ Մանուկ կը պատասխանէր.

— 40 տարի կ'ըլլի «ասի» (ըմբոստ) եմ դատած. զէնքի, գրա՛նի տակ եմ ընկած: Տարին 40 օրը կատաղանի կամ զնդակի կը սպասեմ, 40 օրը որսի մէջ եմ՝ կախաղանէն, զնդակէն շեղելու համար եւ մէկ օր

ալ թագաւոր լինելու համար: Այդ մէկ օրէն վերջը, նորէն կախազան, գնդակ, նորէն 40 օր՝ այդ գնդակները կտխազանները շէջաքացնելու եւ մէկ օր նորէն թագաւորելու համար: Թագաւորը, ուզէ չուզէ, ոչ միայն տեսածը պիտի հասկնայ, այլեւ տեսածի անցեալը եւ ապագան պիտի գիտենայ. թէ չէ՝ զլուբը դուրս կու տայ: Գնդակի, կախազանի սպառնալիքը վերացնելու համար, ուզես չուզես, զիմացնիդ միտքն ու քաղաքները անպակաս պիտի գիտնաս. անոր ոտքի շափը, ձիու սրմբակի շափը եւ անոնց հետքերը պիտի ճանչնաս. անոր ճամբայի իւրաքանչիւր քարը, լուրը, թուփը պիտի գիտնաս. նոյնիսկ թոշուների ճուղքը պիտի գիտնաս, որ թակարդէն դուրս թուխ եւ գիմացնիդ թակարդի մէջ՝ ձգես: Մի խօսքով՝ դժուար մի գործ է, որ եթէ զուտ չհասնես, զլուբիդ վրայ կու տաս:

Արայոյս չեղած, գիշերուան սուրահազակները դուժկանը բերին Մուշէն եւ Գոմերէն, թէ ոտաւոր եւ հեծեալ զորքը ահա կու գայ՝ մեզ բռնելու համար: Շէյխլանի Պետրոսը եւ ընկերները, գոյներնին նետած, աչքերնին լուած, լեղինին պատուած, մեղի կ'ըսէին.

— Օլուխ-չօճուխը մեղք է, գեղին խնայէք: Երկու հոգիով կուտի դուրս մի՛ ելլէք, ազատում չկայ: Ազատումի մէկ ճար միայն կայ. մտէք պահարան եւ Ս. Կարապետ կանչեցէք:

Ես հակած էի այդ խորհուրդին հետեւելու, երբ մինչ այդ հանդիսս եւ լուս մնացած Գեայոյն միջամտեց.

— Պահարան մտնի՞ք, գերեզման մտնի՞ք՝ մէկ հաշիւ է: Դուք եթէ մեզ չմատնէք, ես պիտի մատնեմ ձեզ: Ձեր ամբողջ գիւղը էչ նահատակ կ'ըլլի: Ձէ՞ք տեսներ, որ ես կը հազամ եւ հազս անհար է, որ զսպել կարենամ:

— Հապա է՞նչ ընենք:

— Թէ որ պարոնը հրաման տայ, երկու մատակ իրենց ձագերով ախուհն դուրս հանեցէք, երկու հովիւի ասպալ ալ բերէք մեզի, զոնները գոցեցէք եւ ներս

մտէք, քնէք: Թող մեր ս'եր դնալը ոչ ոք չգիտնայ:

Ինծի կը նայէր: Գիտցայ, որ ծրագիր մը ունէր: Ըսի.

— Ըսածն ըրէք:

Ապանէրը բերին, վրանիս քաշեցինք, երկու զոճու մատակներ իրենց ձագերով տոտիներս ձգեցինք, մենք՝ ետեւէն: Երբ գոնէրը զոցուեցան, մենք դէպի Արածանի գետը ուղղուեցանք: Ջրերն կլած՝ դաշտը քանկած էին եւ, յորձանք դարձած՝ կ'երթային Գուրգուտ, որուն զօղանջները մեզի կը հասնէին արեւածագին:

Գետի ափին իմ գոզը բռնեց: Մով էր մեր առջեւ եւ մէկ ափէն միւսը շէր երեւնար որոշ: Գեայոյ Մանուկը ուրախ էր, կարծես կախազանի չուանը կարած էր, լայն թոքերով կը հազար: Դասնալով ինծի՝ րուս.

— Դու ալ, ես ալ, լողալ չենք գիտեր: Ս. Կարապետ կանչենք եւ այս արեւմէր գետը նետուինք: Ես առջեւէն կ'երթամ, դուն ետեւէս: Նայէ՛, մատակի պոչը ձեռքիդ քայ շփուցես: Այդ որ ըրիք, մնացածը մատակը կ'ընէ: Ձագերու մատին մի՛ մտածեր. անոնք իրենց զըլխուն ճարը կը դռնեն:

Ըսաւ եւ հազուստներով, գլնբերով միասին, զովէլին ճիպտ մը քաշեց եւ գետը ինկան:

Երբ անոնց կուսակներուն մէջ թաղտիլը ահայտ, վախցայ, բայց անոնց հետեւեցայ: Երբ մատակս լողալ սկսաւ, ես ալ անոր պոչը ինծի փրկարար լաստ դարձուցած՝ ապահով էի, որ ինձ մահ չկար: Անդանք գետին մէջ զոյսացած կղզի մը: Գեայոյ զուրս չելուս, ըջեց երկրորդ ճիւղը գետի եւ ուղղուեցաւ դէպի կանաչաւտ կղզի մը: Ես ալ ետեւէն: Արժատէն պոկուած ծառ մը կը լողար մեզի պէս Արածանի վրայ. ան կը շեղէր մեզ. կը վախնայի, որ պիտի խանդարէր իմ լողուորդ մատակին: Բայց իմ մատակը նոյնքան փորձուտու էր, որքան Գեայոյ Մանուկը. պանդաղեցուց լողալը, էր դուռնին տակ առաւ իր ձագը եւ հակառակ հոսանքին սկսաւ լողալ, մինչեւ որ ծառը անցաւ: Երբ ծառը մեզմէ արտջ էր ինկած, մատակս հասաւ մը քաշեց, նստեցաւ իր ձագուկին եւ զնաց տալով՝ գիտ

քաշելով իր ետեւէն:

Մենք կղզիի վրան էինք արդէն: Հոն կանաչ կար, թուփեր եւ գետնի վրայ կը զարկնէր եւ Լրախառագիտութեամբ կը նայինք մատակներուն. կարծես անոնք անշի գեղեցկացած, աւելի սիրելի էին դարձած մեզի:

Ես մտեցայ մատակիս եւ դիտուն, ականջներուն ասիւն ու ծոծրակը կը քերէի, եւ ան կ'ախորժէր: Բայց մեր սիրաբանութիւնը խոնկարեց Գեալջօ Մանուկը: Վատը ժամանակը չէ, — ըսաւ, — թուփին տակ անցիր և Հագուստներդ, զէնքերդ շորքուր: մէկ-մէկ ալ արկըր նայիր. ջու աշերդդ սուր են:

Մեր կղզին Շէյխունէն Լրկու կամ երեք քիլոմէթր հեռու կարող էր լինել: Մտաւկայ արք կանգնած մարդը շոփի (չիւղ) ժը շափ կ'երեւար, իսկ շարժելու ատեն ցախ մըն էր միայն. եթէ նստէր թուփի մէջ պահուէր, աներեւոյթ կը լինէր: Անկէ մեր գոմէջները անպայման կը տեսնուէին, քանի որ անոնք գործէն անտեղեկ՝ անհող դալար խոտերուն վրայ կ'արածէին, իրենց ձագերը պտուկներէն կախուած:

— Ես Հրացանի ծայն չեմ առներ, գու կ'առնե՞ս, — Հարցուց Գեալջօ:

— Չէ, ես բան չեմ յար:

— Է՛հ, փառք Աստուծոյ, ես բան չեմ տեսներ. գու գորք կը տեսնե՞ս Շէյխունի վրայ:

— Ղարազանի կողմէն սեւ ամպի պէս բան մը կը շարժի դէպի Շէյխուն:

Գեալջօ Մանուկը, ձեռքը աչքերուն ամպնովանի բրաւ, դիտեց աւ դիտեց եւ ծիծաղելով ըսաւ.

— Յիմարներ, արեւը երկու մղրախ երկինք է կլամ, նոր կու գան մեզ փրկուու: Եթէ Պետրոսը մեզ չմատնէ, էլ չի պէս պիտի գան դիւղը, ջրու պէս պիտի վերադառնան:

Նայելով գոմէջի մատակներուն, որոնք կաթ կու տային իրենց ձագերուն, շարունակեց.

— Հապճեպ ըրինք, մեղի ու տելիք չվերցուցինք: Ոչինչ, զբա տակէն ալ կ'ըլլինք: Աստուած ողորմած է:

Նայեցաւ գոմէջներուն եւ նորէն շարունակեց.

— Թէ որ գոմէջները մեզմէ փարշու լու լինին իրիկունը, մենք կորսուած ենք: Չաղերը գերի պահենք, որ մեզմէ չփախչին: Գիտե՞ս, այս կղզին երկու ատուր կեանք չի ունենայ, եթէ զետը այսպէս իր խենթութիւնը պահէ: Աստուած ողորմած է, ևս պիտի քնեմ:

Կէսօրին մօտ էր: Գեալջօն, թէ ևս կէս մերկ, բայց կը խոժփար ևս երբեմն կը Հազար ու կը քնանար: Ես ալ կէս մերկ էի: Մեր թրջած շորերը արեւին շէյնք ասոր՝ շտեմնուելու համար: Թուփերու մէջէն կը դիտէի արեւը: Շէյխունի տանիքները կ'երեւաւին բարակ շիւղեր, որոնք կ'ըլլան: Ուրեմ, մարդիկ էին: Անոր չ'պի գետը տանող ճամբան կը սեւանար ևս կամայ-կամայ սեւը կը ցրուէր եւ արկն կ'երեւային ձիւղորներ, կանգ կ'առնէին, կը դիտէին, կը հաւաքուէին, կը ցրուէին: Եւ ինձի կը թուէր, թէ կը տեսնեն գոմէջ մեր գոմշու մատակները: Անշուշտ հեռագիտակ ալ ունէին, մինչ մենք շունչէնք: Կը մտածէի ու աւելի կը պլլուէի թուփերու մէջ:

Արթնցնե՞մ, շարժեցնե՞մ Գեալջօ Մանուկը, կը ժտածէի ևս չէի արթնցներ: Բայց ահա լսեցի Հրացանի պայթոցները, զնդակներ պլլումով անցան:

— Այս բ՛նչ ձայներ են, — գրուելը բարձրացնելով՝ Հարցուց Գեալջօ:

— Տեղէն շարժիս, մեղ կը դիտեն,

— բա՛ի, — գոմէջները տեսան, թող մեզ տեսնեն:

Գեալջօն, պահ մը դիտելէ ետքը, ըսաւ.

— Եթէ միւրէն իջնեն եւ գետը գարնեն, այդ նշան է, որ այդ շէյխունցիք մեր տեղը մասնէր են: Միտե՞ք պահէ, որ «Հայիֆ» (Վրէժ) առնենք... Հայցի, Հայցի (Նայէ՛, Նայէ՛), միւրէն քանի մը հող գի իջան: Ես մեր պապու դուրս... արի՛ք. կը տեսնենք: Հայցի, պարոն, թէ որ մեզ կ'ան, մինչեւ ջուրի ար հասնելը բնաւ չ'կրակինք: Երբ ասկիսրի գլուխը մեզի հասաւ, նոր մտեցք: Ին ծիտ պոչը, որ ջուրն դուրս ցցուած լինի, պէտք չ'է սպաննել: Պէտք է բռնել եւ վրան թռնել: Մեկիւնց, մարդ լինի թէ մի պէտք է մտնել ևս ցարգել:

Երբ Գեալջօ այդ Հաշիւները կ'ընէր...

քանի մը գնդակներ ալ սուբացին, եւ սո-
մէնքէ, ձիերը նստան եւ կարգով ուղղը-
ւեցան այլ կողմ, զէպի Քիւրամէյտան:
Այդ նշան էր, որ մեր տեղը մասնուած
չէր եւ դօրքը գետը պիտի շանցնէր:

— Հէչ բան մ'ալ չկայ, ձի պիտի շու-
նենանք, որ մեր գլխու ճարը տեսնենք,
— ըսաւ եւ աւազի հետ սկսաւ խաղալ:

Չօրքը երկար պոչ կապած, սեւ ու
գանգաւղ վիշապի նման զէպի Քիւրամէյ-
տան կ'երթար: Քանի սն կը ժօտիկնար
այդ զիւղին, եւ կը մտածէի Ամոյի եւ
Քաղոյի մասին եւ կը տանջուէի. ինձ ա-
ղանեցին, կիտումն եղան, այժմս անոնք
պիտի չմեռնին:

— Որը կէտքը կ'երթայ, մեր փորը
բան չէ մտեր: Ուտել չե՞ս ուզեր: Մտա-
կի ձագ մորթենք-ուտանք՝ երախտմո-
տութիւն է: Ձուկ կ'ուզե՞ս ուտել, —
զիւս ըրածի պէս հարցուց Գեալըն:

— Ինչո՞ւ չէ, բայց ո՞ւր է ձուկը:

— Մալուս, ձկնն շատ ի՞նչ կայ այս
լուրերուն մէջը: Միայն թէ ջուրը ցնիտ
է, կուպրի հոտ ունեցող ձկներ կարելի է
որսալ:

Կարծեցի կատակ կ'ընէր Գեալըն,
քանի որ ո՛չ կարթ ունէինք եւ ոչ ալ ուտ-
կան:

— Դու ինձ էն ըսէ, հոտած ձուկ
կ'ուտե՞ս, թէ՞ չես ուտեր:

Երբ եւ ըսի թէ՛՜ «ձուկը ձուկ է, թէ
ուներս՝ ուտենք», Գեալըն շուտ եկաւ
կողեակին շուրջը եւ հանպիստ ոլորտի մը
մէջ ուշադրութեամբ նայեցաւ ջուրերուն:
Թէեւ բան չէր երեւար, բայց իր հրացա-
նը կրակեց ջուրերու մէջ եւ ճերմակ բան
մը երեւաց ու կորսուեցաւ Գեալընի հետ
միասին: Գեալըն մեծ ձուկ մը նետեց ա-
փը:

Ես զարմացած էի, կը կարծէի, թէ
գնդակն էր սպաններ ձուկը: Երբ կ'որո-
նէի վէրքին տեղը, Գեալըն վրաս ծիծա-
ղելով՝ ըսաւ.

— Մակ մի՛ որոնիր, այս ձուկը վա-
խէն է մեռած: Առանց գնդակը ուտելու,
լեղին պատուեր է եւ մեղի կերակուր ե-
ղեր:

Մաքրեցինք, չոր ցախեր փողեցինք,
կրակի վրայ խորովեցինք, եւ Գեալըն
հրամայեց ինձի՛ ըսելով.

— Թէ կրնաս՝ կեր. ես տխրեալ
չունիմ:

Կուր գետի մեր լակիօ ձկուն նման
բան մըն էր, զոր ես տխրեալով կերայ:
Գեալը Մանուկը չկերաւ եւ զարմացած
էր, որ չէի փութիր: Ան նախապաշարուած
էր եւ պզտոր ջուրերու ձուկ բերանը չէյ-
տաներ:

— Մօ, մէկ փորձիր, կեր, ձուկը
ձուկ է, — կ'աշատէի համարէլ:

Բայց ան դիտել կը շարժէր եւ կ'ը-
սէր.

— Չէ, ամէն ձուկ միեւնոյնը չէ.
մուրտար ջուրի ձուկը մուրտար է, վճիւս
ջուրի ձուկը մարդու ուտելիք է: Դու
չե՞ս գիտեր ձկներու կեանքը. ամէն ձուկ
իր տեսակի ջուրի մէջ կ'ապրի:

Եւ երբ ես կը կշտանայի, ան ինձի
կը պատմէր ձկներու կեանքի մասին.

«Ներկու տեսակի ջուր կայ, — կ'ը-
սէր, — մէկը սեւ է, այս ջուրերու նման,
տիղմ, զիւկի եւ բոյներու փտածութիւն-
ներէ կազմուած, միւրը՝ ճերմակ, անա-
պական, որ կու գայ դուրս աղբիւրներէն
եւ քարանձաւներէն՝ Ինձեկնեայ կամ
Մուխտարի ջուրերու նման: Ան ջուրերը
հարամ են, պիղծ են. ճերմակ ջուրերը
սուրբ են եւ կեանք: Ան ջուրերու մէջ
սասանաներ կ'ապրին, որոնց հանելու
համար պէտք է ունենալ կաւէ կուլաներ
կամ կրակէն պիտի անցկացնել: Ճերմակ
ջուրին մէջ կ'ապրին երկնքի հրէշտակներ
եւ բոլոր սուրբերը:

«Ան ջուրերու տէրը գեւերն են, որ
երբեմն օձի, երբեմն կերածոյ ձկան կեր-
պարանքով կ'երեւան: Անոնք կ'ատեն ճեր-
մակ ջուրերը: Ճերմակ ջուրերու բնակիչ-
ները նոյնպէս ձկներ են: Բայց անոնց վը-
րայ նշաններ կան, կարմիր փուլեր, իսկ
բոլորի գլխին մէջ Քրիստոսի խաչը, որ
ճառագայթաձեւ է: Այս ձկները կ'ապ-
րին, որ կերակուր դառնան յաւերժա-
հարսներուն, որոնց պահպան է զբաժ
Ատուած՝ ճերմակ ջուրերու մաքրու-
թեանը հսկելու եւ անսպաս զարմանելու
համար:

«Գեւերը չեն սիրեր անսպակ, մա-
քուր ջուրերը, որովհետեւ անոնց մէջ ի-
րենք կը սատկին: Անոնք կը սիրեն պըշ-
տուր, կեղտոտ ջուրերը, որոնց մէջ միայն

կարող են ապրիլ: Եւ ատոր համար օր ու զիւեր ամէն կրկնանք կը ժողվեն եւ կը թափեն գետերու մէջ եւ միաժամանակ յաճախ կը բարձրանան երկինք, սեւ ամպ կը կազմեն եւ վիշապի նման կը նստին լեռներու վրայ, որ ծծեն, շորցնեն սուրբ ազդիւրներու ակունքները եւ որ անոնց սուրբ, անմահական ջուրերը չհասնին սեւ գետերուն, քանի որ ի՞նչքան հասնին, ա՛յնքան գետեր կը սատկին պղտոր գետե-
րու մէջ»:

Ի՞մ հարցումին, թէ ինչո՞ւ դեւերը մէկ անգամէն չեն շորցնէր լեռան ազ-
րիւրները եւ անոնց անմահական, սուրբ
գետերը, Գեալչոն ոգեւորուած բացատ-
րեց.

«Քու խելքդ ո՛ւր է: Կը կարծես, թէ պարա՞պ տեղն է, որ վճիտ ջուրերու մէջ — ազրիւր, լիճ կամ գետ — կը բնակին հուրիներ եւ կարմիր ձկներ: Անոնք իրք զօրք կը ծառայեն: Հուրիները Աստուծոյ հարսներն են, ոտքեր չունին, մէջքերն են ցած ձուկ են. եւ մէջքերուն վրայ երկու մեծ՝ ազանու թեւեր ունին: Ուզեն՝ կը լողան, ուզեն՝ կը թռնին: Մէջքերէն վեր կնկա մարմին ունին, ճերմակ, ճերմակ, ձիւնէն ճերմակ: Անոնց մէջ արու չկայ, բոլորն ալ նոսն պէս ցցուած ստինքներ ունին, ստինքներուն ծայրերը կարմիր խալ ունին: Հալանի թեւեր ունին եւ թե-
ւերուն՝ ոսկի ապարանջան, մարճանով, պէս-պէս քարերով զարդարուած: Կարա-
պի վեղ ունին, մարզարիտի ժապաւէն-
ներով փաթաթուած: Վզերէն կախուած է ակունքներով պողմազը, խկ պողմազը կը վերջանայ անգին ազամանդի խաչով մը, որ երկու ծծուրներու միջև արշալոյս-
սի շափ լոյս կու տայ: Գլուխները ծած-
կուած են երկար, շատ երկար ալիքի նը-
ման ծամերով, որոնք մինչեւ իրենց պո-
ւը կը հասնի: Մազերուն գոյնը արեւի լոյսի հետ ամէն գոյն կ'առնէ: Անոնց ղէմքերը ոչ բարութիւն, ոչ չարութիւն ունին. ինչ ըսեմ քեզի, անօթի ծծկերին կաթ սուտղ մայրիկի ժպիտն ունին իրենց երեսին, ցան ու գորովը իրար խառնը-
ւած»:

— Կ'ներևայ, Գեալչո, զու տեսած եւ մօտէն ծանօթ ես այդ հուրիներուն, —
մէջ ինկայ ես:

— Անոնց տեսիլը, մօտիկ լինելը կատա՞կ կը կարծես, — Գեալչոն պա-
տասխանեց, — ամէն մարդու չէ տրուած Աստուծոյ հարսներուն տեսիլը: Բայց տեսնողները շա՛տ, տեղն ու տեղին ինծի պատմած են, առանց սուտերու: Այս աղ-
տոա ջուրերուն մէջ անոնք չկան, բայց այնտեղ՝ Նեմրու թի դիտուն տաք ու պաղ ջուրերուն մէջ կան: Ահա այն գիժացի լեռներու՝ Կուրթիկի, Կորեկաղբիւրի, Մարաթուկի Մարութայ ջուրերուն մէջ կամ անոնց ափին անոնք միշտ կան: Մի-
այն թէ՛ ո՛չ դեւերը եւ ոչ ալ անարդար ու չար մարդիկ չեն կրնար տեսնել: Ա-
նոնք, որ արդար են, բայց կատարեալ մարդ չեն, մշուշի մէջէն, որ քողի պէս կը ծածկէ վաղ առաւօտեան լեռներուն ջուրերը, կրնան տեսնել յաւերժահարա-
ները, որոնք կը ոսնտրեն իրենց մազերը եւ արեւին կը շորցնեն: Բայց ո՛րքան կը մօտիկնան, ա՛յնքան անոնք կը հեռանան եւ մշուշի մէջ կը կորչին աչքերէն: Ա-
նոնք, որ արդար են կատարեալ կերպով, անոնցմէ չեն վախշէր, կը մօտենան, քու լեզուով կը խօսին եւ իրենց սիրածները կ'առնեն—կը տանին իրենց քնակարանները: Անոնց բնակարաններուն դռները խո-
րունկ, վճիտ աղբիւրներն են, որ դեռնի մէջ թողուած լիճերէն կու գան: Լիճե-
րուն առաստաղը, պատերը ամբողջ ա-
դամանդէ, բիւրեղէ են շինուած: Կերտնի նման մարմար քարերէ սեւեր կան այն-
տեղ, եւ լոյսը, որ կը վառի, երկնքի սատղերուն նման կը լուսաւորէ ամբողջ շրջակայքը: Ու այդ լոյսերուն մէջ կ'եր-
գեն, կ'ուրախանան յաւերժահարսները: Եւ ամէն մէկը իր պալատն ունի: Իրենց սիրածը 40 օր, 40 գիշեր իրենց հետ կը պահեն եւ 40 օրէն վերջ հելըը հաւքի թե-
ւեր կ'առնէ ու երկինք կը բարձրանայ, այլեւս մեղաւոր երկիր չի վերադառնար: Բայց թէ ո՛ւր կը թռնի, դեռ եւս մարդ արարածը չէ հասկցած:

Գեալչո Մանուկը կը պատմէր այն-
պիսի՝ խոր հաւատքով, որ ես ակամայ պէտք է հաւատայի: Անոր նկարագրածը զեղեցիկ էր, պարզ եւ դրաւիչ ա՛յնքան, որ զիս յափշտակեց: Թէեւ խելքիս շատ չէր պառկեր, բայց սուտ չէի համարեր, որովհետեւ անոնք Գեալչոյին հաւատաքն

էին: Հաւատքը գոռոց սխալ էր, բայց ան սուտ չէր կրնար լինել, քանի որ հաւատք էր:

Երբ Գեալշոն շունչ կ'առնէր պատմելէն, ըստ.

— Գեալշո, 40 օր, 40 դիշեր չէ, թող 40 վարկեան ես հիւր լինէի այդ յաւերժահարմերին:

Ան գլուխը տարու ու բերու եւ յուսահատօրէն բաւ.

— Ա՛հ, պարոն, չէ, մենք հողեղէն ենք, անոնք ջրեղէն: Ամէն մէկը՝ բախտ չունի լինել Ծովինար, լինել Սանասար կամ նոյնիսկ Բաղդասար, լինել Քուրկիկ Զալալին, թուր Կէճակին, որ ջրեղէն էին: Մենք հողեղէն ենք, անարժան ենք:

Երբ ես կը խորհրդածէի Գեալշոյի հաւատքի մասին, որ իրմէ չէր զար, այլ իր դարաւոր անցեալէն, ան զիս եւս իրեն պէտ յուսալքուած կարծեց եւ, զիս միտթարելու համար, շարունակեց.

— Պարոն, ի՞նչ հոգս կ'ընես: Ըսածներս կը վերաբերին ջուրի թագաւորութեան, ուր սենն ու ճերմակը միշտ իրար կը զարնեն: Սեւին թագաւորը Վիշապն է, ճերմակինը՝ Հուրին. ամէն մէկը իր բանակն ունի, որ ջուրերու մէջ կ'ապրի: Ով կ'ապրի սեւ ու պղտոր ջուրերուն մէջ՝ կ'ամ գեւ է, կամ անոր գործակից: Ով կ'ապրի ճերմակ ու վճիտ ջուրերուն մէջ, ան սուրբ է եւ Աստուծոյ կողմնակից: Այս երկուսը իրարու հետ միեւնոյն ջուրին մէջ չեն կրնար ապրի: Սեւ ջուրին մէջ ինոզը կամ պիտի մեռնի կամ գիւլահարի: Ծերմակ ջուրին մէջ ինոզը կամ պիտի սասիկ կամ պիտի մկրտուի ու մաքրուի:

«Այս կռուի մէջ մենք բաժին չունինք, քանի որ մենք ջրեղէն չենք, այլ՝ հողեղէն: Մեր բաժինը միայն մէկ բան է. ով որ Աստուծոյ կողմն է, մուրտայր ջուրերէն եւ անոր բնակիչներէն հետու պէտք է մնայ, որ չպղծուի, եւ ցամաք ելածին պէտք է սատկեցնէ: Իսկ ճերմակ ջուրերուն մօտիկ պէտք է ապրի եւ վայելի:

«Այդ նոյնը երկնքի թռչող արարածներուն մէջն է: Հոն ալ երկու բանակ կայ, իրարու թշնամի: Անոնց կռիւն այ մեզի չի վերաբերի: Մեզի կը վերաբերի

հողի վրայ եղած կռիւը, քանի որ մենք հողեղէն ենք: Հողի վրայ կռիւը ամէնէն զօռն է: Հոս ո՛չ միայն կենդանիները, ձկնորու նման, բաժնուած են երկու զանրու եւ իրարու միս կ'ուտեն, այլևս մարդիկ ալ բաժնուած են երկու տեսակի. մէկ կողմը պիղծերն են, միւս կողմը՝ օրհնեալները: Ով առանց խաչի կը մտնի մղկիթ՝ գիտցիր, որ պիղծ է: Ով հեղօրէն կը մտնի եկեղեցի՝ մի՛ կարծեր, որ ամէնքն ալ օրհնեալ են: Ով թլփատուած է, գիտցիր, որ ան հակառակ բանակէն է: Ով Աղամէն սկսած անարատ է, մի՛ կարծեր, որ ան քու արիւնէն է: Քու հարազատ եղբայրդ, որ մէկ հօրմէ, մէկ մօրմէ ծնուած է, մի՛ հաւատար, որ քու հարազատ ազգէն է: Գիտե՛ս, երբ դուքըրը կ'ըլլին մէկուն, ան կը զիսահարի եւ այլևս թշնամի է քեզի ու պիղծ: Կուռէ, որ քան կրնաս: Մի՛նչև վերջին դատաստանը կ'ընեն անպակաս է: Թէ որ կուռէն յոգնեցար, չլինի մնաս կռուի դաշտը: Քաշուի աշխարհէն, որ ո՛չ լաւ տեսնես եւ ոչ վատը: Ձեռնպահ մնալը դուքըրուն յաղթանակն է, դու ալ անոնց հետ պիղծ կը դառնաս»:

— Գեալշո, — հարցուցի տարակուսանքով, — երբ հարազատ եղբայրդ ալ կրնայ դիւահարիլ, այդ պարագային բացի քեզմէ եւ ինձմէ օրհնեալ չի մնայ, ամէնքն ալ պիղծ են: Իսկ միւս կողմէ, ո՞րն է միջոցը տարբերելու օրհնեալը պիղծէն:

— Ատկէ ալ դիւրին միջոց, — պատասխանեց Գեալշոն, — քու արիւնակաթ սուրը ճօճացուր լաւին եւ վատին դուրսներուն: Ան, որ չաքեցու ոտքերիդ առաջ, քու գարշապարը համբուրելով, իր հաւատարմութեան, սիրոյ հաւաստիքներ տուաւ Աղամի եւ Սլալի նման, բայց մասնութիւններ սկսաւ, սուտը ճիշդի տեղ խօսեցաւ, հասկցիր, որ այդպիսին քեզի բնկեր չէ, այլ՝ թշնամի: Վստիկոտները դուքըրու դաշնակիցներն են: Ան, որ չչոքեց եւ կանգնած մնաց, գլուխը բարձր, խօսքը առանց դողալու, իր աչքերը արեգակ դառած, եւ քեզի կանչեց. — «Մուրդ վար իջեցուր: Եթէ մի՛նչեւ օրս քեզի բարեկամ էի, այս օրուրնէ քեզի թշնամի եմ», սուրը իջեցուր եւ հասկը-

ցիր, որ ան քու եղբայրդ, անդամաճան թարեկամդ է, քանի որ քաջ է: Գիտցիր, որ դուք երբ չես կրցած գայթակղեցնել քաջերը: Գրանք օրհնեալներն են, որոնց Հակասկութիւնը աւելի լաւ է, քան սողացողներուն բարեկամութիւնը:

«Առաջին Հերթին, շղոթորթները մարդ մի՛ համարիր, այլ համարիր հնազանդուած գայլերու վրահակ: Իսկ երբ տեսնեն քու թուլութիւնդ, առաջինը անոնք կ'ուտեն քու գլուխը»:

«Առջի մնացողները, քաջերը, ինչ որ քու աչքն անտես քու հանդէպ, մարդ եւ օրհնեալ համարիր: Միայն թէ՛ անոնց բարեկամութիւնը ունենալէն առաջ, գործ մը եւս կատարիր: Կողով մը լիքը սակի վերջուր: Եւստի մէջ դուք որուն արիւնը եւ մարմինն է թաքնուած: Այդ ոտկին բուսերով լիքը շաղիք կանդանանու գլխուն: Ով որ կուսնայ՝ ժողովելու համար, քու սեւ ցանկին մէջ անցուր: Ով որ կանգնած մնայ եւ քու սոկին չվերցընէ, անոր մէջ բարեկամ եւ ընկեր փրկուողը»:

Ես կ'ուզէի նոր հարցումներ ընել, կրք Գեալուն ոտքի թուաւ:

— Հայցի, հայցի, մենք թօսքի բըններունք, դո՞մէշները իրենց ձագերով մեզ թորկեցին, գետի կէսն անցան: Մեր գործը վատացաւ: Եթէ չհասկնան չէյիւանցիք եւ մեզ քնալսակներ չճամբեն, մենք գատապարտուած ենք այս Գուրբուն մէջ խեղդուելու: Այս կողմն մինչեւ առաւօտ դժուար թէ դիմանայ:

Մինչ ես յուսահատ կը դիտէի լողացող մատակներուն սեւ մէջքերը եւ ջուրէն դուրս ցցուած մեծ կոտորները, Գեալուն, ցանցի մէջ բռնուած վագրի նըման, արագօրէն կը շրջէր կողքակի լուրջը: Յանկարծ դիւտ ըրածի նման ժօտեցաւ ինձի:

— Մեղքը մերն է, պատիժը պէտք է քաշենք: Ես պիտի ձուկը տուի, դու ալ կերար: Ես մատկու ձագերը թողի, խօսքով բռնուայ: Թէ որ դրսէն օգնութիւն չլինի, մեր հազուամեբէն չուան կը շինենք, մէկս մէջքին կը կապէ չուանի ծայրը եւ գետը կ'իջնայ, մինչեւ որ սուքերուն տակ հողը գտնի: Ա՛խ, ինչո՞ւ լուրջալ չենք սորված: Հոգս մի՛ ընէր, Աստ-

ւած մեծ է: Համբերենք, մինչեւ որ այս կողմն դուքն ուտուի:

Այս տարումները, որ կ'աշխատիմ ձեզի փոխանցել, այնքա՞ն իմ մէջ խորունկ հետքեր են ձգած, որ Գեալունցի աչքերով շատ անգամ աշխարհը կը տեսնեմ եւ ասկէ դժգոհ չեմ: Մթութեան մէջ ան ճրագ է, թէ՛ կուզ ճրագի լոյսը աղօտ իսկ լինի:

Երկու աւուր մէջ երկու մահուանէ ազատած էի, մին թաղոյնի, միւրը Գեալունցի միջոցով: Դարձայ Գեալունցի իւր կարծիքը տունելու:

— Գեալուն, Գալուստի ապրիլ չի լինի. երկու անգամ յարութիւն առանք, դնանք լեռները, Բրիտոքի Յից Գարեբի պուրակներու մեր ճօճեր գտնիք:

— Մարտիկ թող երբորդ փորձանքն ազատէ. լաւ կ'ասես, զնանք:

Կողմն դեռ կու չլայցած գետի ալիքներուն, քալակները հասան եւ մեզ հաստատուն ալ հանեցին: Երբ ես ու Գեալուն միմեկ մնացիք, առանց ուղեկցի դէպի լեռները ուղղուեցանք եւ ժամանակէն առաջ Բրիտոքի Յից Գարեբ հասանք. դեռ մեր ճօճեր չէին հաւաքուած: Երկու օրէն Գորիւնն ալ եկաւ եւ մենք իջանք Փիթար եւ այնտեղէն Մշոյ ընկերներու հետ պայմանաւորուեցանք մեր տեսակցութեան համար: Լուր կու տանք քաղաք, որ մեզի հանդիպին լեռան լանջին ինկած աւերակ հնամանի մէջ:



Փետայիներս կը ժողվուրէնք տուան՝ ձին. ի՞նչ պիտի ընենք: Ես իմ մէջ վըճարած եմ ալիւս, իջնել լեռներէն, գէնքերը վար դնել եւ լծուել աշխատանքի: Յայտնեցի միտքս կցկտուր ճառով, կարծես դամբանական խօսքի. սովորական քաղքենիի համար հեշտ էր ուրախանալ եւ անձնատուր լինել սահմանադրութեան հանոյթին, բայց ֆետայիի ոգին տարբեր էր: Մերունի Իլինձորի կրպոն, Գեալուն Մանուկը, որուն ֆետայական հնութիւնը կու պար Արարոյն օրերէն, ինկած ալիքերը պսպղացնելով եւ լուրհան դէժք առնելով, կ'ազգեսէին:

«Պարոն, ջան պարոն, ախոս է ջա-

Հեղինակները. թուրքի Փլուզլուտող շատ ենք անցուցած. արի դու լսէ, մի՛ հաւատ ընծայէ, վալլա՛ չու ջանդակ յինի թէ չլինի ի վերջոյ Հիւքմաթի դրանը պիտի կախուի»: Ձրոն եւ Մանուկը յուզուած. — «Ճձ տարի է Ֆետային թասլիմ չէ եղած. մենք ուխտ ենք արած զէնքով մեռնելու. օսմանցուն ի՛նչ խղճով է, որ զէնքըդ կու տաս»:

Երբ ես ու Կորիւն կը ջանայինք հասկըցնելու, թէ օսմանցիին զէնք տայու ինչդիր չկայ, այլ՝ զէնքով միտսին պիտի ներկայանանք, անոնք կը յարէին. «Ի՛է, զուք ասացէք, թէ կ'երթաք օսմանցու Հիւքմաթին համարիէ կը դուրիք»: — «Ճէ, հայու հիւքմաթ չլինի, հայու զօրք չլինի, Ֆետայիներու օսմանցուն պիտի չըհաւատանք. իրանց հօրիաք, սահմանագրութիւն իրանց զլուխ թող ուտի»:

Բայց մեծամասնութիւնը համաձայն գտնուեցաւ, որ այլեւս կարելի չէր անտեսել օտեղծուած նոր կացութիւնը: Մըտածեցի՝ քանի որ ընկերներու մէջ անհամաձայնութիւն կայ, աւելի լաւ է բոլորին բաւարարեմ եւ ինքս ալ իմ համոզումս իրազորեմ. ուտի ըսի. — «Գեւալըն լաւ կ'առէ, օսմանցին կարող է թահարը լարել. զուք արժանն էք յեղափոխութեան, ուտի՛ Մասնոյ Ֆետայիք զաշտեցէք զէպի Սառուն, թէ որ ինձ կախեն Հիւքմաթի դուռն, զուք այնպէս արէք՝ ինչպէս արած էք: Մանուկն էլ կ'առնէ մի խումբ դաշտեցիներէ, կը շրջի զիւզերը եւ առաջուան նման մեր դործը կը շարունակուի: Կորիւնն էլ, քանի որ համաձայն է սահմանադրութեան, խումբով կը մտնի Մուշ, բայց անձնատուր չի լինի. ես կ'երթամ կը ներկայանամ կոռուվարութեան, թէ որ ինձ կախցին, թող Կորիւնը դայ ազատելու կամ մեռնելու ջանդակիս վըրայ, թէ որ չկախցին, վերջը կը տեսնենք մեր անելիքը»:

Ասեկա բոլորին ալ բաւարարութիւն կու տար, անշուշտ զիս կախելու վախը չկար, բայց Գեւալը Մանուկը անձնազորարար դեռ կը կրկնէր. «Որ կախուի է, իրարու հետ կախուիք»: Կորիւն եւ ես կը պնդէինք. «Տղայ, հանդիստ մնա, վալլա՛ս բան չկայ. մենք կարող ենք կախել Սալիհ փաշային»: Խեղճ Ֆետայինե-

րը կ'ուզեն հաւատալ մեր խօսքերուն, բայց հաւատալին չի դար: Կը բաժնըւինք երեք խումբերու, կը համարուիք, ոմանք կ'արտատունն յուզուէն. մօտ 60 հոգի, երկու խումբով, մին Սասուն, միւրը Դաշտ գացին: Ես ու Կորիւն մնացինք Յ հողիով:



Այս իմ Հին ընկերները եկած էին հասկնալու, ի՛նչ կայ չկայ աշխարհում, իրենք լեռներու մէջ կորուած են: Ի՛նչ է այս «Հուրիաթը»: Ես ծածծեցի, ծածծըմեցի, ետքը խոստովանեցայ, որ բան չեմ հասկնար: Անոնք իրարու երես նայեցան եւ ըսին, որ իրենք ալ բան չեն հասկնար:

Ուրիշ շատ ու շատ բաներու մասին խօսեցանք: Անոնք ինձմէ յուսախաբ՝ եզրակացութեան եկան եւ ինձի պարզ ըսին. — «Կը հայնամ (կը հայիմ) Գարոն, զու այնպէս չէիր». «Հուրիաթը» որ չկար, չու ամէն մի խօսք վերէն վար ընկած մի կարծիր խնձոր. «Հուրիաթը» եկաւ, դուն ալ մեզի պէս... Կրպէի տունը չու տունն չէն է, այս ի՛նչ անկանոնութիւն է, այս փոքրիկ ոնենակ, վարաիքն ու շապիկ խառնուած, աման չամանին հետը. իսկ տանդ պաշար մի աքլորի բեռան հաւատար: Հեղինայ վարդանի տունը, որ վառեցինք անցեալները, նորէն մի ուղտի շարաւան չի կրնար վերցնել: Առաջ ամբողջ աշխարհը քեզմէ կը դողար եւ չու տուջը լալա էր կանգնած, այժմ դուն ելեր, մեզի սեղան կը պատրաստես. այս անվայել է քեզի: Ինչպէս որ առաջ քեզի բեցիք, կամ կու դառ մեր սարեր եւ մենք քեզի լալա ինչպէս չուակիկ, Ձաղ լաթիներ առաջ. չես ուզէ այդ, կ'ըսեն դու ալ տուն ունի՞ս՝ զիմ չու տունը:

Իրականութիւնը կը զնէին աչքերուս առաջ, եւ դժուարիս կու դար, թէկուզ զիտէի, որ զիս շատ սիրելին է, որ այդպէս կ'ըսեն. թարսի պէս, լազուերի մէջ ալ նաթր պակասած եւ դուրը հոտ կու տար. ես հափուեցիմ հանցի եւ մէջը փաթաթուելով առաջուայ նման պատկեցայ մի թախիբ վրայ եւ իմ անկողինը անոնց հրամայեցի, ըսելով. «Ձեր տարիք անցած

է, դուք տեղադրուեցէք՝ անոնք ալ բացին անկողինը եւ իրարու ծոց պսական. հանդիպեցին եւ ծխող լապտերը մարեցինք։
 — Գեաւչօ ջան, Գեաւչօ, դու հին հեքիաթներ գիտես, արի մի հեքիաթ պատմիր՝ անուշ-անուշ քնանանք։

Գեաւչուն երկու ղիւր հազաց եւ սկըսաւ. այս պատմութիւնը ինծի համար վճռական դարձաւ, ուստի դուք ալ ուշադիր լսեցէք.—

Ժամանակին մի մարդ կար Չաման (Ժամանակ) անունով. ան կ'ըսէր, թէ ինքը գիտէ, որ իր մայրը մարդ է եղեր եւ իր հայրը՝ արջ, իր պապը՝ ցուլ, իսկ պապի հայրը՝ էշ, պապի պապը՝ ձի, իսկ ընդ պապը՝ կապիկ։ Ձոռի պապի հայրը հայոց թագաւոր եւ կինը հայոց թագուհի։ Չամանը միս չէր ուտեր եւ բոլոր կենդանիներու լեզուն այնպէս կը հասկընար եւ այնպէս անոնց հետ կը խօսէր եւ կը հասկցնէր, որ զպրոցի վարժապետները չեն կրնար հասկցնել իրենց աշակերտներուն։ Ան բոլորը կը սիրէր եւ անոնց ընկերն էր։

Չամանը շատ կը սիրէին կենդանիները եւ իր ետեւէն կու գային։ Ան ընտրեց անոնցմէ մէկ Հալպու ճերմակ էշ, մէկ Արարատանու ուղտ, մէկ Ջեզիրէի ջորի, մէկ Սասնոյ գաճառ, մէկ Խնուար տոռի ձի, մէկ կիթան կով, մէկ մատակ գովէշ, մէկ Հաքարու շուռ այծ, մէկ Մանազկերտի մաքի. միւսներուն հասկցուց, որ ես պատուել եմ, ժամանակ շունիմ ձեզմով պրապելու, գացէք ձեր տէրերի մօտը կամ ձեր զխուռ ճարը տեսէք։ Գացին եւ ինքը շատ սիրով կ'ապրէր իր ընտրած այդ կենդանիներու հետ, կործեա անոնց հետ թուր-եղբայր ըլլար։ Անոնք ալ շատ կը սիրէին Չամանը, բայց քիչ մը վշտացած էին, որովհետեւ Հալպու ճերմակ էշը աւելի կը սիրէր։

Չաման ճերմակ էր։ Այնան պատասաութիւն աւտաւ իր կենդանիներուն համար, որ ձմեռը ուտեն։ Իր բնկեր կենդանիները իրենց անունով մէկիկ-մէկիկ կանչեց եւ իրենց լեզուով հասկցուց.— «Այսքան տարի է իրարու հետ լաւ թէ դէշ այրեցանք։ Այժմ ժամանակն է, որ դուք սովորիք ձեր գլուխը ինքներդ պահել. ես այս ձմեռ չեմ կրնար ձեզի առաւտ, կէ-

սօր, իրիկուն կերակուր բաժնել։ Ձեր ուտելիքը այս ձմեռուան համար, իր բռքանչիւրիդ իր շափովը պատրաստած եմ, ուշիւր լինի, թէ հատիկ, դարման լինի, թէ խոտ ու փուշ, ամէն ինչ իր կարգին։ Բեռներ կտպած եմ, իւրաքանչիւրը թող իր բաժինը շաղկէ եւ տանի իր ախոռը, ուր ջուրն ալ պատրաստ է։ Այժմ իմ պատուէրն է՝ ազատ շիինել եւ ամէն մէկը իր օրուան բաժինը ինայոպութեամբ ուտէ եւ խոզի պէս, մէկ անգամէն շուտէ։ Երբ այդպէս ընէք, դարուն կը հասնիք. երբ փճացնէք եւ մէկ անգամէն ուտէք, կը ստոկիք։ Իրարմէ չգողնաք։ Որ իրար զրկէք, ձեր հողին օճին մէջ կ'երթայ եւ դուք անոնց պէս հող ուտելու կը դատապարտուիք։ Դեհ, բեռներդ վերցուցէք, ես կ'օգնեմ ձեզի, ձեր ախոռները դացէք. ձիւնը բռնել է գետին եւ մինչեւ դարուն իմ երեսս պիտի չտեսնէք»։ Բոլորին դիմաց իր Հալպու ճերմակ էշուն աչքերը համբուրեց եւ դացին։

Կանչեց իր շունը, որ Սասնոյ աշխարհէն էր եւ ըսաւ.— «Քեզի եւ ինծի ձմեռուայ պաշար չպատրաստեցի, Աստուած ողորմած է, թէ միւսները ողջ լինին եւ առողջ, անոնց կաթէն, պաշարէն մէկ-մէկ բուռ ձեզի բաւ է։ Քու պարտքն է, որ ախոռէն դուրս չելլես եւ նայիս, որ գողութիւն, թալան չպատահի. թէ որ պատահի՝ տնօթի կը մնան խեղճ հայրանները եւ կը սատկին, մենք ալ կը մեռնինք»։

Շունն ըսաւ. «Հաւ, իմ աչքի վրայ», բայց սուտ թօփեցաւ եւ Չաման այդ սուտը չհասկցաւ։ Շունը կը նախանձէր, որ Չամանը Հալպու էշը իրմէ աւելի կը սիրէր, թէ եւ ինքն ամէնէն հաւատարիմն էր Չամանին եւ բոլորի պաշտպանը։

Գնաց շունը իր գանդատն ըրաւ ջուրիին։ Ձորին ըսաւ. «Ճիշդ է ըսածդ, ես եմ ամէնքէն շատ բռն կրողը, բայց Չամանը էլը աւելի կը սիրէ, քան թէ զիս, անոր պաշարը, ձայն մի հաներ, ես թալաններ եմ»։

Ձորին եւ շունը դացին եւ ըսին կովին, գոմէշին, այծին, ոչխարին։ «Դուք էք կաթ տուողը, զիս եւ Չամանը պահողը, արի տես, որ իշու պատիւ աւելի մեծ է Չամանի համար, քան թէ ձերը։ Արիք

դուք կերէք իշու պաշարը: «Լաւ կ'ըսէք», ըսին:

Գոտքին ամէնքը ուղտի մօտ եւ ըսին. «Ի՞նչ ամէնքէս բարձրն ես, ամէնքէս հետու կը տեսնես. դուն առաջին չես երթար Չամանէն յետոյ, այլ՝ այդ պղտիկ իշու ետեւէն. արի, այդ իշու պաշարը ուտենք եւ դուն եղիր երկրորդը՝ Չամանէն յետոյ»:

Ուղտը նայեցաւ, նայեցաւ եւ պոռոչները իրարու գարնելով ըսաւ. «Իմ պաշարը ինծի բաւ է, ես ինչո՞ւ ուրիշն ուտեցածին աչք տնկեմ եւ անոր արունքին տէր դառնամ»:

Ականջ չկատեցին ուղտին եւ ամէնքը միտքին դացին եւ իշու պաշարը մէկ տն- զամէն կերան վերձացուցին: Էլը գոաց, գոաց, բայց Չաման հետու էր, բնաւ չըլուեց: Ծունը ո՛չ արգիւեց եւ ոչ ալ հաղեց եւ իբրեւ անտարբեր՝ նայեցաւ, քանի որ խոտ եւ գարի չէր կրնար ուտել: Քանի մը օրէն էլը անօթի մնաց եւ սատկեցաւ: Երբ էլը սատկեցաւ, ուղտը դուրսը բարձրացուց եւ դոռալով կանչեց. «Աւեր ջաղացներ, այդ ի՞նչ արեղեք, իշու հո- ջին թոռա Ծովաօտը, մտաւ մի յղի դայ- լի փորը. ան դայլ պիտի լինի եւ ուտէ ձեզ»: Ամէնքը վախցան:

Մէկ ժամ շանցած ուղտը ոռնաց. — «Աւեր ջաղացներ, այդ ի՞նչ արեղեք. մեր տէր Չամանը անկողնին մէջ հողին փշեց եւ մեռաւ. տեսէք, անոր հողին դէպի Հալպուե քաղաք կը թռնի, ահա ան մտաւ դոմը, ուր մէկ ճերմակ յղի էլ է կապ- լած, մտաւ անոր փոք եւ իբրեւ էլ պիտի ծնի»:

Գեալլոն իր պատմութիւնով տար- լած նստաւ անկողնին մէջ եւ ըսաւ. «Ես մէկ ջղարան փաթեմ ու ծխեմ, դուք ին- ծի պատասխանէք, թէ շունը եւ ուղտը եւ միւսները որ սատկին, անոնց հողին ո՞ր կենդանիներէր փորի մէջ պիտի մըտ- նեն»:

Այս հարցումին՝ կրպոն պատասխա- նեց իր խոկոցով, ես ալ տնպատասխան թողի, քնացած ձեւացայ:

Գեալլոն յուսահատ, ջղարան չփաթ- թեց եւ փնթփնթաց:

«Աւեր սապոնն ինչ ընէ, խեւը խը- բատն ինչ ընէ. քնացեր են, ես ալ քնա-

նամ»: Ծուռով անոր խոկոցը լսեցի. ես կ'որոնէի իմատը այդ հեքիաթին, զոր գուցէ ինքն էր հնարած:

Սուրճիները ինծի համար էին. մէ- ջը կային կանաչ, անգոյն խմիչքներ. գա- թա, բէօրակ, տապկած հաւ, սուլուկ, ամէն տեսակի ուտելիք, մէկ ամսուան պաշար: Այդ առաւօտ որ էյայ, սեղան պատրաստեք էին իրենք, միտքն կե- բանք:

Երբ հեքիաթը վերջացուցի, Արամն ըսաւ.

— Ձեզեկութիւններ բաւ են. դեհ, սկսէ խօսիլ.

— Լաւ, կ'ուզէք հասկնալ, թէ ինչո՞ւ եմ եկած: Գիտցէք, որ եկած եմ այլեւս բնաւ ու բնաւ վերադառնալու համար: Մեր համար կարգ մը ենթադրութիւններ կրնաք ընել. — յոգնած է, զղուած, դա- տարկուած է, եւ այլն: Ինձ ալ որ հարցը- նեն, շարք մը «արլակատութիւն» (փաս- տաբանութիւն) կրնամ ընել, բայց բոլորն ալ սուտ են: Ծիշդը միայն այն է, որ ես Չամանի նման չեմ ուզեր մեռնիլ, որ յե- տոյ էլ զանոնամ, եւ կամ էլի պէս չեմ ուզեր սատկիլ, որ վերածնունդ իբրեւ դայլ: Միւս կողմէ, ես ալ Գեալլոյի եւ Կրպէի նման ինծի հարց կու տամ, թէ այս «Հուրիաթ» ըսածը ի՞նչ է եւ պա- տասխան չունիմ: Ասով ըսի իմ դասալը- ման բուն պատճառը, որ ամէնքին չեմ ուզեր ընել:

Ի հարկէ, կրնայի հոս չգալ, քանի որ վաճն ու Մուշը, քիչ մը աւելի քիչ մը պակաս նոյն բանն են. գինամթերքի հար- ցըն ալ մի օրամ, զուբարայի նման խըն- գիր է, որ ուղածնուդ պէս կարգադէք: Գայլուս պատճառը երկուքդ տեսնելու հասկնայն էր. ծանր ու թեթեւը կշռեցի եւ պրծայ:

Աղթամարէն այտեղ ճամբան Իշխա- նը իր սիրտը բացաւ, տեսայ, որ անոր մէջ ալ զատարկութիւն է, ինչպէս իմ մէջ եւ այնքան դազազած է, որ նոյնիսկ քեզ կրնայ խածխել: Քեզ ալ տեսայ, դուն ալ մեր միմակին ես, բայց դա քեզ կը խարես եւ խարկանքին ինքզ այ կը հա- լատաս, որ աւելի ցաւալի է: Տեսայ, որ վանեցիք բու ամբողջ քեռը, հողին լա- փած, սուղած են: Ասկէ այն համարման

եկայ, որ դու մեր մէջ ամէնէն դժբախտն ես: Լաւ մտածէ Հալպու իշու վիճակի մտախն:

Ի՞նչ պիտի ընեմ՝ կը հարցնէք: Ընե- լիքս գիտեմ: Նախ կ'երթամ Թիֆլիս, աեռեմ անոնք ի՞նչ կը մտածեն: Եթէ տեսնեմ, որ անոնք ալ շուտը են մեզի պէս, կը գնամ Կարս Պօ թագաւորին մօտ, մի խարտոց կ'առնեմ ու կը խարտեմ վրայէս այս տիտղոսները: Կ'առնեմ իմ խկական անուրը եւ իմ աշխատանքին կ'անցնիմ:

Անոնք կը ծիծաղէին վրաս եւ կ'ը- սէինք:— Վրային Կարս շէս գտնի, երբ գտնես, կը հշտնակէ Սիրիբ անցած կը լի- նիս:

Շատ խօսեցանք Պոլի մտախն եւ ծի- ծաղկեցանք, որ Վթաղաւորն անուան հա- մար այդպէս կը առաւարտէր: Խօսակցու- թիւնները շեղելով գացին Վասպուրական- նէն դուրս եւ աւելի անցաւին կը վերա- բերէին, քան մեր ներկային, որ ամպա- մած էր եւ սպազային, որ անորոշ էր: Մոռացուած ղէպքեր եւ ղէմքեր կը մե- չէինք: Անցեալը լաւ լինի թէ վատ, միշտ հողին կը թեթեւցնէ եւ գուարթ զրու- թիւն կը ստեղծէ: ան դինի է, որ կը հար- բեցնէ:

Յանկարծ՝ բան մը գտածի նման Ա- րամ կանդ առաւ եւ բռաւ:

— Ըլմարիտ, քու Գեալշտն, Կրդոն յու ընկերներ են, որ քեզի ստել են:— Կամ մեզի հետ արի, կամ քու տու գնա՛- քեզ ու ինձ կը սպասէ կամ Չամանի, կամ անոր ճերմակ իշու վախճանը: Բարոյ գու երթաւ, հէջ որ չլինի՝ այս վայրի կ'եւնքէն կ'ազատիս, հէջ որ չլինի՝ հինգ տարիով ես ես դացել, մէկ տարիով քու կորսնցուցածը կը գտնես: Ի՞նչ ղիտնանք, թէ քեզի չի սպասեր փայլուն սպադայ եւ ոչ թէ այս արգէն ծամոն գտած անպր- տող կեանքը: Ձմռանս զիս՝ հոս կը թողնես մէկը, որ նոյնպէս կ'ուզէր քեզի պէս խուսափիլ այս դատապարտուած կեանքէն: Կը զգամ, որ այլևս չեմ կըր- նար դիմանալ:

— Այ մարդ, ատոր ճարր կայ, ինծի պէս ըրէ, միտախն ըլլանք, միտախն նոր կեանք ստեղծենք:

— Այժմ դեռ շուտ է, — պատաս-

խանց Արամ:

Իշխան կը բողոքէր, որ իր մասին չենք մտածեր: Արամ կ'առարկէր:

— Այ աղայ, քեզի ինչ, ի՞նչ դուն ալ Գեալշտի ճերմակ էլը չես: դուն բազ ես, մրաղ ջուր լեցուի՝ չես թրջի, հեղեղ գայ՝ ջուրի երես կը մնաս: Բէկին, աղա- ներին մէջ ընկնիս՝ դու անոնցմէ ես չես մնար: Նրուաների մէջ ընկնիս՝ արդէն ջը- լուտ ես: քու տեղ գտած ես, մնացիր:

— Դու մէկը կտրէ: Չաման բազ չէր պահեր իր հետը:

— Թող Խուբէն խօսի, ի՞նչ լինելու է իմ վիճակը:

Ը, Ի անոր:

— Դուն հաւատարիմ շունն ես, հո- տը դուն պիտի պահես: շանը նման լաւին ալ, վատին ալ հախող ես, քէֆը չեղածին կը պատժես եւ սիրտը կը հոփցնես, բայց թէ բոյորին ալ պէտքական ես, տոանց քու պէտքերը մոռնալու՝ առաջը ես: Դրա համար դուն պիտի մնաս:

Ասիկա չէր սպասեր Իշխան եւ կան- չեց:

— Վայ դուն անպիտան, կը կարծէի՝ ինձ ուղտին հետ պիտի հաճեմտես:

— Ձէ՛, — պատասխանեցի, — Չա- մանի ուղտը քեզի չի յարժարիր, ան կը յարժարի միայն թ՛. Դու թեանին, անոր պէս որոճացող եւ ներսը պահող, անոր պէս արդար ու անայառ: Չամանի մեռ- նելէն յետոյ, ինքն ալ սատկեցաւ եւ հո- տին թռաւ, յղի կնոջ մը փորը մտաւ եւ մարդ ստեղծուեցաւ:

— Իսկ շունը որ սասկաւ, անոր հո- պին ո՞ւր թռաւ:

— Թռաւ հոսաւ Գարկառու Հալից կապանը, հոն գտաւ յղի վայրի այժ մը եւ անոր փորը մտաւ:

— Որ յետոյ դուն ալ գաս որսի եւ ներքեւէն նշա՛ն առնես: դրա համար ինձ այժ չի՛նհղիւր, — կը բարկանար Իշխան: Այսպէս կէս լուրջ, կէս կատակ, Ժա- մերը կ'անցնէին: Ասանց վիճելու եւ բա- ցատրելու, իրար հասկցանք:

Առաւօտուն կանուխ, Վարդանը երե- ւաց, միերբ պատարատու ներս ինկաւ ու- թախացած:

— Դեհ, հայտէ, ելի, մենք ճամբայ ելլենք: ԲՈՒՐԻՆ

Իմացական Հարժուճ

«Մարութայ սորի անգիրքը կարգացի և Մուշեղի կորստեան ցար առաւել խորութեամբ գրօցի: Անկրկնելի հեղինակ էր: Հրուշէի պէտապազ էր»:

ՀՐԱՆՏ ՄԱՔՆԻՍՏԵԱՆ

(«Սովետական Հայաստան», 6 Մայիս 1981)

«Մարութայ սորի անգիրքը մեր մեծ սրձակի յուսաւոր էջերից է: Այս գրքի գլխաւոր հերոսը կարօնն է Մարութայ այլաբանի հանձնիչը»:

ՍԵՐՈ ՌԱԵԶԱՆԵԱՆ

(«Սովետական Հայաստան», 6 Մայիս 1981)



Այս ստորուան Յունուարի թիւը ամբողջութեամբ Մուշեղ Գալաշեանին նուիրելի է: «Բազմից» հեղինակը գրազգեստի յիշատակին ու գրականութեան անդրադարձող երկու-երեք գրութեան ևս յանձնեց ընթերցողին, խոստանալով նոյն ասան յանկեալ մանրամասնութիւններ կազմողով Գալաշեան տոհմատան մասին, Ռուբինը գրում:

Ռուբին իր նատյրներուն մէջ երեսունէ աւելի անգամներ տուած է Գեալաշեան Մանուկի անունը, երբեմն ի միջի այլոց, երբեմն անոր փորձառութիւններէն մէկը յիշելով, երբեմն նատուանի մը մէջ ընդգծելով անոր մէկ արարքին խորհուրդը, իսկ երկու-երեք անգամ ամբողջ էջեր յատկացուցած է ստղանցի անձանին: Գունեղ էջերուն տրուանք զուճարն է երկու նատուաններու, որոնք ճոտաւոր ամբողջութեամբ մը կը թնութալըն ճոտաւորն ասորի բանակալութեան ղէմ կուսած այդ արի ու արդարակիրով հեկային ներքին անձը:

«Բազմից» Ապրիլի համարին մէջ արտադրուած Հայրենի զինուորա Մանուկի թուականի գրութեան իմացանք նաեւ, որ Գեալաշեան Մանուկի որդին, Յովնէ ևս անեցած է մարտական գաստակ մը՝ Կողբի կրկններէն մինչև Սարգսյանցի հերոսամարտը:

Մուշեղ Գալաշեան նոյն ժորը գծով կը կրէր հերոսական ժառանգութիւն մը, զնորդին էր փեթթարայ նշանաւոր Իսրայիլ, զոր «27 քուակամին ախորեցին արպէս կուսակ, արպէս քուրքերի դէմ կանուգ», և որ աջարազայրին մէջ արժեքաւ Հայրենի ատուրը ևս գրողէանին գրչին սակ դարձաւ «Մարութ» արքանն, մէկը իր ամէնէն ուժեղ տիպարներէն:

Չարժանայի է կեանքը ու ինքնակրկնութիւնը: Գեալաշեան Մանուկ, որ կապար պատուաւոր անէր զինքով մեծանելու, անկողնի մուտք մտաւ: Իր որդին՝ Յովնէ, որ արիւնստ զուգարներու մասնակցեցաւ, մեռաւ դարձաւ անկողնոյ մէջ, իսկ անոնց թոյն ու սրբի Մուշեղ Գալաշեան, որ թնա պատանա շուտէր զինքով մեծանելու, կեանքին բաժնակցաւ զինքն անկեմք արկածով մը: Մեն կայր ու սրբի Հայրենիքին ստեղծելով որ ունէին, իջրնային, քաղութեան իրենց բովանդակ մթերքը ու բազումներուն յորձը, միւլ անոնց թոյն ու սրբին հազի կրցաւ իր կարիւրութիւններուն կէտը սալ, ախտ'ս...

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԵՐՈՍԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ
(Հատուած)

«Կռունկ» ժողովածուն արձակագրի առաջին գիրքն էր, որ ամփոփում է ՎՋՐԻ Միրոնն եւ Վեամանի նամարդաները՝ վիպականները՝ ներքին հոսանքի տեսակէտից մէկը միւսին լրացնող գործեր: Կռունկը սոսկ թուում չէ մեզ համար, այլ աշխարհահայեցողութիւն, ժողովրդապահան ճակատագրի մետաֆոր, տեղատւութեան եւ յարատեւութեան խորհրդանիշ: Սպանուած հարազատների ուրուականներն ու կորցրած եղբրքի պատկերները երբեք չեն լքում Միրոնին: Վիպական աչքի է ընկնում սիւստային ինքնատիպ կառուցումը, պատուամային տարրերի գունազդեցութեամբ: Արեան ժղձաւանջի միջով անցած Միրոնն իր Յարութի որդուն պատերազմ ճամբելիս խորհուրդ է տալիս.

— Յարութ... Աշխարհ, հոգ ու ջրից անուշ բամ շկայ: Մարդու ուժ հոգի մէջ է: Գամի հոգ չեմ խլէ սուաց տակէն, մարդ անպարտ է, բէկուզ գարկլւփ, անպարտ է, խլեցին՝ գերի է, գառ:

Հոգեբանական — քաղաքական իմաստով նորութիւն է նաեւ որդու պատասխանը՝ թարմ մեր ժամանակի եւ հերտսի ազնուութեան առումով:

— Ես գնում եմ իմ հայրենիքի պատուի եւ հոգի համար հոռուիս, — ասում է Յարութը, — եւ գուցէ քո կորցրածն էլ եւս քերեմ, — անկացրեց ժպտալով, յետոյ այդ մտքից լրբացաւ:

Շատ կարեւոր է այս լրջութիւնը՝ տաղանդաւոր հեղինակի այս լրջութիւնը, որն արտայայտուած է արուեստի ճայներով:

Թուում է, թէ Յարութը նոր կարօտներն ուսած, Հազրոյի որինքը ծոցած՝ յաղթական երթով էր ժտնի Բեռլին եւ կը նուազի նոյնը՝ «Վերադարձի եւ վերջին յոյսի» հրգը, մի հանգամանք, որի

(«Սովետական գրականութիւն», 1975, թիւ 1)

մարմնաւորումը մեր գրականութեան մէջ ընդհատուել էր անբնական ձեւով: Սակայն Յարութը գոհուած է, Ջորի Միրոնն տէր է կանգնում Սառային, եւ նոր որդին՝ նորից Յարութ (Միրոնից առհնդկ անուններից է), ստանում է բարձրագոյն կրթութիւն, թողնում է գիւղը, գնում քաղաք: Երիտասարդ գրողը գնում է շատ ինքնատիպ ուղիներով. նա չէին թամայի մէջ բացում է իր աշխարհի դուռը: Թոռ Յարութը լքում է սրբազան յիշատակները՝ կրկնապատկելով Միրոնի գրածան: Բնաշխարհիկ սերունդը բեկուած է տահնիկ երազի ճանապարհին: Մեղաւորը ո՛չ Միրոնն է, ո՛չ այս վերջին Յարութը, կան աւելի հզօր օրէնքներ... Գաղաքակրթութեան օրէնքը, որը... յըշկուած է անհատների միտքը:

Գալչոյեանը մեր ժողովրդի յարատեւութիւնը փնտրում է ոչ թէ հորիզոնների տարածքում, այլ՝ հայրենի հողի վրայ վերընծիւղուած արժատի խորունկութեան մէջ, բերում այդ նոյն հայրենի հողի խորունկ փիլիսոփայութիւնը:

Արձակագիրը շօշափում է նորագոյն նահանջի խնդիրը, որը սերնդի առանձին անհատների ապսխտիկ հոգեբանութեամբ չի պայմանաւորուած, ջանի որ ապրում է ձորը եւ Ջորի Միրոնն: Վերջին հաշուով՝ Գալչոյեանի վիպակները բերում են կենսական մթնոլորտի կարօտ՝ յանուն հզօր երկրի գալիքի: Պէտք է անկացրենք, որ գրողը նիւթին ծօտեցել է մի առանձին երկիրաւորութեամբ՝ կարտաբումը խորապէս բնական է, խոսքը ցաւապսօրկն կենդանի: Վիպակները դառնում են աշխարհից նեղացած մարդկանց երազների երգ, բայց ոչ եղբրերգ: Հեղինակը գրում է վառվռուն սիրով, քնարական յուզութեամբ ջերմութեամբ, հայրենի հողի հանդէպ բոլորեցելով իսկական հայրենասիրութիւն:

ԿԻՄ ԱՂԱԲԵԿԵԱՆ

Հ Ա Տ ՈՒ Ա Մ՝ Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԷՆ

Ընկերներ, ցաւօք, արդէն գրողի անժամանակ մահից յետոյ, լոյս տեսաւ վերջին տարիների մեր արձակի ամենաբարձր փայտակումներից մէկը՝ Մուշեղ Գալշոյեանի «Մարութայ սարի ամպերը» գիրքը։ Այս պատմաճշարը տրամաբանական պարզացումն էր գրողի ողջ ստեղծագործական վաստակի՝ սկսած «Ձորի Միրոն» սքանչելի վիպակից։ Մ. Գալշոյեանը մեծ տառապանքի եւ մեծ ուրախութեան գրող էր։ Նրա տառապանքը իր ժողովրդի ապրած ողբերգութիւնն էր, ուրախութիւնը՝ նոյն այդ ժողովրդի վերածննդի հրաշքը։ Ե՛ւ մէկը, ե՛ւ միւսը նա արտայայտեց բարձր քաղաքացիութեամբ ու տաղանդով։ Գրողի այս գրքի հերոսները, որոնցից շատերը նախատիպեր ունեն, հայրենի հողի վրայ ամուր կանգնած, արմատակայած մարդիկ են։ Պարզ, աշխատաւոր մարդիկ՝ անդաւաճան նուիրութեամբ դէպի հողը, աշխատանքը։ Բայց նրանցից շատերը նաեւ «շափահաս որբեր» են, որոնց մէջ յաճախ է արթնանում անցեալը, իրենց մանկութեան ուրախ եւ տխուր պատկերները։ Ինչ-որ տեղ, առօրեայ համալսարաններում, նրանք տարօրինակ, նոյնիսկ խենթ մարդիկ են։ Ծերունակարդ Մամբրէն մահից քիչ առաջ՝ նոր միայն սովորում է հայոց այբուբենը, ծերունի Զօրոն վաթսուն տարի անց զըտնում է իր Ալէին, որին տեսել էր ընդամէնը մէկ անգամ, պատանութեան օրերին եւ յանկարծ խենթանում է նրա հին արիւնը։ Մլինը կեանքի վերջում սկսում է արել հեքիաթների մէջ, դաշտապահ Մոսէն կուտւմ է ագռակների դէմ, պաշտպանելով հայրենի սարերը, եւայլն, եւայ-

լըն։ Հեռաւոր, մշուշ դառած անցեալը, կորցրած ծննդավայրը՝ պարմանալիօրէն անխաթար ապրում-շարունակում է ներանց մէջ, նրանց ներսում վառուղ մոմերի նման, եւ այդ լոյսը նրանք ուզում են փոխանցել նոր սերունդներին։ Ինչ-որ առումով՝ Մ. Գալշոյեանի այս պատմաճշարները մտնում են «կարօտի գրականութեան» շղթայի մէջ, որ ստեղծուեց Սփիւղբում՝ Համաստեղի, Հուշանեանի, Մնձուրու եւ միւսների կողմից։ Բայց՝ մի էական տարբերութեամբ։ Սփիւղբահայ այդ գրողները, նրանց հերոսները անցեալի յուշերին ապակիում են՝ տարագրութեան սարսափների մէջ պահպանելու համար՝ իրենց եւ ժողովրդի բարոյական առողջութիւնը։ Անցեալը, ծննդավայրը նրանց համար վերջին ապաստարանն է — կորցնել այդ, նշանակում է կորցնել ամէն ինչ՝ հայրենիք, լեզու, անհոյստներ։ Մուշեղ Գալշոյեան-գրողը, նրա պարմանալի հերոսները ունեն հայրենիք, որ մայրական իր ձեռքով բուծել է վերքը, բայց մնացել է սպին։ «Չափահաս որբերից» սերուած սերունդների համար այդ հայրենիքը նաեւ ծննդավայր է եւ «Բովտուն» վէպում նրանք ուղղակի նշու են տալիս քարի հետ, որ կենդանագրներն այդ հայրենիքի ամէն մի թիւ հողը։ Ուրախ ու տխուր յուշերի շղթան, այն սգացումները, որ հայրերը փոխանցում են իրենց պապներին, նուիրական ժառանգութիւն է, հոգու եւ յիշողութեան ժառանգութիւն, եւ Մուշեղ Գալշոյեանը կարողացաւ դառնալ սերունդների այդ սըրբական կապի տաղանդաւոր կենսագիրը։

ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

(«Սովետական գրականութիւն», 1981, թիւ 6)

Ա. ՏԵՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

ՄԱՐՈՒԹԱՅ
ՍԱՐԻ
ԱՄՊԵՐԸ

ՄՈՒԾԵՂ
ԳԱՆՈՅԱՆ



ՄԱՐՈՒԹԱ ՍԱՐԻ
ԱՄՊԵՐԸ



15 Հոկտեմբեր 1980ին, կոյր պատահականութեան զօժ կ'երթար Հայաստանի երիտասարդական արձակի վարպետներէն Մուշեղ Գալլոյեան: Արդէն տպագրութեան յանձնուած պատմութեանը առիտը իր վերջին հատորը՝ «Մարութայ սարի ամպերը», լոյս տեսաւ յետ մահու, երեւանի մէջ:

Մտեղծագործական յարաբերութար շատ կարճ կեանք ծր ունեցաւ Գալլոյեան (1968-1980), եւ Սփիւռքի մէջ դեռ լայն ճանաչում չգտած՝ մահը խլեց զայն մեզմէ:

«Քոզիմ» ամսագրի այս տարուան Յունուարի թիւը ամբողջութեամբ նըւիրուած է Մ. Գալլոյեանի կեանքին ու գրականութեան: Ընդգրկուած նիւթերու մէջէն կը յայտնուին անոր պայծառ դիմագրիւնը, կորովի եւ առողջ մտածումները ու մեր յեղափոխական մտքի անց-

եային հանդէպ ունեցած պաշտամունքը(1):

«Մարութայ սարի ամպերը» կը բաղկանայ 304 էջերէ եւ կը պարունակէ 19 պատմութեան: Հատորին վերջաւորութեան դրուած է Ստեփան Թոփչեանի «Կայսրոյս աշխարհ» խորագրուած գրութիւնը, ուր կենսագրական հակիրճ ակնարկէ մը ետք, կը վերլուծուի զործը: Մարութուկ կամ Մարութայ սար Սասնոյ դաւառին բարձրագոյն լեռն է (11,500 ոտք), որ հոս, Գալլոյեանի գործին մէջ կը խորհրդանշէ Սասնոյ աշխարհը: Գազաթին շուրջ ամպերուն մշտատեւ ներկայութիւնը անբաժան մասը կը կազմէ պատկերին: Գալլոյեանի պատմութեանը քննարկը բոլոր հերոսներն ալ այր

(1) Վանքաբանի արժէք ունի «Վերջին ջրոյցը» խորագրուած անոթագրութիւնը, էջ 7-24:

մարդիկ են, եօթանասունէն վեր տարիքներով, որոնք իրենց ծննդավայր Տարօնէն ու Սասնոյ աշխարհներէն բերած են յուշեր ու յիշատակներ: Աւելին. իրենց համար էրկիր բառով հասկնուած հայրենիքը յիշատակ չէ: Աւորեայ իւրաքանչիւր խօսքի, տեսարանի, աւարկայի, հրեւոյթի մէջ գրգիռ մը կայ դէպի կորուսած հայրենիքը:

ԿԵԱՆՔԸ

Մուշեղ Գալստիան ծնած է 13 Դեկտեմբեր 1933ին, Թալինի շրջանի Կաթնաղբիւր գիւղը, յեղափոխական անցեալ ունեցող պերդաստանի մը յարկին տակ: Թառն է Փեթարայ Գեալջօ Մանուկի եւ զընդ որդին՝ Նոյն գիւղէն Փետայի Իւրոյի: Երկուքն ալ մասնակցութիւն ունեցած են Մշոյ դաշտի, Սասնոյ լեռներուն եւ Սարգարապատի կռիւներուն:

1957ին աւարտած է Երեւանի գիւղատնտեսական Հիմնարկի այգեգործական բաժանմունքը: Զորս տարի, 1957էն 1960, կը զբաղի Հողագործական աշխատանքներով, իբրեւ գիւղատնտես: Այնուհետեւ կը նուիրուի յրաչրական եւ խմբադրական աշխատանքներու, վարելով նոյն ատեն պատասխանատու խմբազրի պատճեններ՝ Հայաստանի գանազան թերթերուն մէջ, մինչեւ 1969:

Ձգալով բարձրագոյն ուսման պահանջը՝ կը մեկնի Մոսկուա եւ կը հետեւի Մաքսիմ Գորկիի անուան գրականութեան Հիմնարկի բարձրագոյն դարձեցնողներուն: 1971էն 75 մաս կը կազմէ «Գարուն» ամսագրի խմբագրութեան, իսկ 1975էն սկսեալ կը գտնուի «Հայաստան» հրատարակչութեան գրականութեան ճիւղին խմբագրութեան վարելը:

Գալստիանի առաջին գրութիւնը լոյս տեսած է «Վանաձորի պոռնի» թերթին մէջ, իսկ առաջին հատորը՝ «Վառնիկ», 1969ին:

36 տարեկան էր Գալստիան, երբ մուտք գործեց գրականութեան մէջ: Հասկառակ իրեն եղած ջերմ ընդունելութեան, իր ստեղծագործութեան Հանդէպ

սնպակտս եղած է իր դժգոհանքը: Անդրադառնալով իր այդ ապրումին, ծանօթ բանաստեղծ Համօ Սահեան կը գրէ.

«Իր ստեղծագործական աշխարհի ամբողջացնելու ծրագիրն էր պտտում: Բազմաժան էր, որ ստրիկներն արագ են անցնում, որ ինքն ուղտն է, որ գրականութիւն է մտնել այս տարիքում, երբ ուրիշներն արդէն ստեղծած են լինում իրենց գլուխ-գործոցները:

«— Իմ արածի տէրը ես չեմ, — ասում էր, — ես իմ անելիքների տէրն եմ...»(2):

Ճիշդ է, ուշ կու դար գրականութեան, սակայն անոր սահմանն ենք կը մտնէր հաստատ քայլերով: «Վառնիկ» խորագրած իր առաջին հատորով իսկ վաւերական տաղանդ մը կը մատնէր ան, խորքով թէ՛ ձեւով: Գրականութեան մուտք գործելէ առաջ, մինչեւ իր 36 տարիքը յամպլուս չէր վառնած ան իր ժամանակը: Ուսումնասիրած էր Թալինի շրջանի, մշտն, սատուցի եւ աշակերտցի իր հերոսներուն հոգեկան ու մտային աշխարհները, այդ աշխարհներուն մէջ ամէնորեայ յուշ դարձած Սասնոյ լեռներուն ու Մշոյ դաշտի բացառիկ երեւոյթները, հողն ու օդը, քարն ու ժայռը, հոն թաւայած առօրեայ կեանքն ու մեր յեղափոխութեան հերոսական ըմբոստացումները:

Գրական իր առաջին գործէն ետք, Գալստիան իրարու ետեւէ լոյս բնծայեց «Ընծայագիր» (1972), «Թալիստ քարեր» (1973), «Բովտու» (1974) խորագրուած հատորները, ակնարկային ու վեպական խորքերով:

«Բովտու» վէպը 1973ին արժանացաւ Հայաստանի գրողներու միութեան առաջին կարգի մրցանակին, իսկ «Վլառնիկ» հատորին «Զարի Միքոն» միպոսէին մրայ կը պատրաստուի ժայռէն մը: Հետաքրքրական է Գալստիանի գրական հանգանակը, որ կ'երևի Մերութեան Տէր Գուլանեանի հետեւեալ խոստովանութեան մէջ.

(2) «Բողոք», 1981, Յունուտք, էջ 20, Համօ Սահեան, «Թարիչ բխած սուղեղ»:

«Ուսանող էի, պատմումս բերի
«Գարուն» ամսագիր, կարդացիր, հաւա-
նցիր :

« Դիտողականութիւն ունես, կուլ-
տուրա ունես, բայց պատմութեանը
ծննդավայրը չեմ տեսնում: Ազգամուտեց
փոխարէն, եթէ անբրիկեամ գրողի ազ-
գամուն լինէր, ոչինչ չէր փոխուի. ու-
զում եմ ասել, որ գործիդ մէջ պէտք է
եքուայ քա ո՛վ լինելը, ո՛ւմ տղան ես,
բնիկ արտեղացի՞ ես»(3):

Իր մշակած գրականութեան նպա-
տակակէ՞տը, թիրամ՞իւր — նոյն կէտը,
կարօտը, կորսուածին դիտակցութիւնը,
մանուաւոր կորսուածը չմոռեալու պարտա-
քը: Գիտակցիլ, որ 1915ին պարտուե-
ցանք: Մակայն պարտութիւնը մեզ յու-
սահատութեան պէտք չէ առաջնորդէ:
Այդ պարտութիւնը պէտք է վերածել
յողթանակի, մեր ժողովուրդին մատու-
ցանելով իր պատմութեան Հերոսական
էջերը. «Եթէ ես յանկարծ պատմարան
լինէի, ես կը կազմէի պատմութեան, մեր
անցած պատմութեան բնութիւնը երկեր,
հաստածարար, եւ թալս՛րը հերոսական,
էմ հերոսական դրամագները, որ մեր
պատմութեան մէջ փայտաւորում են...»
(4):

Այս տեսակէտէն մեկնած՝ մեծ դնա-
հատանք ունի Յայիկ Դաւանցի «Ռեալի-
ստիկ» կամ: Պարտին հանդէպ, ուր
մեր յեղափոխական անցեալը կը ներկա-
յացուի: Այս դործը վերաբերու առեմ,
Գալչոյանի վկայութիւն մը կը բերէ՝ իր
Հոգեկան աշխարհին մասին...

Մարդ արարածին նկարագրին ու
գործելակերպը կը դեկլարուին ման-
կական եւ պատանեկան տպագրութիւն-
ներով եւ ապրումներով: Անոնց ահա՞մայ
ընդհատումը ենթական կը դարձնէ ա-
ւելի դրամիչ, աւելի քաղցր եւ կ'առաջա-

(3) Նայմ անդը, էջ 86, Մ. Տէր Գալուստեան,
«Ո՛ր կ'երթաս, կուսկ»:
(4) Նայմ անդը, էջ 19, * * *, «Վերջին քը-
րոյցը»:

ցրնէ զանոնք վերարտադրելու, վայելե-
լու փափաքը, մանուաւոր՝ երբ այդ ան-
հատը բնութեան մօտ է, անոր ծոցին մէջ
ունած:

«Կամ չը» պատմութեան Հերոսը՝
Ջորան, Մարաթուի լեբան լանջին՝ 11
տարեկան մանչ մըն է, որ ինքզինք տէ-
րը կը կարծէ բնութեան եւ այդ բնու-
թեան մէջ թռչկոտող ութ տարեկան Ա-
լէին: Անոնք իրն են:

1915ի եղեռն: Յիսուհիէն տարի
ետը, երբ ինք թորներու տէր է, պարա-
գաներու թշուա՞տ կը հանդիպի Ալէին:
Կը մշակէ զայն առեւանդելու ծրարքը
մը: Սեռային բնազդները չեն, որ մղիչ
ուժ կը դառնան իրեն: Կորսուած ման-
կութիւնն ու Հայրենիքն են, որոնք կըր-
նան անով մուտք գործել իր յարկէն
ներս:

Խութեցի Ափրէի Համար՝ Հայրենի-
քը կը ներկայանայ իր Հորհնական տան
պատկերով: Թալիսի մէջ կ'առուցուած իր
նոր բնակարանին յատակը հողէ է: Չու-
զեք տախտակով պատել զայն: Ինչո՞ւ:
«Դա նրան յիշեցնում էր էրկուր կիսատ
մնացած իր մանկապիւնից յուզիչ մի
պատկեր՝ կաւածեմի պատկերով մեծ եւ-
ցատուն, երդիկից իրած արեւի խարճ,
գրգռիչ բոյրով անել, արծաթագոյն այդ
անելով ու երկար փէշերով յատակը մտք-
րող մի կիմ եւ յուտե՛ անա՛ մէջ խոխոտ-
ցող փռչու խոտուտիկ հատիկներ...
Այնտեղ, էրկուր, փլուտակ դարձած է-
րենց տունը եւ մօրը Ափրէն՝ ահա, այս
պատկերով էր յիշում»:

(էջ 138)

Գնա՛լ եւ շրջապատին թելագրանքնե-
րուն անտայով շորս օրուան մէջ տախ-
տակ կը շարէ տան յատակին: Մակայն
քանի մը ժամ ետը, կը քանդէ շարածը,
որովհետեւ «Սեմեակի ո՛չ մի անկիւնից
արեւի փռչոտ սիւնը յայտնուել չէր կա-
րող»:

(էջ 146)

«Գիմարը ծաղիկէի Հերոս նախորդ
Քարտեղի Համար՝ Հայրենիքը կը ներկա-
յանայ Համանուն ծաղիկին միջոցով. «Սե-
այդ գարնան խաղիչով արտերում նա

հանդիպեց, յանկարծակի հանդիպեց ծափոսի... Գիմարը ծաղիկն էր: Աչքերին չէր հուսաւում: Իսկ գիմարը խառնուտիկ աչքերով ժպտում էր:

«— Բաւ անուն Գիմար է:

Ծաղիկն գլխով արեց:

«— Բաւ անուն Գիմար է, չէ՞: — Ծնկեց, շնչեց բոյրը: Կասկած չկար՝ ճա էր: Պակեց՝ դրեց ծոցը: Նախիրը թռեց. Գիմարը որոնեց, հուսաւեց՝ փուկ տրեց, հուսաւեց՝ ամբարեց գլխարկին և աչք անեց արեւին՝ չքեճուեց, իրիկում չէ՞. ախր, էրկրից ծանօթ է եկել, գիւղ պիտի տանի:

ՃԱԿ իրիկում գլխարկի փոխարէն՝ գլխին ծովաստրից մի կտոր չայիր, էրկրից մի կտոր նշխար՝ իջաւ գիւղ: Բաժանելով անցաւ գիւղամիջով, մթնշաղի հետ թաց ուրախութիւն մաղեց, հառաւ տուն՝ վերջինը մեկնեց կնոջը:

(էջ 120-121)

Գիմարը կայրենիքէն եկած ծանօթ է, զոր տուն պէտք է հրատիրել. նշխար է, սուրբ առարկայ մը, զոր պէտք է բաշխել հաւատացեալներուն. Յիսուսի մարմնին պէս, անոր օրինակով հազարուելու համար կայրենիքին հետ: Այս մարդոց համար՝ այս երեսօթները կայրենիքէ համեաւ ու հոտը վերապրեցնող զբոսիչներ են: Չիրենք կեանքին կանչող անբակտերի կապեր: Երազն է, որ կը գեղեցկացնէ անոնց առօրեան:

Անոնց մտքի վրայ տիրապետող զըշխարս պատկերը կայրենիքի տեսլականն է: Խօսելով իր հօրը մասին՝ Գալլոյեան կը գրէ. «Ծարիներ առաջ, երբ կառուցում էինք մեր այս տունը, հայրս պահանջեց, որ բոլոր պատուանմանքը բացուեն դէպի հարաւ»: Այսինքն՝ դէպի Մլոյ դաշտ, դէպի Սասնոյ լեռները:

Իր ընկերը հարց կու տայ մահամերձ

Դաւոյին. «Բաւ հակտին ուրախութիւն կայ, Դաւո՛, դու էրկիր է կ'երբաս»: (էջ 87)

Ծովասարի Օհանը պատրաստութիւն կը տեսնէ Արեւմտահայաստան երթալու, կայրենական ու հօրենական կանչին անսալով. շերկիր է կ'երթում, ախոր տըղայ: Իմ ողորմածիկ հոն է կանչէ զիս: Ծովասարն է կանչէ... Կ'երթամ»: (էջ 74)

Գալլոյեանի զբնի տակ կը սեւեռուի տարօնցիի եւ սասունցիի կերպարը՝ իր դրական ու բացասական բոլոր կողմերով, կը դրսեւորուին անոր կայրենասիրութիւնը, աշխատասիրութիւնը, յեղափոխական նկարագիրը, ազատասիրութեան աննշը: Անոնց բերին մէջ անպակաս են նոյնպէս կայրոյանքներն ու օրհնութիւնները:

Յետոյ՝ կան Տարօնի ու Սասնոյ բարատի տիրապետում, բանահիւսկան փշտանքներու յիշատակում, ինչ որ կ'ենթադրէ խանդաղատանք եւ բժանդիք աշխատանք՝ հարազատութեան հաշտին: Իր տիրապրներուն մէջէն Գալլոյեան պատգամ մը կը թելագրէ, ներկայ Հայաստանի թէ Սփիւռքի տարածքին վերայ տարազնուած հայութեան — լծառնալ յափշտակուած Արեւմտահայաստանը, արուեստի գեղեցկութեամբ թաթաւուն պատգամ մը:

Իր գրականութեամբ Գալլոյեան կը պատկանի կայրենասպաշտ գրողներու փառանգին, այսինքն՝ Պաշտուր Արմաշեանի, Քրիմեան Հայրիկի, Աւետիս Անարանի, Հրանդի, Մլոյ Գեղամի, Համատեղի, Ակսել Բակունցի, Խաչիկ Դաշտենցի եւ նմաններուն փառանգին:

Արմա՛, որ վաղահաս մահ մը ունեցաւ:

Ա. Տ. Խ.

ՆԱԳՎԱՐՆԵՐ

ՈՐԲԱՅԵԱԼ ԳԻՐՔԵՐՈՒՆ ՌՂՔԸ...

Հայաստանի մէջ լոյս ընծայուած սփիւռքահայ զրոյցներու գործերուն ցանկին վերաբերող Ստեփան Կուլտիկեանի մէկ խօսքը արտատպած ատեն, Պէյրութի «Վանշ» շաբաթաթերթը իր 18 Ապրիլի թիւին մէջ կը գրէ.

«Այս առիթով, կատարեմք տխուր հաստատում մը — «Բագին» գրական ամսագիրը իր Յունուար 1981ի թիւին մէջ կը կատարէ սպրդասացութիւն մը՝ տալով այն տպաւորութիւնը, թէ միայն երեք սփիւռքահայ գրողներու գործեր լոյս տեսած են Հայաստանի մէջ:

«Երևանի մէջ ցարդ հրատարակուած են շուրջ քառասուն սփիւռքահայ գրողներու գործեր, իսկ «Բագին» տես այդ թիւը կ'իջեցնէ... երեքի: «Երեքի փոխարէն քառասուն կամ քառասունի փոխարէն երեք...»:

«Մեկնաբանութիւնները կը քաղուին ընդերցողին՝ ստորեւ հրատարակուած յօդուածին լոյսին տակը...»:

Հարցին անձանօթ ընթերցողը մտածեց Հարկաւ, որ մենք ինչորոշ առարկայ ներթիւն մասին յատուկ յօդուած մը լոյս ընծայած ենք եւ, ի՞նչ-ի՞նչ նկատումներով, անտեսած ենք սփիւռքահայ գրողներէն Երևանի լոյս ընծայած հատորներուն ամբողջութիւնը, կատարած ենք սպրդասացութիւն մը: «Սպրդասացութիւն»: «Բագին»ի՞ մէջ, «Բագին»ի խմբագրութեան՞ կողմէ:

Իրականութիւնը այն է, որ «Բագին» ո՛չ ինք այդ մասին առանձին գրութիւն մը խմբագրած է եւ ոչ ալ Հայաստանի հրատարակչական գործին այդ երեսը պատկերացնող ուսումնասիրութեան մը տեղ տուած: «Վանշ»ի ակնարկութիւնը կը վերաբերի տուեալ թիւին մէջ լոյս ընծայուած գրոյցին մէկ կէտին, զբուցակից երիտասարդին տա փորձառութեան.

«...Այսօր գրսիսմուք էի: Կը փնտռես սփիւռքահայ ռուէ գրողի անուն: Աղղարեանէն, Նարանիէն կամ Յակոբ Գուշուանէն մը անդին չ'անցնիր»:

«Վանշ» յիշեալ անուններէն կազմած է իր «երեքը» ու բարձրացած Կուլտիկեանի յօդուածին կտուրը:

Մուշեղ Գալչոյեանի եւ Հայաստան այցելած երիտասարդին մէջեւ տեղի ունեցած զրոյցը, ընդգծուած է «Բագին»ի մէջ, կազմակերպուած զրոյց մը չէ, պարզ հանդիպումի մը արդիւնք է անիկա ու բնական է, որ նման արտայայտութիւններու մէջ անճշտութիւններ սպրդին: Այդպէս էր եւ Մուշեղ Գալչոյեանի հետ կատարուած զրոյցը: Արագըրութեան կարօտ ուրիշ կէտեր ալ կան հօն, շալլօրէն ընծայուած պատկեր, չափազանցուած սահմանումներ, հաստատումներ: Կան: Բայց թոյլ արուած անճիշտ բաները սրբազրկու ատեն օրինակա՞ն է արդեօք սպրդասացութեան մեղքեր բարդել հիւրընկալ թերթին մրայ, երբ անոր մայր մտահոգութիւնը եղած է հաստատարման օրէնքին թէ սխալին:

Վերի նսթը «Կամնչին մէջ տեղաւորած անձերը շատ լաւ դիտեն, որ Հայաստանի մէջ լոյս տեսած փիւռքահայ գրողներու գործերէն ո՛չ թէ երեքին, այլ առնուազն տասներեքին մասին խօսք եղած է, եւ սպորդասացութենէն բոլորովին տարբեր ոճով մը: Ատիկա, սպորդասացութիւնը, ուրիշներու բնատրութեան ու քաղաքականութեան մաս կը կազմէ: Մենք նման վարքագիծերու ենթակայ չենք: Ո՛չ գեղեցիկ գործերը կրնան զսպել ողբերութեան մեր աղաղակը, ոչ ալ մթին երեսօթները կրնան հաշտութեան դրոշմներու մասնել մեզ:

Ինչ կը վերաբերի վերի փորձառութենէն հանուած ու շարաշահուած «երեքին», կրկնելով ըսենք, որ Գալլոյանի հետ զրուցած երխտասարդը ընդամենը այնչափ է գրախանութ մը եւ յիշած է իր տեսածները միայն: Երեւի փիւռքահայ միւս գրողներուն գործերը տարած են ընթերցողները եւ «քլիք»ին որբութիւնն է, որ սուսն տուած է «երեք»ին արուեստական վրէժ-ինչըութեան...

«ԸՆԹԵՐԳՈՂ»Ի ՄԸ ՏՈՒԱՅՏԱՆՔՆԵՐԸ...

«Կամնչի «սպորդասացութեան» դիւտին պէս, եւ յերիւբանքի անոր ոճով, «Բագին»ի դէժ յոգուած մը լոյս տեսաւ նաեւ «Երիւկ» ամսագրի այս տարւան Յունուար-Փետրուար միացեալ համարին մէջ, «Մեծարիւտ իւրայայտուկ հղանակ մը» խորագրին տակ եւ Ընթերցող ստորագրութեամբ:

Լուրջ հարցեր եւ անորոշ ստորագրութեան մը — Ընթերցող: Ի հարկէ, նման մէկու մը, այսինքն՝ իր անունէն վախճող մէկու մը շարագրութեամբ զբաղելու ժամավաճառութիւն մը պիտի չներէինք մենք մեզի, եթէ երբեք խժրագրական նոթ մը հովանաւորած չլլար անոր միտումնաւոր կուրսութիւնն ու ընթերցողին հաւանական անտեղեակութիւնը շարաշահող մարտնչ-չու պահեթեթութիւնները:

Ուրեմն...

«Երիւկ»ի Ընթերցողը մէկ ցաւ չունի, ունի երկու ցաւ: Առաջինը «Բագին»ի մէջ ուշադրութեան յանձնուած Վահան Թէքէհանի «Տաղ առ Խտալիս» բանաստեղծութեան պարագան է, իսկ երկրորդը «Կամնչի մէջ ընդդրուած «երեք»ին արձագանքը, եւ յարակից բաներ: «Երեք»ի մասին չենք ուզեր մենք մեզ կրկնել, իսկ ուրիշ բաները ամփոփուած են ստորագրութիւններուն մէջ:

«...Սակայն, գրագետին՝ Մուշեղ Գալլոյանի անժամանակ մահը աւելի անիթ մը կ'ընծայէ «Բագին»ի խմբագրութեան, որպէսզի «Վերջին գրոյցը» «իրբու քանկագիմ ճշխար» դառնայ սեփականութիւնը յայն հասարակութեան: «Բագին»ի խմբագրութեան փութացնութիւնը միայն զմանտամէք առարկայ կրնար դառնալ, եթէ արձանագրուող փութացնութեան մէջ, հայրենի գրագիմ յիշատակը խժրժող տրամադրութիւնները, մինչև անգամ դիտարկեալ անգիտութիւններն ու միամիտ տգիտութիւնը իրենց թոյնը չխտանէին պահին քիչադրած լրջախոսութեան, զպաւածութեան:

«Վերջին գրոյց»ի ընդհանուր բովանդակութենէն ակնբերու է, որ ան տեղի ունեցած է խմբիչեով յագեցած մթնոլորտի մը մէջ, եւ արուս ընթաց-
քին «Բնաբարութեան» են միջազգային քաղաքական, ազգային, պատմական,
հասարակական... եւ գրականութեան հետ ազերս ունեցող հարցերը:

Կանգ առնենք հոս ու հարց տանք այս անգամ այս անլրջութիւնները
հիւրընկալող հանդէսին: Այդ ո՞ր էջին մէջ կը գտնուին արդեօք «Հայրենի
գրողին յիշատակը հիմնովոր տրամադրութիւնները» եւ անոր անմին ու գրա-
կանութեան անդրազարմող ան ո՞ր գրողն է, որ թոյն խառնած է պատհան
թելադրած լրջախոհութեան:

Երբ մարդիկ իրենց տրամադրութիւնները հիմնովին հերքող ճշմարտու-
թիւններու դէմ յանդիման գտնուին եւ համոզիչ փաստերու սով մը զգան ի-
րենց մէջ, երևի այս միջոցին կը դիմեն միշտ, երեւակայական տուեալ-
ներով կը փորձեն սփոփել իրենց անզօր կասազութիւնը: «Խճճանքն ու գո-
րովը, հիօնան» ու մեծարանքը իրարու հետ չիփոխող շփոթահարներուն պա-
րզան կարելի չէ ուրիշ եզրերով մեկնել:

Մենք կ'ըմբռնենք Հարկաւ Մուշեղ Գալլոյի տպագրութիւններուն
ու կասարած հաստատումներուն ուժը չէղբայնելու միտող գաւարումներ-
ըը, բայց կարծել, որ ասիկա մեռք կը բերուի «Բագին»ին վերադրումներ
ընելով եւ գրագէտը դնելով «խմբիչով յագեցած մթնոլորտի մը մէջ», զուր
միջ է: Մնաց որ, դեռ բոլորովին չէ ճշդուած, թէ «խմբիչով յագեցած մթնո-
լորտը» նպատակաւոր պայման է ճշմարտութեան յայտնաբերման, թէ անըն-
պատ: Եթէ խմբիչով յագեցած մթնոլորտը արտայայտուած մտածումի մը
արժէքը կասկածելի դարձնող տուեալ մը ըլլար, ապա ուրեմն Հայրենի մեր
գրողներուն արտադրութեան մեծ մասը գինովներու գործ պիտի յորջորջէինք
ու անցնէինք: Այդպէ՞ս կ'ընենք սակայն: Ուրիշ օրինակ մը: Ամէնքս ալ գի-
տենք, որ Երուանդ Սահան ատանց խմբիչի տող տողի վրայ չէ գրած իր ողջ
կեանքին մէջ: Կրնանք սակայն գինովի մը դուրս տուած ազդանքը համա-
բել իր կուտակած հսկայ գրականութիւնը:

Կ'ընդունինք, որ «Միքայի»ի Ընթերցողին ու ընթերցողներուն ու միւ-
ներուն հաճոյալուր շատ բաներ չէ ըսած Մուշեղ Գալլոյիան, բայց անոնց
դէմ վերապահութիւններ ստեղծելու համար աւելի պարզեցնող միջոցներ չեն
պակօտիր...

Վերի տողերէն արդէն պարզուած մեր «խմբովոր տրամադրութիւննե-
րէն», «թոյններէն» եւ գրագէտն ու գրուցակիցը «խմբիչով յագեցած մթնո-
լորտի մը մէջ» դնելու միտումէն աւելի ապշեցուցիչ է «Միքայի»ի Ընթեր-
ցողին միւս վերադրումը, զոր կ'ընէ «Բագին»ին.

«Երբ Սիիւսի տարածքին եւ հայրենիքի մէջ գրական ու յորդիմա-
կան հանդիսութիւններ կը կազմակերպուէին ի պատիւ բանաստեղծներու իշ-
խանին, Պէյրութի «Բագին» ամսագիրը հանդիսացու միակը», հետջն:
Միակը,


«Որ բնդիմանուր համանուագը խանգարեց իր խմբալուր ազմուկով, ք-
րում արդէն ծանօթ են մտաւորական ու գրական շրջանակները»:

Մանօթը, որ անծանօթ մնացած է պարբերութեան մէջ, կը վերաբերի
«Բագին»ի մէջ ուշադրութեան յանձնուած «Տաղ առ Խաղիտ» բանաստեղ-
ծութեան:

«... Երբ Ափիւսի տարածքին եւ Հայրենիքի մէջ գրական ու յօդովական համագործակցութիւններ կը կազմակերպուէին ի պատիւ բոժոստեղծներու իշխանին, Պէյրութի «Բազմ» տաճարը հանգիտացաւ սրակը, որ բնականօրէն համաձայնագր խնամքից իր իծալուր ազմակով, որուն արդէն ծածօք են մատուցական ու գրական շրջանակները: Լեւոն Է. կործանածէն շատ աւելի հնչու, գրական, մշակութային ու հասարակական գործունէութեանը հարուստ կեանքի մը մէջ, պայծառ, շատ պայծառ երանգներու կողքին, գտնելի աննշան բիծեր ու աննշարեւի շուէր, վերջին հաշուով, բնականօրէն հաշուեյարգարի ժամանակ, մտնուար կշիռ ալ չեն ներկայացուներ: Անշուշտ տրամաբանօրէն էակին համար»:

ԸՆԹՅՐՅՈՂ

(«Շիրակ», 1981, Ապրիլ-Մայիս)



Այդ հարցը վերաբերածնէն առաջ, կ'արժէ անզամ ճշ եւս կարգաւ մեզի ուղղուած մեղադրանքը եւ աչք մը նետել անոր կողքին գեանդուած «Բազմ»-ի մէկ բացատրիկին լուսանկարչական պատճենին վրայ:

Հիմա բ'նէ:

Ասիկա «Ընթացողը» համանունօրը խանգարող խժաուր աղմուկի՞ մը վիպութիւնն է, թէ յարգանքի արժանաւար տուրք մը զի պատիւ բանաստեղծներու իշխանին»:

«Շիրակ»ի Ընթացողը գրական բոլոր էլեւէջներուն Հեանող ընթերցող մը չի թուիր ըլլալ, կը ձեւացնէ ըլլալ: Կամ կը շահագործէ իր դասակարգներուն անտեղեակութիւնը: Կը ծանրանայ միայն զիտուրին վրայ, եւ ինքնամբողջ կը թաքնէ՝ առկէ կօթը ամիս առաջ թողարկուած քաղցրալուրը, «Բազմ»-ի ա'ն բացատրիկը, ուր երեսուն էջոց ծաւալի մը վրայ մեծարուեցաւ Քէջէեան բանաստեղծը, իրեն ծննդակից Սիմոնեթոյի եւ Տիգրան Զապէլ Եսայեանի հետ միասին:

Պիտի բռնեք իտիցի եւ ոչ առանց յաւանութեան, որ մենք անորոշ Ընթացողէ մը առնելիք դաս չունինք գրականութեան մէջ՝ ո'չ Քէջէեանի առնելիքն էր եւ ոչ ալ մեր գրականութեան մէկ այլ ղէմքի պարագային: Երբ յարգանքի պահ էր՝ Քէջէեանին չլրացանք մեր յարգանքը եւ բնաւ յարգանքի պակասի մը հետեանք չէր «Տաղ առ Խալիլ» բանաստեղծութիւնը մատնանշելու մեր մղումը: Ընդհակառակն, անիկա, հակադրարար «Հայաստանը հարկիդային (Խալիլ)» խորագրուած անարուեստ շարադրանքին՝ կոչ կ'ընէր, որ վերջինով շա՛տ ոգեւորուած մարդերը մոռնան պարագայական կնիք կրող կտորներէն եւ մէկը, ա'ւ միւրը, ու զմայրանան Քէջէեանի հայրենասիրական ու մարդկային գլախ-գործոցներուն վրայ»:

Ակնարկելով «Տաղ առ Խալիլ» բանաստեղծութեան՝

«Լեւոն Է, — կ'ըսէ «Շիրակ»ի անբանազէր Ընթացողը, — կործանածէն շատ աւելի հնչու... պայծառ, շատ պայծառ երանգներու կողքին գտնելի աննշան բիծեր ու աննշարեւի շուէր»:

«Տաղ առ Խալիլի»-ն ստուե՞ր կը համարեն, թէ գոհար՝ առիկա մեր դիտնայիքը չէ: Կը բաւէ միայն ընդունիլ, որ Թէքէեան ի՞նք դրած է այդ ստաղը եւ չէ վարանած զայն ընթերցողին սեփականութիւնը դարձնել: Ուրե՞մն: Ա՛լ ինչի մասին է խօսքը: Մե՞նք գրած ու Թէքէեանին վերագրած ենք այդ ստաղը, որ մեզի դէմ կը ճոճուին նիդակները: Իսկ եթէ անոր մէջ կան ոչ-հաճոյալուք բաներ, զուր ճիշդ է անոնց պատասխանատուութիւնը բեռցնել ուրիշներու ուսին: Պարզէն աւելի պարզ է մէկ բան, որ 1925ին Խալիլիայէն ստացուած օպտուորութիւն մը Թէքէեան վերածած է յանգի եւ չափի «Տաղ առ Խալիլի», իսկ 1944ին, Գահիրէի Խորհրդային դեսպանատան մէջ կատարած է պարտականութիւն մը՝ «Հայաստանը Խորհրդային Ռուսիայ»: Եթէ բանաստեղծութիւն մը կամ բանաստեղծութեան պէս բան մը կընայ զարգացական կողմնորոշման մը ստույգ նշանակութիւնը հայթայթել, ապա ուրե՞մն պէտք է խօսուի երկուքին ալ մասին, 1925ին այնպէս, 1944ին այսպէս, կամ մտնալ երկուքն ալ: Մեր գնահատումով յիշեալ երկու կտորներն ալ վերջին ստաղը կը գրուեն Թէքէեանի մասնագրութեան մէջ: Շլացուցիչ գեղեցկութիւններու տէր բանաստեղծ է Թէքէեան եւ արդար չէ անիշուր գանձերը մէկ կողմ ձգել ու դեսպանատուններու մէջ արտասանուած յաւուր պատշաճի խօսքերը պակաս ընդունիլ իրեն:

«Միքայիլի Ընթերցողը, ինչպէս միւս ընթերցողները Թէքէեանի հանդէպ ունին միակուտը պաշտամունք մը, որ արդար է ու վեր ածէն գնահատանքէ: Անոր մէջ չեն ուղեր տեսնել Կոնիակի «աննշան բիծեր» ու «աննշան քիչ շուքեր»: Ա՛յդ ալ հասկնալի է: Կ'ընդվզին ուրիշներուն նշմարած գանձնաբերելիքին առիթով: Շտաւ աղէկ: Ձեռն գայթակղիր մինչեւ անգամ «Հայաստանը Խորհրդային Ռուսիայ» վերնագրեալ շքանշանուած շուքէն: Իրենց գիրքին մէջ են նորէն:

Սակայն սպասելի էր, որ ներդրյալ զուգրերէն այսքան տակնուվրայ կողմ ցուցնողը չէթ անգամ մը ցնցուէին զուրկէն նետուած շուքերուն ստիճիթով, դարձեալ չդիմէին լուծեան այն տեսակին, որ Թէքէեանը պաշտելու ճշմարտութեան մը մասին չի վկայեր բնաւ եւ համագոր է գրական բարոյական ըստածին չգոյութեան:

Կ'ականարկենք, անուշտ, Հայաստանի մէջ յաջորդաբար երեք անգամ՝ 1958ին, 1963ին եւ 1978ին հրատարակուած Թէքէեանի երեք տարբեր ժողովածուններուն, որոնց մէջ հարիւրէ աւելի անգամներ խօշտանգուած են բանաստեղծին քերթուածները: Թէքէեանի հանդէպ այնքան յարգանք տածող մարդերը ձանձրոյթը յանձն առին զոնք մէկ անգամ աչք նետելու անոնց մէջ, եւ փորձ քրի՞ն բնաւ բազդատական ընթերցումով մը վերականգնելու բանաստեղծին լիցուն, բաւերը, իմաստային խախտումները: Դժբախտաբար՝ ոչ: Բժականգրութիւնը ծայրայեղ չափերու հասցուցած բանաստեղծին ոգին հաւանաբար աւելի պիտի հրճուէր այդ աշխատանքէն, քան իր յօրինած, սպառնութեան յանձնած ու չըջանակով լոյս տեսած մէկ բանաստեղծութիւնը վերստին ուշադրութեան յանձնածներուն դէմ արձակուած վայրահաշուութիւններէն:

Այդ աշխատանքը դարձեալ կատարուեցաւ «Բազմաճի մէջ» (1979, թիւ 7), ամբողջ պրակի մը երկայնքին, շուրջ իննսուն բանաստեղծութիւններու հետ, ի շարս որոնց նաեւ գլուխ-գործոցներու:

Անհրաժեշտ չէ օրինակներով թարմացնել կատարուած գրական աղէտը: Զարմանալին այս բոլորին դիմաց միշտ «թարմ» պահուած լուծիւնն է, անոնց մօտ մանուանդ, որոնք ի՛րք թէ բժականգրութեան տարուած բնաւ չուք չեն ուղեր տեսնել բանաստեղծին վաստակին մէջ, ի՛րք թէ... այդ բժականգրութիւնները...

ՄԻԱՑՎԱՄԻՑ ԵՒ ՎԵՐՁԻՆ ՈՐԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ...

Երբեմն այնպէս կը պատահի, որ մարդիկ, նոյնիսկ երիտասարդները, եւ մինչեւ անգամ ամէնէն քաջաոգիները կը նախզան մահը եւ կը սկսին դարձանք պատճառող յաճախակիութեամբ մը խօսիլ անոր մասին, կսկիծով թէ մտերիմ քաղցրութեամբ, իմաստութեամբ: Յայտնի չէ ներքե՛ն, թէ մըթնորոտային ճնշումներով կը հասուննայ այդ զգայնութիւնը, այնուամենայնիւ, անհերքելի է դոյութիւնը:

Օրինակները շատ են ու անոնցմէ մէկը՝ Պարոյր Սեւակի պարագան: Իրապէս, լոյս արարելու իր անապարանքին եւ լուսոյ իր մատենին երկայնքին Պարոյր Սեւակ որքա՛ն շատ խօսած է վերջին մութին մասին ու որքա՛ն մօտէն դրուցած անոր հետ: Եղբորարսիս բանաստեղծը այն աստիճանի վերահաս կը զգար մահը, որ մեռնելու տարբեր եղանակներուն մէջ կը խօսէր նոյնիսկ իր նախնւորած մեւին, որ Վիսնգամիցոն էր, Վեղիցի լոյսօնի մէջ ահաւորին հետ խաղացած այլակապուկէն անգամ առաջ, Վիսնգամիցօնի ալ առաջ, Վիտնիւի խորագրուած բանաստեղծութեան օրերէն սկսեալ:

Եթէ մեռնե՛լ...

թո՛ղ որ մեռնեմ

հուր-կայծակից՝

Միսնգամի՛ց,

մի վայրկեանձե՛ւ,

յամկարծակի՛:

Պարոյր Սեւակ մեռաւ հիշք այնպէս՝ ինչպէս կը նախզար ու կը բաղձար՝ «միանգամից», «յանկարծակի»:

Վերջին տասնամեակի մեր երկրորդ եղբորարսիս գրողը, Մուշեղ Գալշոյեան, ինք եւս ունէր մահուան հետ զմտերիմ կապ մը, որուն յաճախներէն սակ յանգած էր սա իմաստութեան.

«Ճիշդն այն է, որ մարդ ամէն օրը հաշուի իր վերջին օրը... Այո, հաշուի, թէ վերջին օրն է, եւ ապրում է, քայլում է միայն այդ օրուայ համար»: «Բովտում» վէպի հերոսներէն մէկուն բերնով կատարուած այս թելադրանքը կը թուի, թէ միշտ կը զօղանջէր իր հոգիին եւ կշռոյթն էր իր կեանքին, երազներուն, ժամանակացոյցին: Երեւի այդ թելադրանքին տակն էր, որ պարեպաւ չեցուն կեանք մը, զուր չվատնեց իր օրերը, երկնեց տաղանդաւոր գործեր, «Ձորի Միքան» եւ անմահութեան շունչ փչեց քանի մը ուրիշներու, Վարուժայ արի անպիտան ստի:

Մահը մօտ զգալու եւ ծագող իւրաքանչիւր օրը իբրեւ վերջինը ազդելու զգայնութիւնը, կը սարսափենք ըսել, Պարոյր Սեւակին յատուկ վիճակ մը չի թուիր ըլլալ եւ միայն Մուշեղ Գալշոյեանի փորձառութեան մաս չի կազմեր: Նոյնը կը զգան եւ ուրիշներ: Ահաւասիկ որձակագիր Թուրքի Յովսէփեանի վերջերս արձանագրած մէկ ապրումը, որ համարեա՛ կրկնութիւնն է վերը նշուած Գալշոյեանի թելադրութեան.

«Մեր ժամանակներում մարդիկ այնպէս հեշտ են մեռնում, այնքան անպատելի, որ ստիպուած ես Աստուծոյ ամէն օրն ապրել վերջին օրուայ նման...»:

Յուսանք ու հոգեւին մաղթենք, որ մեր գրողներուն համար ծագող օրը վերջին օրը հաշուելու զգայնութիւնը լիտ այնու ստեղծագործական տաղանայէ մը թելադրուած մզում ըլլայ եւ ոչ թէ մահուան շարագուշակ նախըզացում մը...

ԴԱԺԱՆՕՐԵՆ ՊԱՐՋՈՒՆԱԿ...

Մէկ տասնամեակի մէջ, մեր ժողովուրդը զժբախտութիւնը ունեցաւ Հողին յանձնելու արկածաւար երկու դէմք, բանաստեղծ մը եւ դրագէտ մը, երկուքն ալ ճառատունեօքը տարեկանին, իրենց տաղանդին լիութեանը մէջ, Պարոյր Սեւակ եւ Մուշեղ Գալշոյեան, առաջինը ինքնաշարժի արկածով, երկրորդը՝ որսորդական:

Այսքանը ծանօթ է ամէնուն, մանրամասնութիւնները կը պակտին բողբոջին: Բերանացի լուրերուն սահմանը անցնող արձանագրուած երկու պարբերութիւն միայն ծանօթ են մեզի անոնց մահուան պարագաներուն մասին, մէկը «Բազմին»ի Յունուարի թիւէն, Մովսէս Հերկելեանի ստորագրութեամբ, միւսը «Սովետական գրականութիւն» ամսագրի Ապրիլի համարին մէջ, Լեւոն Հախվերդեանի ստորագրութեամբ: Երկուքն ալ անամբողջ, թիչ համոզել:

Կրկին կարգանք տուա՞նք.

«Նայն գիշերը ամէնքս իմացանք եղիութիւնը, որ նոյնութեամբ տարածուեցաւ ամէնուրեք:

«Կիրակի առաւօտ, երբ Մուշեղի ընկերները կու գան զինք արքեպիսկոպոս, որ որսի երթան, կ'ըսէ անոնց.

«— Եղբորս վրայ վատ երազ եմ տեսել: Տեսել եմ, որ եղբորս տունը վաւաւում է: Պէտք է գնամ եղբորս մօտ, թալիմ:

«Կ'երթայ թալիմ ու երբ կը տեսնէ, թէ սուէն ինչ կարգին է, խորոված կը պատրաստեն եւ կ'ուրախանան: Ճաշէն ետք, Մուշեղ իր նար կրացան կը փորձէ եւ ապա, եանգստամայալ համար, կը նստի ճարի մը վրայ, հրացանը՝ կողքին, խողովակը դնելով իր կողմը: Սիկարէթ մը ծխելէ ետք, երբ կ'ուզէ տուն վերադառնալ, ռաֆի ելլելու աստե՛ն, երացանը խողովակէն բռնելով՝ կը վերցնէ, սակայն դաւադիր միւս մը մտած կ'ըլլայ ձգանքն աւրանքը եւ պատճառ կը դառնայ մահացաւ պայթումիմ: Փամփուշտի ամբողջ կապարը կը մխրճուի ձախ կուրծքը: Անմիջապէս կը փոխադրեն զինք թալիմի մօտիկ երանդամանը, ուր կիրակի օրուցնէ կը խնամուի, բայց եակառակ մասնագէտ ու փորձուած բժիշկներու գերմարդկային միգրում, ներքին արիւնհոսութեան ձեւերակոծով՝ խեղդամահ կ'ըլլայ:

«Մուշեղ իր նոր հրացանը կը փորձէ եւ ապա, հանգստանալու համար, կը նստի ճարի մը վրայ, հրացանը կողքին, խողովակը դնելով իր կողմը...»

Կեանքի մէջ կրնայ ամէն ինչ պատահել, այնուամենայնիւ, որուած պատկերը տրամաբանական չի թուիր: Լսուած բան է, որ որսորդ մը հրացանը կողքին զետեղած պահուն խողովակը իր կողմը օւղղած պահէ, այն ալ հրահարի միւղտերով խնողեալ կէտի մը վրայ:

Ահա եւ Լեւոն Հախվերդեանի խմբագրած բացատրութիւնը Պարոյր Սեւակի մահուան պատահարին մասին:

«Այնպէս, ինչպէս պատմեցին՝ կատարուածը ծովերից անցնելու եւ առում խեղդուելու նման աննախնայան բան էր: Բայց երբ եզանք աղետի վայրում՝ դա երեսաց է՛լ անիլի աննախնայան: Մենք գիտէինք, թէ ինչ վճարանգար կեանքներ կան միջեւ այդ վայրը, կեանքներ, որ անվարժ վարարքը դժուար պիտի անցնէր: Բայց Պարոյրն անցել էր դուրս եկել տափարակ հարթավայր եւ այնտեղ տապալուել, այնտեղ, ուր ամենից անվարժն էլ կարող էր անցնել:

«Առեղծուածային աղէտ:

«Առեղծուածով իսկոյն եւեթ գրադուէց պետական աւտօտեսչութեան յանձնաժողովը:

«Տեղագնում կատարելով, չափուած անելով՝ մասնագէտները յանգել են այսպիսի եզրակացութեան. ոչ այնքան մեծ արագութեամբ Պարոյրը գուրս է եկել հարթավայր, բայց ձախակողմեան անիւները եղել են խնուղու ասֆալտի վրայ, աջակողմեան երկու անիւր՝ ճամբերին: Ամբողջ մեքենան յընդուի ֆաշիու համար, պէտք էր նայել կատեցնել ընթացքը, դանգաղեցնել արագութիւնը եւ ասպ թեքել զեկը դէպի ձախ: Պարոյրը հակառակն է արել՝ աստով սեղմել է ոչ թէ արգելակը, այլ դրա կազմին գտնուող գազը՝ մեքենայի ընթացքն օւելի եւս արագացնելով: Երբ միաժամանակ զեկը թեքել է դէպի ձախ՝ առաջին անիւները փոխել են իրենց դիրքը եւ, ուղիւ դիրքից կտրուել թեք դիրք ընդունելով, մեքենային ստիպել են մի քանի անգամ շուռ գալ գլխի վրայ: Փաստօրէն առաջին անիւներն ընկել են արագընթաց մեքենայի տակ. այսպիսի դէպքերում աղէտն անխուսափելի է, եւ մեքենան գլուխկանձի է տուել, այն էլ ոչ թէ մէկ, այլ մի քանի անգամ... Մնացածը յայտնի է՝ միանգամից:

«Կար հաւանակամից ոչ հեռու մի ենթադրութիւն եւս. այն, որ շինք-մուսֆին նպատակ է Պարոյրին առաւօտները բռնող հազը, խնդրող, արտասուք բերելու չափ աստիկ հազ: Բայց կասկած կար, թէ հազը բռնել է մեքենան թեքելու պահին:

«Իստմանօրէն պարզուեակ պատմութիւնս:

Իրապէս զառեղծուածային աղէտը եւ իրապէս զաժանօրէն պարզուեակ պատմութիւնը, մանաւանդ տրուած այն պատճառարանութիւններուն հիմամբ, որ «մեքենային ստիպել են մի քանի անգամ շուռ գալ գլխի վրայ»: Մանաւանդ «փաստօրէն»ին հետեւող փաստերուն հետեւանքով. «Փաստօրէն առաջին անիւներն ընկել են արագընթաց մեքենայի տակ, այսպիսի դէպքերում աղէտն անխուսափելի է, եւ մեքենան գլուխկանձի է տուել, այն էլ ոչ թէ մէկ, այլ մի քանի անգամ»:

Չոր արամարանութիւնը կ'ըսէ, որ քանի ժը անգամ իր գլխուն վրայ շուռ եկած, «գլուխկոնձի» տուած եւ առկէի մասով արագընթաց մեքենայի ժը տակ մնացած մեքենան առնուազն քանի ժը տեղէ պիտի վերադարձէր, նպտուէր, մինչդեռ...

Պարոյր Սեւակի մահուան վաղորդայինի մեղի ծանօթ երիտասարդ գրող ժը Հայաստան զնայ ու այցելեց նաեւ բանաստեղծին արկածավայրը եւ աչքէ անցուց այն մեքենան, որով պատուհած էր արկածը: «Անկարելի է, — կ'ըսէր երիտասարդ գրողը, — որ մարդ Հաւաստայ, թէ այդ ինքնաշարժին հետ արկած պատահած է, անկարելի է»: Մեքենաներու ներքին թէ տրտաքին պատկերներուն լաւ ծանօթ էր ան. իր գործն էր, հասցի նամբան, մէկ ակնարկով կը ճշդէր որեւէ ինքնաշարժի պատկերն ու կարողանալութիւնը, եւ բնաւ պէտք չունէր անճիշտ տեղեկութիւններ հաղորդելու: Պարոյր Սեւակի երկու դասակներուն անվնաս մնացած ըլլալու հանգամանքն ալ կը հաստատէ, որ մեքենան չէր կրնար «մի քանի անգամ շուռ եկած ըլլալ գլխի վրայ» կամ «գլուխկոնձի» տուած ըլլալ: Տրամարանակա՞ն է, որ նման պարմաններու մէջ ցնցում ժը կամ վէրք ժը ստացած չլլան փոքրիկները...

Թէ՛ Պարոյր Սեւակի եւ թէ՛ Մուշեղ Գալշոյիանի մահուան պարագաները Հաւանարար ունին աւելի համոզիչ բացատրութիւններ, որոնց տեճկուեթեամբ կը սպասէ Հայ մարդը...

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ԳԱԻԸ...

Ե՛ւ Պարոյր Անակին պատահած աղէտին, ե՛ւ Մուշեղ Գալշոյեանի արկածին առիթով, մարդիկ յիշեցին անշուշտ նմանօրինակ դժբախտութիւններ ու չկրցան զոգել իրենց հայրոջանքը մեր բախտին, մեր բախտը տնօրինող անտես ուժին, նախախնամութեան: Իրապէս անուոր է հաստատել, որ մինչ ուրիշ ժողովուրդներու մէջ նման աղէտները ընդհանրապէս կը կազմակերպուին յայտնի շարագործներու կողմէ եւ ընդհանրապէս պետական շրջանակներու մէջ, մեր պարագային նոյն աղէտները տեղի կ'ունենան բացառապէս կոյր պատահականութեամբ, նախախնամութեան անէնքով ու միշտ իմացական մարդերէ ներս, բանաստեղծներու, գրագէտներու:

Այս տարբերութիւնը աւելի պարզ դարձնելու համար՝ յիշենք օրինակներէն մէկը:

«Նիւրեմպերկի վերջաբանը» անուն հասուար աշխատատիրութեան հեղինակը՝ Ա. Պոլարոկ կը պատմէ, որ մարաշախտ Կէօրինկ կը սարսափէր Գնթափոյի պես Հենրիխ Հիմլէրէն եւ յաճախ կ'ըսէր, որ Հիմլէրի մահուան յաջողող առաջին քառասունութ ժամերը իրեն համար ամենավատագուար ժամերը կրնան ըլլալ, որովհետեւ «Հիմլէր անպայման կը փորձէր ինձ վերացնել մէջտեղից: Կը յօրինէր «Եղծրախտ պատահար արտամեքենայում», կամ «Սրտի նոպա թանկագին փորձերի մահուան պատճառով», կամ նման էլի ինչ-որ բան»:

Ապա, Պոլարոկ կը յայտնէ, թէ զիւային այդ մեքենականութեան անձանք չէր եւ ինքը՝ Կէօրինկ:

«Ինչ նագիական վարչակարգի արշալոյսին՝ 1933 թուականի Օգոստոսին, Հերման Կէօրինկ իր մօտ է կաթնալմ պրուսական ռուսիկանութեան ամենաճանաչուր քրեագէտ Ներիքի եւ նրան առաջադրանք է տալիս ատաճաղիլ յայնմ աղտ զկազմակերպել» Գրիգոր Շարտերի համար: Յետոյ նա մեծահագարար զիջում է եւ համաձայնում, եթէ իարկ յինի ատաճաղիլային աղտը փոխարինել զորսի ժամանակ զժրախտ դէպքով»:

«Աւտոմոպիլային աղէտ...»:

«Որո՞ր ժամանակ դժբախտ դէ՛պք...»:

Նման մեքենայութիւններ, ըսինք տեղամ ձը, սարքուած են պատմութեան մէջ, պարտական ու պետական միջավայրերէ ներս, մակարդակներու վրայ, իշխանամուտութեան մոլեգնութիւններով, մինչդեռ մեր պարագային նոյն հարուածները կը պատահին ուժի եւ իշխանութեան հետ որեւէ աղերս չունեցող անձերու, ի ընտրենէ խոնարհ, բարի, մրցակցութեան յօշոտիչ բնազդներէ բոլորովին զերծ խառնուածքներու, բանաստեղծներու, գրողներու, ու բանաստեղծներու ընտիրին, գրագէտներու ընտիրին:

Իրապէս անուոր է հայ գրականութեան վիճակուած բախտը:

Թողախտը չէր բուեր կարծէք, թուրքը պակաս բան ձգած էր կարծէք, ստալինեան մասլէն յաղեցած չէինք կարծէք, եւ հիմա բոլորովին չըսպատուած հարուածներ, միշտ հայ գրականութեան ուղղուած, հայ մշակոյթին, ուսողթա՛ր, որտորդական դէ՛պք, այս անգամ ճակատագիր անօրինողին կողմէ, որ մեր դպրութեան արշալոյսէն սկսեալ կը դաւէ մեզի, կ'ըստէ ու կը ջոխնախէ ամէնէն օժտուածները, արթուն պահելով շարունակ հայրոյնու մեր արամադրութիւնը...

Կ Ե Ղ Ծ Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ի Մ Ա Ս Ի Ն

Ռուսական «Վոքրասի փսիսուսի ի Փիլասոֆի» պարբերաթերթի 1897-1898թ թանի մը համարներուն մէջ Ա. Թոլսթոյ ստորագրած է «Ի՞նչ է արուեստը» խորագրով յօդուածաւարը մը:

Իր արծարծած հարցերուն այսպաշնութեամբ եւ բազմաբովանդակութեամբ՝ այս յօդուածաւարը արայտմ զուրս կ'իշնայ մեր մտահոգութեան սահմանէն: Սակայն անոր մէջ տեղ զտած կեղծ արուեստի բնորոշումը, անոր տուն տուող պատճառները եւ քսաներորդ դարու արուեստին մասին կարգ մը ճշմարիտ նախատեսութիւններ, իբրեւ առանձին նիւթ՝ առիթ կ'ընծայէ ակնարկ մը նետելու «արուեստը արուեստի համար», «նպատակաւոր արուեստ» եւ «զանգուածային գործածութեան համար արտադրուած արուեստ» հասկացողութիւններուն, ինչպէս նաեւ կեղծ եւ իրաւ արուեստի բնորոշումներուն վրայ:

Թոլսթոյի համամայն, «մեր ընկերութեան մէջ արուեստի կեղծ գործերու արտադրութիւնը՝ հիմնուած է չորս պայմաններու վրայ — արուեստագէտներու գործերուն փոխարէն տրուած մեծ վարձատրութիւնները, անոնց հետեւանքով առաջ եկած արհեստավարժութիւնը, արուեստի քննադատութիւնը եւ արուեստի դպրոցները»:

Առաջին պայմանը գեղարուեստական գործունէութեան արհեստավարժութիւն վերածուելուն կոչուած է: Արհեստավարժութիւնը պատճառ կը դառնայ, որ գեղարուեստական գործունէութիւնը խզուի մարդկային գործունէութեան ալլմարդրէն: Այս խզումը, իր կարգին, կրկու երես ունի — արհեստագիտական

խզում եւ ընկերային խզում:

Արհեստագիտական խզումի, մարդային մասնագիտութեան եւ անոր մէջ հրմտանալով տառաջան արհեստավարժութեան հետեւանքով, արուեստը ո՛չ միայն ինքն իրեն համար առանձին ոյրտ մը ստեղծեց, այլեւ, վարձատրութիւններու բարձր համեմատութիւններուն բերումով, դարձաւ առանձնաշնորհալ եւ ընտրանի դասակարգի մը սեփականութիւնը:

Այս իրողութեան ակնարկելով, Թոլսթոյ կը գրէ՝ «Անմիջապէս, որ հարուստները ամէն հոգեկի արուեստ լա՛հ համարելու սկսեց եւ նման արուեստ մը ընկերային մնացեալ գործունէութիւններէն աւելի լաւ վարձատրուելու սկսաւ, մեծ քիւսով մարդիկ իրենք զիրենք այս գործունէութեան նուիրեցին, իբրև արդիւնք ունենալով այն, որ գեղարուեստական գործունէութիւնը նախկինէն բալորվին տարբեր նկարագիր մը հագաւ եւ արհեստի վերածուեցաւ»:

Այս բնթացքով, գեղարուեստական գործունէութիւնը դարձաւ բարձր դասակարգերու հանդէպ անուշուած ատելութեան ենթակայ, տրուած բլլալով, որ անիկա ընկերային անհուսաարութեան սերմերը կը կրէր իր մէջ:

Աւելի՛ն, բարձրորէն գնահատուած եւ ժտրմատրուած արհեստ մը դառնալուն, ենթակայ դառնալով վարձատրող անձնրու հանցքի բմբուծին — որուն պէտք է ծառայէր արուեստը — արհեստավարժ արհեստագէտը իրեն համար ստեղծեց բոլորովին օտար հետաքրքրութեան դաշտ մը, արուած ըլլալով, որ արուեստը արժեւորող չափանիշը իրմէ դուրս գտնուող արժեչափ մըն էր՝ դրամը: Արուեստի

գործի մը տուաւ կամ նուազ ճշգրիտ գընահատանքը, մեկնելով անոր գեղարուեստական արժանիքներէն կամ որակէն, անհետացաւ: Ասիկա պատճառ դարձաւ, որ արուեստի կապերու նոր ստեղծուած գնահատանքը այդ մարդերուն մէջ կատարեն մասնագիտացած անձեր, ինչ որ, իր կարգին, ստեղծեց նախ՝ վերին զասակարգերու: Հովանաւորութեան ներքեւ գործող արուեստի քննադատներու խրճրակ մը, եւ երկրորդ՝ քննադատութիւնը դարձուց արհեստավարութիւն մը:

Ասիկա, իր կարգին, կեղծ արուեստի ստեղծման երկրորդ պայմանին կ'առաջնորդէ մեզ. «Երկրորդ պայմանը, — կը գրէ Քոլլիթոյ, — վերջերս զարգացած արուեստի քննադատութիւնն է. այսինքն՝ արուեստի գնահատումը ոչ թէ ամբողջ հաւաքականութեան կողմէ, մասնաւորաբար, ոչ թէ պարզ մարդոց կողմէ, այլ՝ գիտութիւն ամբարած մարդոց կողմէ, այսինքն՝ այստակարակ ճաշակի տէր մարդոց կողմէ»:

Քոլլիթոյ այս երևութիին առաջնալը կը վերագրէ, առաջին՝ ա՛յն իրողութեան, որ արուեստին մտաչելիութիւնը հարց մը դարձած էր ո՛չ միայն պարզ ժողովուրդին, այլև՝ զարգացած մարդոց համար, եւ երկրորդ՝ ա՛յն իրողութեան, որ արուեստին մտանալու կերպը ուղիղ փոխանցում ըլլալու փոխարէն, բարդ եւ անուղղակի գործառնութեան մը վերածուած էր, ինչ որ զգալ կու տար մասնագէտներու անհրաժեշտութիւնը:

«Քննադատները կը բացատրեն, — հեղձորէն կը շարունակէ Քոլլիթոյ, — բայց ի՞նչ կը բացատրեն... Արուեստագէտը, եթէ ճշմարիտ պոետաագէտ մըն է, օրինակներու փոխանցած է զգացում մը, որ իր փորձառութեան բովիւ անցած է: Բացատրելի ի՞նչ կը մնայ»:

Երբ որդ պայմանը, արուեստի դրոյրոցներու հիմնուածը, Քոլլիթոյի համաձայն, ուղիղ հետեւանքն է արուեստին մասնաշատուկ, առանձին գործունէութիւն մը եւ առանձնաշնորհեալ, ճշտօրէն արհեստ մը դառնալուն: «Արուեստի այստակարակութեան երրորդ պայմանը, — կը գրէ ան, — արուեստի գայրցներու

յայտնութիւնը, հազիւ թէ օգտակար ըլլայ»:

Հոնաորութեան եւ գրականութեան գտարնթացներ, նկարչութեան ակադեմիաներ, երաժշտութեան ըստաններ, թատերական արուեստի զարոցներ ուղիղ հետեւանքն են ա՛յն իրողութեան, որ արուեստը զարգած էր ամբողջ ժողովուրդին համար ստեղծուած իրադրութիւն մը ըլլալէ: Շղթան, այնուհետեւ, այս ձևով կը քակուի: Արհեստ դառնալով, զայն սորվեցնելու եղանակներ ըստեղծուեցան, եւ այս արհեստը ընդգրկող մարդիկ սիտան արհեստավարտական զարոցներ յանձնել:

Արհեստավարտ զարոցներուն գիտաւոր ոճերը, ըստ Քոլլիթոյի, ա՛յն է, որ արուեստի հանգէպ տնոնց որդեկրած մեթոդները զուտ արհեստագիտական է: Այ՛ մէկ զարոց մարդու մէջ կրնայ ներգրել ա՛յն հարազատ գգացումը, որ արուեստի էութիւնն ու գոյութեան իմաստն է: Դպրոցը, միեւնոյն ատեն, արուեստագէտին անհատականութիւնը կը քանգէ եւ ան իր իւրայատուկ գգացումները չի կրնար արտայայտել:

Արդիւնքը՝ զանգուածայնօրէն արտադրուած արուեստ է: Կամ ուեւի ճիշդ՝ արուեստի կեղծ գործերուն զանգուածայնիւ արտադրութիւնը: «Զանգուածայնօրէն արտադրուած հարիւր հազարներով արուեստի գործերուն մէջ, — կը գրէ Քոլլիթոյ, — հազիւ թէ մէկ գործ իր հնդիմակին փորձառութեան բովիւ անցած գգացումներէ կը բխի: Մնացեալները խարդախուած արուեստի գործեր են, որոնց մէջ գգացումի փոխանցումը փոխարինուած է ընդօրինակութեամբ, փոխառութեամբ, հետաքրքրութիւն ստեղծող եւ անակնկալի բերող շինծու հակադրութիւններով»:

Թէեւ Քոլլիթոյ արուեստի հանրօգուտ դերին մասին դրուատական դիրք ունի եւ դէժ կը կանգնի ինքնանպատակ այնպիսի արուեստի գործերու, որոնք հանրօգուտ զեր չեն կրնար կատարել կամ կ'արտայայտեն ընտրանիին յատուկ գգացումներ, որոնք չեն բաժնուիր ժողովուրդին լայն հաստատութիւն կողմէ, միև

կողմէ, սակայն, իր Ժամանակին յիշեալ պատճառներով առաջ եկած մասնաշաղկապներով թիւն մը հետապնդող եւ արուեստի լայն հորիզոնները սահմանափակող ձեւերով արքային, ինչպէս նաեւ զանգուածայնորէն արտադրուած արուեստի գործերուն հաւասարապէս դէմ կը կանգնի, իրբեւ խարդախուած եւ կեղծ գործեր:

Քառական է ակնարկ մը նետել այն ոչ-գեղեցկադիտական զգացումներուն վրայ (որոնք երբ արուեստի մէջ կը մուծուին՝ խարդախուած կամ կեղծ գործեր տրտադրելու կը նպաստեն) որոյնցի յատկանայ, թէ Թոլսթոյ ինչո՞ւ որդեգրած է այս դիրքորոշումը: Աւելի՛ն. այն անձերը, որ այս տեսակ արուեստ կը մըշակեն, ո՞չ միայն զարուեստի խարդախքը՝ տուող գործեր կ'արտադրեն, այլև նոյնիսկ իրենք խարդախքով յղիացած գործերէն մը կը վարեն: Ասիկա, իբր կարգին, պատճառ կ'ըլլայ, որ ժողովուրդի լայն խաւին մէջ որոշ զգայութիւններ, զգացումներ եւ մեթոդներ կ'առանկեն մշակուին: Այս առանկելներն դիտած՝ Թոլսթոյ նոյնիսկ աղիտարեր կը գտնէր արուեստի սղոցները:

Կեղծ կամ խարդախուած արուեստ մշակողները, Թոլսթոյի համաձայն, «... յայտապէս արտադրուած արուեստի գործերուն նիւթը կամ ամբողջութիւնը կ'ընդօրինակեն, կամ անկէ մասեր փոխանակելով իրենց գործերուն մէջ կը յարմարեցնեն, ձեւով մը, որ անոնց բոլորովին մտքը ստեղծագործութիւններ երեւիլը կ'երաշխայաւորէ:

Այս տեսակի ընդօրինակութեան մը պարագային, արուեստագէտին տեսանկիւնէն դիտելով հարցը, կը նկատենք, որ անոր ստեղծագործութիւնը ծնունդ կ'առնէ գործածուած զգացումներէ եւ գեղարուեստական գործածուած ըմբռնումներէ, որոնք փորձառութիւնը ներկային մէջ սպրկել կը հեռացնեն արուեստագէտը եւ պայն կը միտնեն անցնալի գեղարուեստական փորձառութիւնները վերապրելու եւ ոգեկոչելու մէջ: Ասոնք տեսական զգացումներ են, որոնք արուեստէն շնորհիւր, այլ՝ արուեստի գիտութիւնէն:

Արուեստի խարդախուած գործի մը

մէջ անմիջապէս կը նկատուին մանրամասնութիւններու հակամիտութիւններ, որոնք արուեստագէտին ներշնչման խակ եւ անսաշ զգայութիւններուն խտտող կը համեմատին: Իսկական արուեստագէտը, խորքին մէջ, ներշնչման առթած միջոցներին հարապատ վերաբարձրման աւելի կարեւորութիւն կու տայ, քան մանրամասնութիւններու, որոնք միայն գործին շարքը կը կազմեն: Այս իրողութեան ակնարկելով՝ Թոլսթոյ կը գրէ. «Տարօրինակ է, որ արուեստի գործ մը իմ իրապաշտութեան մակարդակին եւ մանրամասնութիւններու ճշգրտութեան հիման վրայ կը դատուի: Ասիկա կը նմանի պտուղին սննդարարութիւնը անոր արտաքին տեսքէն դատելուն: Երբ արուեստի գործ մը կը ստեղծենք համաձայն իմ իրապաշտութեան, մենք արուեստի գործի մը մասին խօսել կը զարդիմք եւ կը սկսինք խօսել ընդօրինակուած արուեստի մասին»:

Ընկալողին տեսանկիւնէն դիտած՝ հարցը տարբեր գարձուածք կը ստանայ, երբ խնդիրը արուեստի կեղծ կամ խարդախուած գործի մը ընկալման կը վերաբերի: Այն նորարարութիւնները եւ անակնկալ հակադրութիւնները, որ ցնցում կ'առաջացնեն եւ զգայացունց են, զգացումներ չեն փոխանցեր, այլ պարզապէս ջրղերու լարերուն հետ կը խաղան: Այս ձեւով — եւ հոս արդէն խարդախուած կամ կեղծ արուեստի աղիտարեր հետեւանքներու մարդին մէջ կը մտնենք — մարդուն ջղային դրութեան մէջ ստեղծուած որեւէ լարում՝ վասնուած կենսունակութիւն մըն է, որ կրնար աւելի դրական եւ կենսական նպատակներու ե գործերու մէջ օգտագործուի:

Ջրղերու սպասում առաջացնող խարդախուած կամ կեղծ արուեստի միւս աղիտարեր երեսը այն է, որ անիկա նոյնպէս մտքի յոգնութիւն կը պատճառէ: Արդարեւ, Թոլսթոյի համաձայն՝ «Նոր օրերու արուեստագէտները արուեստի գործ մը հետաքրքրական կը դարձնեն, մարդը մտազբաղ դարձնելով: Ասիկա կը յաջողի ընել դիպաշարի մտքը կապելով համգոյցելով... կամ արտայայտութեան եղանակին մէջ նորարարութիւններ մըտ-

ցընելով, բամ մը, արան վերջերս շատ կ'աղաւթնին: Բանաստեղծութիւն եւ արձակ, նկարչութիւն, քառերայնաց եւ երաժշտութիւն այնպիսի՝ ձեռով մը կերտուած են, որ պէտք է հանելուկի մը պէս լուծուին եւ ննթադրութիւններ ընելու այս ընթացքը հաճոյք ալ կը պատճառէ, յար եւ նման արուեստի իսկական գործի մը ստաջացուցած հաճոյքին»:

Քննականորակ, կեղծ կամ խարդախուած արուեստի բնորոշման այս ծիրին մէջ Քուլթոյ չի մխրճուիր իսկական արուեստի ի՞նչ բնորոշումը կատարելու աշխատանքին մէջ: Նոյնպէս, ան չի խօսիր իսկական արուեստ առաջացնելու եղանակներուն մասին, բան մը, որուն ճամբան տնորոշ կը թուի նոյնիսկ իրեն չամար: Յասակ է, որ Քուլթոյի Համար իսկական արուեստը ինքնանպատակ չէ, բայց միևնոյն ատեն չէ նաեւ: «Փրէշմ սրք» կամ զանգուածայնօրէն արտադրուած արուեստ:

Սակայն, խօսելով արուեստի դերին մասին, Քուլթոյ կը գրէ. «Արուեստը կատարելիք հսկայական պարսկականութիւն մը ունի. իսկական արուեստին պարսկականութիւնն է, գիտութեան օժանդակութեամբ եւ կրօնին առաջնորդութեամբ՝ երաշխայնել մարդաց խաղաղ համագործակցութիւնը, բամ մը, որ այժմ արտաքին միջոցառումներով կ'իրագործուի, ռազմարարներ, ստիկանութիւն, բարե-

գործակամ հաստատութիւններ, գործարաններու խուզարկութիւն, եւայլն: Ասիկա պէտք է սպասօրէն եւ ուրախութեամբ կատարուած մարդկային գործունէութեամբ իրագործուի: Արուեստը պէտք է արգիլէ վայրագութիւնը:

«Ասիկա միայն արուեստը կրնայ ընել»:

Քուլթոյի Համար կրօնը միշտ ալ ուղեկոն բարձր թռիչքներու եւ միսթիքապրումներու ենթահող եղած է, ձերբազատ՝ Հաւատքի եւ վարդապետական կաշկանդումներէն, բան մը, որ, ինչպէս տեսանք, գիտութեան առջև գուռները լայն բանալու կը նպաստէ: Իայց, միևնոյն ատեն, տնիկա ստեղծագործ ներշնչման եւ ստեղծագործ գործունէութեան Հանրօգուտ ենթահողն է եւ շուտ կը նմանի իսկական արուեստի ներշնչումին եւ օգտակար գործունէութեան:

Ասիկա ստեղծագործ ոգիին շինարար այն մասն է, որ իբրեւ պրոմէթէական ազատագրուած յանձնառութիւն՝ մարդկութիւնը, աշխարհի սկիզբէն ի վեր, իր վրայ վերցուցած է, երբ աստուածային նախահնամուտները յուսախար ըրած է զինք: Կրօնի եւ գիտութեան ճիշդ կեդրոնը գտնուող արուեստի, իսկական արուեստի ոլորտը այդ յանձնառութեան իրազօրծման ճիշդ միջոցը կը թուի Քուլթոյի:

Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ

«ՕՒՆՐԱՆԱ»ՑԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

ՃԱՆԳԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ
ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նոյն Հոկտեմբերի 14ին № 5179 դրութեամբ Ոստիկանութեան Դեպարտամենտը՝ Լրացնելով Քրիֆիտում պատրաստուող Համազումարի(23) ձախն Հափորդած տեղեկութիւնները՝ մասնանշեց նախաձեռնողներին ու մասնակիցներին, աւելով առաջին՝ Արշակ Տէր-Պրեպոբանի(24) նկարագրերը, թէ նա ապրում է Քրիֆիտում իր սեփական տանը, գլխաւորն է Հայկական շարժման աշխատարձակներէ, Հրոսակախմբեր է կազմակերպում, զինում եւ թուրքիս անցկացնում, գրեմական միջոցներ է ժողովում, կապ պահպանում Մուկուսյի եւ Պետերրուզի իր նման ազիտատներէ եւ խմբերի ներկայացուցիչներին հետ: Այսպիսով պէտք է ընդունել, որ 1892 թուին ո՛չ միայն իրողութիւն էր Հայկական շարժումը յօգուտ ճնշուած ցեղակիցներէ թուրքիսայում, այլև այդ շարժումը ստացել էր ինովին կանոնաւոր կազմակերպութիւն եւ ընդգրկել ո՛չ միայն Անդրկովկասը, այլև՝ միւս տեղերը, սնդակ մայրաքաղաքային կենտրոններ Մուկուսն ու Պետերրուզը, անցնելով Ռուսաստանի սահմաններէջ Պարսկաստան(25), ուր հիմնարկուած է Հայկական յեղափոխական կոմիտէ, ինչպէս Ռուսաստանում եւ Եւրոպայում, որտեղ Հայ յեղափոխականները հիմնել են իրանց միութեան օրգան «Իրօշակ»ը: Սակայն ըստ այդ շարժումները ճանաչուած էին թուրքիսայի ղէմ ուղղուած, ուր Հայերի դերագոյն յոյսը թուրքաց Հայաստանի ինքնօրէնութիւն ստանալն էր(26):

Արդէն 1893 թ. նկատուած է տեղական Հայերի ինչ-որ ստանձնացումն եւ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան(27) գործունէութեան ուժեղացումն, ընկերութեան, որն ունի իր ներկայացուցիչները եւ նուիրատուութիւնների ժողովողները ո՛չ միայն Անդրկովկասի եւ Հիւսիսային Կովկասի քաղաքներում եւ Վիւզբում, այլև՝ իր գործունէութիւնն է տարածել Ռուսաստանի ըստ Հայաբնակ քաղաքներում եւ արտասահմանի կենտրոններում — Լոնդոն, Փարիզ, Ժնև, և այլն: Տեղացի ուսուցիչները, որ կրում էին ազգանուններ ուսուսական վերջաւորութեամբ Ակորով, Ստեփանով, և այլն, սկսեցին կոչուել ու գրել Հայկական վերջաւորութիւններով — Թակոբեանց, Ստեփանեանց, և այլն: Հայ քահանաները, որ դատարաններում, զօրքի մէջ կամ քաղաքացիական ծառայութեան մասնէյն աւուրէն էին երդւեցնում Հայերին՝ սկսեցին քաշուել եւ դանազան անհիմն պատրուակներով Հրոսակախմբի դրանից, ստաւրակելով երգումը կարգալ միայն Հայերէն: Առանձնացաւ եւ Հայոց կեկեցական-ծիսական դպրոցը, ըմբոստանալով աւուրէն դասաւանդման դէմ: Վերապէ՛տ ինտելիգենտ ունեւոր Հայերի եւ անդամ աւուսաց զօրքերի մէջ ծառայողների ընտանիքները, որ կա՛մ ձուլուել

էին ոռանդի հետ կամ չէին իմանում հայերէն եւ կատարելապէս անգլիա-նում էին այն — սկսեցին իրանց տները հրաւիրել երեխաներին հայերէն սովորեցնելու համար հայ ուսանողներին ու դիմնագիտաներին(28) : Հայ ժողովրդի այդ առանձնացումն Անդրկովկասում նկատել է զենեքաւաճար Եանկովսկին իր հաղորդագրութեան մէջ Ոստիկանութեան Դեպարտամենտին, թուադրուած 1893 թ. Մարտի 29ից, № 446, Երևոյթ, որի հետ՝ համապատասխան միջոցներ չձեռնարկելու դէպքում՝ պէտք է հաշուի նստել :

1893 թ. մէջ դարձեալ ղէպքեր եղան, որ կալանաւորուեցին հայերի ձեռքով ուղարկուած բերպան հրացանների ու փամփուշտների քոններ :

1894 թ. քննադատւած վարչութեանս գործերում հայոց շարժումը ոչընչով չի նշուած : Ակներու է, որ նրան չի յաջողուել ո՛չ պարզել Ոստիկանութեան Դեպարտամենտի մասնաշաժ համադրուած քաղաքացիների յեղափոխական գործունէութիւնը, ո՛չ յայտնաբերել վերջ յիշուած հայ յեղափոխական կոմիտէն (Բիւրօ), իսկ որ նրանք հաւանորէն աշխատել են ուժերի ծայրայեղ լարումով — դա նկատելի է թուրքահայերի փորձից 1894 թ. ապրտամբուել թուրքալուծ, որը ճշուեց ո՛չ միայն թուրք կառավարութեան իշխանութեամբ, այլև՝ հայերի ղէմ զագագած մուսուլման բնակչութեան կողմից : Յիշենք Սասունի(29) կոտորածը, որը Երոպայում եւ Ռուսաստանում հայ կոմիտէներն իրանց օրգաններում ամէն կերպ ջանում էին պատկերացնել իբրև նոր զաղանութիւն, որ թուրք իշխանութիւնը եւ մուսուլմանները առանց պատճառի գործադրում են ճշուած քրիստոնէայ հայերի վրայ :

1895 թ. Ապրիլի 18ին № 3272 գրութեամբ Ոստիկանութեան Դեպարտամենտը տեղեկացնում էր վարչութեանս, թէ արտասահմանի իրադէկ պաշտօնական անձերից ստացած տեղեկութիւնների համաձայն սպասուում է, որ 1895 թ. Մայիսին հայ բնակչութեան զինուած ապստամբութիւն բռնկուել թուրքական փոքր-ասիական նահանգներում, ըստ որում ղէնքը, մասամբ գնուած մեր կողմից հայերի միջոցներով, պիտի փոխադրուի Պարսկաստանի վրայով, ուր պիտի կազմակերպուին ապստամբների զինուած խմբեր : Ոստիկանութեան Դեպարտամենտը հաղորդում էր նաև, որ մուսուլման աղբիւրներից ստացուած են տեղեկութիւններ, թէ Անդրկովկասում ապրող հայկական շարժման ղեկավարները արդէն ձեռնամուխ են եղել կազմակերպելու Բիւրօ եւ կոմիտէներ, որոնք գործում են առաջիկայ ցուցմունքներով, որ Պարսկաստանում հիմնուած Բիւրօն(30) պիտի միանգամայն ինքնուրոյն լինի եւ առանձին գործող կուսակցութեան անուն պիտի ստանայ, որ Թիֆլիսում գտնուող շարժման ղեկավարները ետանդուն յարաբերութեան մէջ են արտասահմանի ազիտատորների հետ, որոնցից է Մելիքեանը(31) ժընեւում, որում են ժողովում եւ արտասահման փոխադրում, առաւելապէս Անգլիա, որ այդ միջոցներով կազմակերպուի ապստամբութիւնը եւ օգնութիւն հասցընուի հայ ապստամբներին : Այդ ազիտատորներից առանձին ուղարկութեան արժանի է Պաշատուր Մալումեանը(32), որ ծառայում է Թիֆլիսում հրատարակուող «Մշակ»(33) թերթի խմբագրատանը : Ապրիլի 24ին № 3429 գրութեամբ Դեպարտամենտը տուաւ նոր ցուցմունք Թիֆլիսում գործող Բիւրօյի եւ առանձին անձանց մասին :

1895 թ. Մայիսի 17ին № 3980 գրութեամբ Դեպարտամենտը հաղորդում էր իր ստացած նոր տեղեկութիւնների մասին, թէ կազմակերպուել է նոր հայկական ասոցիացիա, որը քարոզում է ընդհանուր հայկական ապստամբութիւն եւ սոցիալ-յեղափոխական ողու զարգացումն ժողովրդի մէջ : Թիշեալ ասոցիացիան, որի կենտրոնը Հայաստան պիտի լինի, իսկ ճեղքերը

Արեւմտեան Եւրոպայում, Ասիայում եւ Պարսկաստանում, ունի իր տպագիր «Վոխ»(34) օրգանը: Այդ աստղիացիայի ներկայացուցիչը Թիֆլիսում Հանդիսանում է ոմն Ղուկասեան: Միաժամանակ ցուցմունք ստացուեց, թէ Հայկական շորժումը պաշտպանութիւն է գտնում ուստ յեղափոխականներէ կողմից, որի դիմաց Հայերը ռուսներէ համար, տուած հասցէներով, արտասահմանեան հրատարակութիւններ եւ փոխադրում Բաբու եւ Աստրախան(35): Յուլիսի 12ին Ռ 4866 գրութեամբ Դեպարտամենտը մատնանկէց, թէ «Կոստ» աստղիացիայի վարչութիւնը, որ ըստ երեւոյթին գտնուած է Թիֆլիսում, փոխադրուած է Քուրքաց Հայաստան, իսկ Արեւմտեան Եւրոպայում եւ Ռուսաստանում պիտի լինեն միայն ներկայացուցիչներ, որոնց վրայ պարտք է ընկնում նուիրատուութիւններ ժողովել, ներկայացումներ ու վիճակախաղեր կազմակերպել, որով պիտի օժանդակուեն օրհայտատական խմբակները Ռուսաստանում եւ Քուրքայում եւ այդ խմբակներին պատկանող անձինք: Ապա յիշատակուած էր, թէ այդ աստղիացիան հրատարակել է արդէն կամ պատրաստուած է հրատարակել մի ստղիալիստական գրքոյկ, որը պիտի ընդգրկէ բոլոր ապստամբական եւ այլ օրհայտական շորժման(36) միջոցները: Դեպարտամենտի ցուցմունքներով եւ սեփական տեղեկութիւններով Վարչութիւնն կազմեց Հայկական շորժման մասնակիցներէ ամբողջ մի ցուցակ, բաղկացած 21 անձից(37): 1895 թ. Յուլիսի 25ի Ռ 5299 գրութեամբ Դեպարտամենտը նոր ցուցմունքներ տալով «Կոստ» միութեան կազմի մասին — նշում է, թէ նրա՝ իր վնասակար դործունէութեամբ ամէնից աչքի ընկնող անդամ Ազատեանը ապրում է Թիֆլիսում եւ դժգոհում էր, որ շնայած այդ անձի 1890 թ. սկսած մասնակցութեանը Հայկական շորժման՝ նա դեռ եւս բաւարար չափով չի ճանաչուած Վարչութեանս կողմից:

1895 թ. Յուլիսի 4ին Ռ 650 գրութեամբ Կառավարչապետի դիւանատունը իր կողմից մասնանշում է մի շարք անձանց վրայ, որոնք ապրելով Ախալքալաքում(38), յորդորում են յօգուտ Հայկական շորժման:

Յուլիսի 4ին Ռ 5561 գրութեամբ Ոստիկանութեան Դեպարտամենտը հաղորդում է, թէ Հայկական ազգային շորժումը ընդունում է այնպիսի՝ չափեր, որ սպառնում է խանգարել կարգն ու խաղաղութիւնը Կայսրութեան սահմաններում, թէ ազիտատրոնի մի մասը չի բաւարարում նեղ Հայրենասիրական ինդիւրներով եւ ուղղակի հետապնդում է միջազգային ու յեղափոխական նպատակներ, որի պատճառով եւ անհրաժեշտ է դադարեցնել դրամի ժողովարարութիւնները ուսուսանելի մէջ, արգելել զէնքի եւ ոսկոյս միջոցի յղումը Պարսկաստանի վրայով Քուրքիա, այլեւ ձեռնամուխ լինել քննելու Հայ բանուորական յեղափոխական աստղիացիայի(39) դործունէութիւնը, պատասխանատուութեան կանչելով նրա անդամներին: Դեպարտամենտը առաջադրում էր ներկայացնել Հայոց շորժման մասնակիցներէ ցուցակը, որոնց մօտ պեներալ Յանկովսկու կարծիքով միաժամանակ կարելի է յաջող ելքով խուզարկութիւն կատարել, եւ կանխօրէն յարաբերութիւններ չսկսելով Դեպարտամենտի հետ՝ ձերբակալել Քուրքիա զէնք փոխադրող հրոսակների անդամներին՝ պատշաճ քննութիւններ սկսելով նրանց դործուղութիւններէ մասին:

Այս Վարչութեանս 1895 թ. դործերից երեւում է, որ դոյութիւն են ունեցել ինքնուրոյն Հայկական յեղափոխական կուսակցութիւններ — մէկը, որ ունի իր լրագիրը — «Էնչալ»(40) (ուսերէն թարգմանուած է «Ձաւնա» — Դ. Ա.) եւ հետապնդում է զուտ ազգայնական Հայկական նպատակներ եւ խիստ երկնում է, որ Քուրքահայերը չզերադասեն պարզ ուսուսպատակութիւնը իրանց համար ծրագրուող Հայկական պետութիւնից — միւսը Դաշ-

նակցութիւն իր «Իրօջակ» լրագրով, որ հետագնդում է նոյն նպատակները եւ ձգտում է կլանել առաջին: Գոյութիւն ունի այս վերջին կուսակցութեան Թուրքիայից դուրս գոյնուող կոմիտէների համագումարի հաշուետուութեանը, բայց յայտնի չէ համագումարի տեղը, միայն նշանակուած է, թէ այն տեղի է ունեցել 1895 թ. սկզբին(41): Դեպարտամենտի նոր ցուցմունքների համաձայն, որ մասնանշում էր արտասահմանից Ռուսաստան վերադարձած ուսուսւպատակ Ռուբէն Սանազողեանի(42) առանձնապէս աչքի ընկնող յեղափոխական գործունէութիւնը եւ յարաբերութիւնները արտասահմանի հայ յեղափոխական խմբակների-կոմիտէների հետ — 1895 թ. Սեպտեմբերի 6ին տեղի ունեցաւ նրա, Ղազարոս Աղայեանի(43) եւ միւս 111 անձանց (?) ձերբակալումը, բայց որում եւ հարցաքննութիւն բացուեց 320րդ յօդուածի մեղադրանքով: Ձերբակալուածները ճանաչուեցին յիշեալ հայկական յեղափոխական կուսակցութիւններից ստաջիտ — Հնչակի անդամներ:

Պատասխանատուութեան կանչուածների բոլոր ցուցմունքները, ի բաց առեալ անձնական դրաջմունքը՝ մի պատասխանի էր յանդում — ուսուսւպատակութեան առաջ մեղաւոր չենք, նրա իշխանութեան դէմ չենք դաւել: Բայց այդ կուսակցութեան ծրագիրը — «Մրագիր Հնչակեան սոցիալիստական-յեղափոխական կուսակցութեան»(44), որ բունում է հարցաքննութեան ընթացքում եւ գտնուած է գործի մէջ, հենց միայն իր կոչումով խօսում է այն մեղաւորութեան մասին, որ կայ նրա եւ Ստաիկանութեան Դեպարտամենտի վաղ մասնանշուած հայ յեղափոխական «Գոյն» կուսակցութեան միջին: Մրագիրն ուսում է. Հնչակեանների հիմնական համոզմունքները հետեւեալն են՝ արդի ճշնող տնտեսակարգը ծնել է հարուստներ ու շքանորներ. այն նպատում է իշխող ունեւորներին հարստահարել ժողովուրդը, շահագործել բանուորներին եւ ստեղծում է անհասարարութիւն եւ տնարդարութիւն: Այդ անհասարարութիւնը անդրադարձել է մարդկութեան տնտեսական, քաղաքական եւ սոցիալական կացութեան մէջ: Փոքրամասնութիւնը հարստացել է բանուոր մեծամասնութեան քրտինքով ու աշխատանքով:

Այս զուտ միջնադասին յեղափոխական ներածութիւնից եւ երկու նկատելի յայտաւումներից յետոյ, որ ըստ երեւոյթին հայ Թարգմանը անկարելի է համարել աւել ուսուսւպատակ — ծրագիրը շեշտակի անցնում է Թուրքահայերի կացութեան ու կուսակցութեան որոշմանը՝ նուսնել նրանց անկախութիւնը, ստեղծելով ժողովրդական ընարովի կարտապարութիւն բոլոր դասակարգներից, եւ այստեղ ընդհանրապէս այն նման է վերը յիշատակուած հայ յեղափոխականների ծրագրին: Յիշատակութեան արժանի է, որ այդ ծրագրներում կարճ յիշատակում է, թէ ինչպէր վերաբերում է Թուրքաց Հայաստանին, ապա խօսում է հայերի, հայ ժողովրդի մասին ընդհանրապէս, իսկ այս ծրագիրը բացայայտ խոստովանում է, թէ սուրի հեշտ է սոցատագրել Թուրքաց Հայաստանը, երբ Թուրքիան պատերազմի մէջ է որեւէ պետութեան հետ: Մրագիրը շեշտում է, թէ հայ յեղափոխական կուսակցութիւնները պիտի բոլոր ջանքերը գործադրեն, որ Թուրքիային յաղթող պետութիւնը չյափշտակէ Հայաստանը(45) եւ ապա միանգամայն պարզ յայտարարում է, թէ ժողովուրդը Թուրքաց Հայաստանում դտնուած է տառապանքի մէջ եւ հայերի պարտականութիւնն է բուժել նրա վէրքերը, գլխաւորապէս նուսնել ժողովրդական անկախութիւն եւ քաղաքական ազատութիւն Թուրքահայերի համար: Այս նուսնումից յետոյ նոյն եռանդով շարունակել հայերի ընդհանուր ազատագրական գործը ուսուսւպատակն ու պարսկական բռնակալ լծից եւ Հայաստանի երեք մասերից ստեղծել դաշնակցական ու ժողովրդական անդրապետ

առևթիւն, որը Հայերի Համար կը բանայ այն ուղին, որին ձգտում է ժողովուրդը:

Դեռ չէր աւարտում այս հարցաքննութիւնը, երբ արդէն Հոկտեմբերի 13ին ձեռքարկուեց (46) Ալեքսանդր Կոչինսկիի մասին նոր հարցաքննութիւն 1035 յօդուածի կարգով պատժագրքի 250 յօդ. մեղադրութեամբ: Նոյն ցուցմունքները, թէ մեղաւոր ենք հանդէպ թուրքական եւ ոչ առևտրական կառավարութեան (47) եւ կրկին կառարեալ բացատրում: Երանց հետամտած յեղափոխական ծրագիրը, որ բռնուած է հարցաքննութեամբ, կոչում է ծրագիր Հայ Յեղ. Դաշնակցութեան: Այն ստում է. Դաշնակցութեան նպատակն է ընդհանուր ապստամբութեամբ թուրքաց Հայաստանում նուաճել թաղաքական եւ տնտեսական ազատութիւն: Սկզբունք ընդունելով, որ ամէն ոք աէր պիտի լինի իր աշխատանքով ձեռք բերած սեփականութեան — Հայն էլ (չէ ասուած որ Հայ՝ թուրքական. առևտրական, կամ պարսկական, այլ ընդհանրապէս) իրաւունք ունի ուրիշներէ հետ հասարակութեան հետեւելու կենսից ու սեփականութիւնից: Ապա հետեւում են նոյն կանոնները, ինչ որ վերը բերուած ծրագրում, որոնք խօսում են Դաշնակցութեան ձգտումներէ, միջոցներէ, կուսակցութեան կազմակերպման եւ նրա լրագրի «Իրօշակ»ի մասին:

(Շար. 2)

ՏԵՂԵԿԱԳՐԻ ՆՈՒԹԵՐ

23. 1892ի ամբան է, որ Քիֆլիսի մէջ կը դամարուի խորքին մէջ բժն կիճուողի Ընդ. Ժողովը 2. Յ. Դաշնակցութեան. զէջ Յեղափոխականի Դաշնակցութեան անունէն կը վերածուի զէջ Յեղափոխական Դաշնակցութեան: Այ մէկ հետք մնացած է այս Ընդհանուր Ժողովին (ա՛յ աստեղագրութեան, ա՛յ ծրագիր), 2. Յ. Դաշնակցութեան Գոմբիի արխիւներուն մէջ: Տես Վիլան...», անդ, էջ 87:

24. Արշակ Տէր Գրիգորեան: Մեծ՝ Քիֆլիս: Յօդուած թուականներուն հանդիսացած է ղեկավարներէն մէկը Քիֆլիսուայ Հայրենակար Երեսմտորդութեան: «Մշակակոն» կը մասնակցի Հրատարակչական ընկերութեան գործունէութեան, (տե՛ս Տեղեկագրի նոթ 89): Պիտի հաստատուի Բագու, իրր Մանթաշի Զիրմի պաշտանայ եւ հետեայ քաղաքական գործունէութեան: Տե՛ս Դ. Ա.:

25. Արմենական, հելակեան եւ դաշնակցական յեղափոխականներուն համար, Պարսկաստանը շուտայտ է իրր խորքին: «... Իսպայի յեղափոխականները խարխոյ ունեցած են Յրաճում, մակիդոնացիները՝ Պալկարիան, լիկերը՝ Կալիցիան, եւ հայերը՝ Պարսկաստանը» (տե՛ս Մ. Վարսեղեան, զէ. Յ. Դ. պատմաբան, I, էջ 123): Առանց շարժման բացարձակ ազատութեան մը արամադրելու, Եսեբու կրկին զրկի մզանով ազատան մը հանդիսացաւ, ուր կարծի էր երկարատեան պատրաստութիւններու լիւրի, յեղափոխական գորղղութիւն կատարել, Փետայական խումբեր կազմակերպել, ղեկի լինութեան եւ զէլի թուրքիս փոխադրութիւն իրագործել: Այսպէս, հակառակ օմանեան կառավարութեան բողոքներուն, Հայ յեղափոխականները կը վայելեն տեսակ մը սերիւնական ազատութեան՝ Պարսկաստանի մէջ, երբեմն խանգարուած՝ պատահական Հայմանցով (օրինակ՝ 1897ին): 1905ի յեղափոխութեան հոգ, Անդրկովկասէն Ատրպատական կը խուճեն անոնք մեծ թիւով, եւ աստիճաների վեր կը խաղան իրանեան յեղափոխութիւններուն մէջ՝ 1906ին 1911: Տե՛ս Պիտի Վէլլ, անդ, էջ 68-69:

26. Այս թուականին (1892), Հայաստանի քաղաքական ինքնավարութեան յի նախատեսուող Դաշնակցութեան կողմէ: Ետտ շարժաւոր իրանց պահանջներուն մէջ՝ անոնք կը միտին պարզապէս օմանեան կայսրութեան ժողովրդավարացման:

27. Հայ Բարեգործական Ընկերակցութիւնը կիմտուած է Քիֆլիսի մէջ, 1881ին: Արտեանու ըլլալով կովկասեան քաղաքներու մէջ մասնաճիւղեր բանալու՝ 1894ին կ'ունեն

նայ արդէն 18 ժամանակը.— Երևան, Պաթուժ, Արեւմտահայաստան, եւայլն: Ընկերութեան նպատակն է օգնել Աղերկովկասի Հայութեան եւ նպաստել անոր ժողովրդագրութեան: Ասոր համար, կը բանջ դպրոցներ, կ'ստանան իրենց դաստիարակներու: Կը նպաստանային ծառայողական երկեր եւ պարբերաթերթեր, կը հիմնէ տպարաններ եւ ժամանակագրաններ, հեանդանոցներ, սովի կամ համանարակի պարագային, կը հասնի թշուառներուն, զարկ կու տայ արհեստներու իրացման (Անուսի, անդ, էջ 81):

28. Գովհաստահայութեան յանդարձարէնց ուստատեցութեան ժառն այս պարբերութիւնը կարելի է հասկնալ ժխոյն էթէ ծանօթ ենք ժԹ. դարու Հայ գաղթելութեան ... շարժականայ Համահրանքին՝ առանքէն լիզուի եւ առաւ ճշակոյթի Հանգէպ.— Ճականուններու առաջում, առաջին կրթութիւն, բացարձակ ժողովրդական Հայերէն լիզուի՝ արագօրէն տարածուի էին Հայ Հարստտ գաղթելութեան ու յետադայն ազնուականութեան մէջ — Քիթիլիս, Բագու, Արժուիւր, Բոտտով, Մոսկուա, Ս. Փէթերսպուրկ: Միտի կապը Հայութեան հետ՝ կը մնայ յուսուարչական եկեղեցին: Հայերէնը (աւելի ճիշդ՝ Հայ բարբառները) կը գործածուին միայն ժողովրդական գանգուաններու, կղերին, եւ զինուարն ազգային ժողովրդականութեան — լրտաբաշ, ուսուցիչ, գրագէտ — կողմէ: այս վերջինները իրատորին կը ծաղկեն Հայութեան օտարամտութիւնը եւ առաջաւոր (ինչ որ, աւելի ուշ, պիտի կուտի զհերձակ շարք): Այս հակազդեցութիւնը ծնունդ պիտի առնէ 80ական թուականներու առաջին, թիւն պիտի մնայ նախ սովորականի Այսպիս, Կազմական Հայերէնի դասընթացք մը ստեղծած էր Ս. Փէթերսպուրկի մէջ, առաջին Հայ օւսանողութեան համար: Ան պիտի ածի՝ ցարական յետալրժական քաղաքականութեան շնորհիւ կը շարժուի: 1903ին, եկեղեցական կարուաններու գրաւումէն ետք, Հայութիւնը պիտի մղէ զիկուի պարտքը, Հայաներով առաջնայ ժականունները, օտար անունները, խառն անունութիւնները...: Հայ քաղաքականներու ղեմ այդ լրջունին բանձնաւան զննադատութիւնները յանախ առաջնայ եւ իրենց առաջադրանքն: Տե՛ս Գ. Անուսի, անդ, III, էջ 50:

29. Ընտանային բարձր լրջան, կղերացած՝ Վանայ լճին արեւմտաքր: Բնակչութիւնը, Հայ եւ զիւրոս, կէտիւնազար էր գրաւորէն: Ջէյթունի անտիկ լեռնային լրջունին հետ, Սասունը կը կազմէր մէկը բացարձակ այն կէտերէն, որ օտանականացումը չէր կըրցած զինութեան Հայութիւնը: Ան շէյթունցիները, Ն. աստանցիները գաղութեան եւ ժողովրդականութեան սոյնպիսի՝ համարաւ մը ունէին, որ հնչականները շատով ծանցան իրենց: 1880էն արդէն, անոնք Քրքահայաստանի գանգան լրջանները գորդիներ եւ կազմակերպիչներ կը ղրկեն: 1890էն 1893 Միւրան Տաճարանը կը գործէ Սասունի մէջ, որ ժողովրդականութեան կրթութեան կարգը, զինք կը փոխարինէ ուրիշ հնչական մը, համարուող Մուսապը (հնապաշին Համարումս Պայտանան. շէյթունի Արաւստայիին հետ): Հնապաշին քաղաքի պարագայ՝ ան կ'անցնի նախ Քիթիլիս, որիցէ Գաշակցութեան օգնութեամբ է, որ կը ծանէ Սասուն: Կը կազմակերպէ Սասուն Հայ զիւրոս ինքնապաշտպանութիւնը՝ զիւրոսներուն ղեմ. այդ զիւրոսը հաւաքան ջանի մը ասանակ երիտասարդներու զինուարական ասարական կրթութիւն մը կու տայ (աւելի՛ ջան նախատեսքը... ընկերվարութեան): Նախնական զախմախը՝ հրաջաններու փոքր թիւով, խճապեանական անբաւարար կողմով (որուն մէջ սակայն կը նկատուին արդէն անոնք, որոնք հետագայի անհնամարտար Քիտայիները պիտի ըլլան — Աղբարիկ, Գէորգ Չուտաշ, Գոսիւր-Համար, եւայլն), աստանցիները կը յանդիման զիմարին զիւրոսներուն եւ նոյնիսկ պարտութեան ժամանկ զանոնք: Ապա, պաշտպանութեան կանոնաւոր բանակէն, իրենց կարգին կը պարտուին. 1894ի Օդոսաուին՝ շարքէ է արդէն: Վեցէն եօթը հարիւր աստանցիներու ընաթիւումը կու տայ նշանը, Արեւմտեան Հայաստանի ասարածքին, ընդհանուր շարքներու (1895-96), որոնք յուրը 300.000 զոս պիտի խնին: Օդոսական կը շնչուի, կ'արժագանկէ: Մ'ը կուտազարութիւնները, Մ'ը ընկերվարականները (ժողով) կը միջաման: Մին պետութիւններու ճնշումով Ապախիւ Համարաւ կը ստիպուի բարենորոգումներ զիտասանալ (Մայիս, 1896): Տես Վանուսի. Ս. Գ. Հնչական կուտակցութեան, էջ 125-153:

30. Գաղմակերպական հարցերը հիմնական վիճարկումի ենթարկուի են Ա. (1892) եւ Բ. (1898) ընդ. ժողովներու ընթացքին: Ը. Գ. Գաշակցութիւնը տեսականորէն հիմնական էր սոյնական կառայներու միայն: Հիմնադիրներէն՝ Չուտարեանի պաշտօնիմաս համարումները թիւնա բաւէին՝ բացարձակ այս պետութիւնը: Բայց այս կառայքը աւելի բնած է Հայ հաւաքականութեան տարազիւտ վիճակին պատշաճ կուտակչական կառայքի մը փնտրումէն: Նաեւ Հնչական կուտակչութեան կեդրոնական կառայքի վերագրումս՝ այս վերջինին նախադրութիւններէն է, որ կ'օգտուէր Գաշակցութիւնը: Հարկ է ճշդել, որ Ը. Գ. Գաշակցութեանը 1892ին կեդրոնական կուտակչութիւն էր, եւ վիճարկում-զննարկումները յանդիման պարզ իրաւաստութեան մը.— անոնցի կը կըրորը զեկազար մարմին մը Արեւելեան Բիւրոսի կողմէն — Արեւմտեան Բիւրոս: Մինչեւ 1898ի Բ. ընդ. ժողովը (որ վերջնականապէս պիտի պար ճշդուի կուտակչութեան կառայքները՝ ելուն փոքր

Աեր սահղեկու՝ ուրիշ Բիւրոներ (Միացեալ Նահանգներու մէջ) :

Արեւմտեան Բիւրոն հաստատուած էր Փրնսն, եւ իր անդամական կողմը կը նշեալար Վիրջինիայի խորագրութեան հետ : Անոր կը յանձնուէին մասնաւոր դործեր :— քարոզչութեան կազմակերպում, նոր կոմիտէներու ստեղծումը Արեւմտացի մէջ, եւրոպացիներու եւ, մասնաւոր՝ եւրոպացի ընկերակազմակերպութեան հետ կապերու սերտացում, եւ այլն :

Սերաքանչիւր Բիւրո ստանձնած էր այնպէս անհամարան ընդարձակ շրջանի մը զեկազարութիւնը : Թիֆլիսի Արեւելեան Բիւրոն կը ստանձնէ Քրտահայաստանը՝ Կիւրասոն-Խորհրդը-Տիւրքիայի զինքն արեւելք, Թուրքաստանը եւ Պարսկաստանը : Արեւմտեան Բիւրոն՝ վերջինչեալ Կիւն արեւմուտք ինչպէս փոքր-ատիական շրջանները, Եղիպտոսը, Պայքանները, Եւրոպան, Ամերիկան եւ Սփիւռքի մնացեալ շրջանները : Ատով հանդերձ, անպակաս կոմիտէութիւնները (կամ կեդր. կոմիտէութիւնները) միշտ ալ որոշ ինքնավարութիւն մը պիտի պահէին, ըստ տեղին ու պարագաներուն՝ աւելի կոմ նուազ լայն : (Յ՛մ Մ. Վարանդեան, Է՛. Յ. Պ. Պատմութիւն, I, էջ 110) : Գեղարքութեան այս երկուսութիւնը պիտի տեսէ միեւնոյն Հայաստանի Հանրապետութեան ստեղծումը : 1919ին, երկու Բիւրոները պիտի միաձուլուէին :

Յ1. Բուն անունով՝ Յովհ. Հուսեան : Մահացած՝ Լոզան, 1921ին : Տ՛մ Գ. Մանուկ :

Յ2. Խաչատուր Մալումեան (1865-1915) : Ժակջուան՝ Ալեւոնի անունով : Կովկասցի, զուտ կ'արեւելիկ ընտանիքի : Երկրորդական ուսում՝ Թիֆլիս, Եւրոպեան վարժարան : Յարաբերութեան մէջ՝ Հ. Յ. Դանիակցութեան հիմնադիր խմբակին հետ : Կուսակցական՝ 1898ին ետք, իսկ մինչ այդ կը հանդես բեր լրագրող-հրատարակչութիւն՝ «Մշակ» մէջ (տ՛մ նախ 38, վարդ) : 1898ին կը հեռանայ Թիֆլիսէն, կ'երթայ Փրնսն, ուր մաս կը կարգէ Վիրջինիայի խորագրութեան : Կը սկսի յոգնածուալը մը, որուն զգալական սեւ շատ կը զեւհասուէ հասարակութեան կողմէ : «Կովկասեան վերքեր» խորագրուած այս շարքը լոյս տեսնէ անեւ տասնմին հասարակ, նոյն խորագրին տակ, Թարգմանուած Փրանկլինի (1906) : 1902ին կը հիմնէ Եւրոպայի Հայ Ուսանողական Միութիւնը, շանիպակաւ ուղեգրով, որ պիտի հրատարակէ լուրջ հանգիստ մը՝ «Ուսանող», քովանդակոյ որակաւոր յոգնածներ, զազափարսանական ընտրի : Կը վարէ շինմանը՝ Փարիզի Երիտթուրքերուն հետ (Սապահեան, Աճա՛տ Իրզա — «Միջրեւելք» հրատարակիչ) : Իր հիզարուն արդիւնքը պիտի ըլլայ օսման հայտարարութեան ընդդիմադիրներու համարումը, Փարիզի մէջ (Նայեմեար-Դիկոսիեր, 1907) :

Երիտթուրքական յեղափոխութենէն ետք, կը գրկուի, քարոզչական պաշտօնով, Կ. Պոլիս, Ղզմը, Եղիպտոս, Միացեալ Նահանգներ : Առաջին Աշխարհամարտին, աւելի ճիշդ 1915 Ապրիլին՝ Կ. Պոլսոյ դէմէ բոլոր հայ մասուորակներուն հետ, կը Աերակալուի՝ իր Երիտթուրք քարակամներու հրամանին վրայ, կ'աքորուի եւ կը պահանդի :

Յ3. «Մշակ» լոյս տեսած է Թիֆլիսի մէջ, 1872ին 1821 : Մինչեւ 1870, շարաթաթերք է, 1870էն 1878՝ հոտիայ, իսկ 1878էն 1884՝ որսթերք : Կը խափանուի 1884էն 1890, կը վերհրատարակուի 1890էն 1892՝ Երկրորդական մեւում : 1892ին՝ կրկին որսթերք, եւ այսպէս շարունակաբար, չհալուած՝ գրաքննութեան պարտադրան այլեւայլ խափանումները : Կովկասահայութեան ամենանոսթ (եթէ ոչ ամենէն աւելի կարգացուած) թերթն է : Բացառիկ տեղ պիտի գրասէ անոր քաղաքական-մշակութային կենսական մէջ, անհնալով ազդեցութիւն մը, որ կը զանցէ Կովկասի սահմանները :

«Մշակ» ստեղծուած է Գրիգոր Արծրունիի կողմէ, որ մինչեւ իր մահը (1892) կը մնայ անոր անօրէն-խմբագրապետը : Առաջին այս քառամեակը ամենափայլուն շրջանն է թերթի կենսական մէջ, որ կ'երկի իրը հայ յառաջիմպաններու եւ ապստաններու խառնակը : Հետագային, մնայով անդերս ապստանական, «Մշակ» պիտի դառնայ աւելի ու աւելի շափաւորական : 1906ի յեղափոխութենէն ետք, հայ Քառուկներու կիսապաշտօն օրդանն է, 1910-1921ին ըլլալէ առաջ օրդանը հայ ժողովրդական կուսակցութեան (Նախկին Քա-Յ) :

«Մշակ» ազդեցութիւնը չի չափուիր իր ազդեցականով (որ շահեցիր 1200-1600 օրինակով) ժ.Ք. դարուն, եւ 3-4000 օրինակով՝ 1900էն ետք, եւ աւելի՛ հանդուակ անոր, որ Կովկասի ամենէն աւելի տարածուած գրած թերթերէն մէկն է հոյսն : Հիմնական գրատը ախ է, որ հայ կենսի մէջ աւելի կամ նուազ զեր կատարած բոլոր դէմքերը — գրող, հրատարակչի, պատմաբան, մանկավարժ, պետական պաշտօնայ, ամէն պատկանիութեան յեղափոխականներ, եւ այլն, բոլորն այ գրած են «Մշակ»ի մէջ : Կարողացած են «Մշակ»ը : Նոյնիսկ հայ ըլլալիկները (Շահումեան, Գառնիկ, Մարտունի, եւ այլն) շին արեւմուտքէն «Մշակ»ի, օրինական այդ լրագրին ընձեռած առաւելութիւնները, ուրածելու համար իրենց զազափարները : Սկիզբը խտորէն դատուած՝ խորհրդայիններու կողմէ, «Մշակ» չեւտազային աստիճանաբար վերաբեւարուած է, 1938ին ետք (տես Ծ. Պետրոսեան, «Մշակ» լրագրի երկրամսական աւիտիւն, Վաստան-քաղաքական կոմիտէ, I (59), 1972) : «Մշակ»-ականք օրակուցը կը նշէ կամ «Մշակ»ի այնպիսիք մը, կամ «Մշակ»ի կողմէ պաշտ-

պահուած դադարներու կուսակից ժը: Երկրորդ, զգրուարն այս իմաստը գործածուել է առաջին քանակակիցի մանուսկր, երբ հայ թաղքեկներէն ինչեք կ'աճի եւ կը կազմակերպուի: Կը հասնակի՝ թաղաքաւորութեալ եւ հայրենասէր հայ ժը, Վերսեմանս սնքի, գրաստարարական գորգարուծին, ճարտարարուեստականացման, դիւսթեան լոյսի տարածման կողմնակից ապաստական ժը, սնկատի ու կնոլ ապաստարման կամակիր ժը:

34. Մօաջը շէջ հանուար Յեղափոխականները Աստղիայեան ժառն է, հիմնուած Քիֆլիսի՝ 1892ին: Հայ բանուար գտակարը յառաջացած էր Անգրիզիկատի ժէլ՝ երկրադարձական-անասնարուճական տեսեսութեան մնացած հայկական ընտշարհէն հետու: Քառ դարչան մեծ կեդրաններու ժէլ է՝ Պաթուս, Քիֆլիս, Բաբու, այս ճարտարարուեստականացող լըլաններու ժէլ, հան՝ ուր կը կայմուէին գրամատեր-թաղքեկի խուկըը հայութեան — ուր պիտի պրոչեսարանար զաղթական հայ զիւղացի՛ն նսեւ:

1892-93ին, Քիֆլիսի ժէլ կը հիմնուէր ճարտարագիտական խումր ժը՝ Վեհամէլ աստիջ (Քրդս՝ Երրորդ խումր), որու շարքայինները պիտի կուլուէին Սաալին, Ժորդանի, Երեթիկի, Զիւնիէլ, Միտարանէ, եւայլն, բայց ուր կային նաեւ թակի ժը հայր եւ աւուկր: Երբ թուականին, Բաբուի ժէլ կան թակի ժը ճարտարագիտականներ, միտարող հայ, զրացի, աւու եւ թուրք շարքայիններ: շէջ հանուար Յեղափոխականները Աստղիայեանս առաջին հայ բանուարական կազմակերպութիւնն է: Բանուարներու կազմին հան կը գտնուէր թակի ժը ուսուցիչներ եւ աւանդներ: Բնին զաղանի սպարան ժը, որմէ լոյս տեսած են երկու թերթեր: — Ազատ Հայաստան (1893-94) եւ Վեպու (1895-96): Այս թերթերը, շատ փոքր պարտականով, կը բացատրեն իրենց ընթերցողներուն՝ ընկերգրութիւնը, Մարտի, Պիեթանովի տեսութիւնները, Մայիս 1ի իմաստը, եւայլն (սովս Գ. Պարսեման, տեղ, III, էջ 348...):

35. 1890ին սկսեալ է, որ, Պաթուսի, Քիֆլիսի եւ Բաբուի ժէլ, երկուս պիտի գային առաջին հնչական ըլիլները: Մանուանք Բաբու, ուր հայ բանուարութիւնը քարկուզի պրոչեսարանով 20-25%ը կը կայմէր, հնչականները պիտի փորձէին զարգացնել զասակարգային պայթարը, առակց Հրոմարիւտ ազգային իրենց ծրարքին: Պայտանի ժէլ — որ Բաբուի շուկա տրուարման էր — սնեւք կ'արմատաւային 1891ին սկսեալ (առանրհիկական տեղած հայուսղ Ե խումր): Հասնարար 1893ին, Պայտանի հնչականները կազմակերպական հեղ ժը պիտի հիմնէին Աստղիայեանի ժէլ (սովս Վեպուս. Մ. Գ...>, Անդ, էջ 214): Հասնական է, որ հնչականներու կողմէ նախապատրաստուած դեմոնիէն արուած ըլլան Վեպուի թարգմանները՝ սուսերու հետ հասարակաց գտակարչային գործունէութեան ժը կազմութիւնն ժարմին տարու կամար:

36. 1893ին, շէջ հանուար Յեղափոխականները Աստղիայեան կը հաստատակէր Վեպուսի մար. ասր իմարտողներին՝ Արտ խումարեան (սովս զրըը, տեղեկադրի հոթ 46) պիտի ընդունէր, ուեկն ուէ, որ ճարտարագիտային թարգան ընկերգրութիւնը հետու է եղած Մարքսի գիտական ընկերգրութիւնէն (ժէլիներուս)՝ Գ. Պարսեմանի կողմէ, տեղ, III, էջ 349): Լանթրէն օգտադրմանով վարտահայ Վոլիայի բանուարական լըլանայիններու ծրարքը, այս մանիֆեստը կը մկուէր, պիտի ընդգծէ Պարսեման, սոցիալ-յեղափոխական զաղափարներու՝ ժողովուրդին մէլ տարածման: Կը պահանջէր գործատուներու սնիրիւտը յանձնել բանուարներուն, ազգայնացնել հողը, ազգամիջեան տեսեսարութիւններուն վերլ դնել, ինչմասնէր եւ տրուայտութեան արտուսթիւն հաստատել, Ընել զիւտարական ծառայութիւնը եւ պարտադիր դարմանել նախակրթութիւնը, բայց Վաստղիայեան մանուար սուղարութեան աստիւայ կը գարմնէ թուրքիոյ հայութեան վիճակը, կ'արտայայտէ փոփոխը՝ ապաստարիւտ հայ ժողովուրդը, ազատութեան ճարմով, ճարմութեան բնական լիւցը, գործիւնան դարմանել գայն, հիմնել ազատ Հայաստան ժը (եր թերթին սկզբական տեսուր՝ Վեպուս Հայաստան): Զգայուն է Սանայ ապաստարութիւնէն եկող տեղեկութիւններուն հանդէպ, եւ կայ կ'ուղչէ հայ բանուարութեան՝ պայթարը կեդրանացնելու սուլթանին դէմ: Հնչական ազգայնութիւնը բացարդ է: Վաստղիայեան պիտի ծաւալէ իր գործունէութիւնը նաեւ Քիֆլիսէն գուրա եւ ստեղծէ իմարտիներ՝ Ալեքանդրապոլի, Կարսի, Պանդակի, Բաբուի ժէլ (1894-95): Պիտի մարտիկ թրջահայաստանի ժէլ, ուր իր կազմակերպիչները պիտի թախին բանուար գտակարչե... բացակայութեան:

Կազմակերպութիւնը պիտի ճարտարգործուի 1896ին, առա ստիկանութեան կողմէ: Իր տնչամենքին սմանք պիտի մերթապարիւն, ուրիշներ՝ փոխիւն: Մեծամանութիւնը պիտի յարի Հնչական կուսակցութեան, իսկ փոքր մաս ժը՝ աւելի ուէ՝ ԲՍԻԲԻԻն:

37. Այս ցանկը, կազմուած՝ 1896ին, ինկը է գաղնկացականներու մտքը, որոնք սկսեալ, նուազագոյն կտակուր, նուազագոյն ընդգրկութիւնը՝ աւու իմաստութիւններու կողմէ կը մեկնարանուին իր հայկական շարման մանուկցութիւն: Թէեւ տանթ տեսններ ալ կան հան: — Սիման Զաւարեան, Նիկոլոս Մասինեան, Կ. Մայրսեման — Ալեքանի —

Ազատ կուսակցության անդամ ընկերային կազմակերպչական աշխատանք է... սեպտեմբեր 1891, հաշվապահ 1892, պաշտոնատեղի 1892, հրատարակչություններ, Գործարարականներ, Կուսակցություններ, գիտական

35. Անտոնյան, գիտական շրջանի թիֆլիսյան կուսակցական հարցերի մասին, որ հարցերի կողմից մասնակցական հարցերը համարվում էր:

36. Անտոնյանի շուրջ շատ սահմանափակ ազդեցությունները մեծ մասին ունեցան: Իր գործունեությունը հաս նոյնպես է հնչակեաներու գործունեության հետ:

40. Անվանյան թերթը՝ պաշտոնաթերթ Ս. Գ. Հնչակեան կուսակցությանն: Անունը (Վ. Թերթին, Վ. կուսակցությանն) փոխառություն է Հերզելի «Վոլկոն» (զանգակ) թերթին: Անվանյան, ամսագրեր, 1887-ին 1891 թվականը և անհեղինակ Մանգլիսի էլ էլ, 1891-ին 1892՝ Փարիզի էլ էլ, 1892-ին 1894՝ Աթենքի էլ էլ, 1894-ին՝ Լոնդոն, ապա կրկին Փարիզ՝ 1894-ին 1914: Իրականություն էլ էլ, սուսին թերթ Փոստի էլ էլ է հրատարակված, Նոյեմբեր 1887-ին, կուսակցության հիմնադիրներուն իսկ կողմէ: Անվանյան խմբագրության, արտերի՝ Նախարարական ուսուցիչ շրջան է, որ կը կազմուի կուսակցության ղեկավարությունը, Հնչակեան կղզեկներ:

Անվանյան զարգանք (ու Բրի) արտաբերում ունեցած է Փարիզի և Ռուսաստանի էլ էլ: Անունը 3-4 ամբողջ, թերթին 18 էլ էրուն մեծ մասը կը գրանեն անարտաբերական լուսանկարները: Հարցերուն զարգացման կետերին էլ էլ սուսինը լրացում է, Անվանյան հետևողականորեն կը բացատրի, կը լուսարարի ղեկավարությունները և ղեկավարությունները հասկացությունները: 1890-ի կրկինգիտված կուսակցությանն Ծոցին (սիս մարտ, սեպտեմբեր 1890)՝ ըստ զարգացող կը ստեղծի թերթին շրջան: Հակա-նախարարականները, Լոնդոնի էլ էլ, կը ստեղծեն Արարչական շրջանը (1897-1901), որ անկանոն հրատարակությունները մեծ պետի սանձայ, և Անվանյան կամեմբ, որուն հրատարակությունը, նախկին Լոնդոն՝ 1898-ին 1902, սակայն կանոնադր պետի ըլլայ:

41. Հ. Գ. Գալանյանի կուսակցության Գալանյանի ժողովն է, 1896-ի սեպտեմբեր, թիֆլիսյան Այս ժողովին արտաբերող պահանջն են (սիս ղեկավար Հ. Գ. Գ., սեպ, էլ 181-186): Կուսակցությունները շահագրգռող հարցերն են, այդ պահանջ, կազմակերպություններ, քարոզչություններ, գրասենյակներ և ցեղաներ:

